



ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄՐԳՈՂՈՍ

891.99
Մ-19







NOV 1944




Համբարձում
1932 թ. 24. Ե

Գ. 25 ապրիլ 1944

891.99
U-19

ԳՈՐԳԵԳ ՏԵԽՆԵՐԻ



Ր Գ Ա Յ Ա Ս

ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՏՈՐԿՎՈՐՄԵՆ
ԵՐԿԱՆ ՄՍՄXXXIII



1 JUN 2013

91620

Գրքի շապիկը, սուպեր-շապիկը, ֆորճացը
յեղ հեղինակի նկարը ժողովրդական
նկարիչ Մ ա ր տ ի ր ո ս Ս ա բ յ ա ն ի :

Յ Ե Ր Կ ՈՒ Ի Խ Ո Ս Ք

Այս ժողովածուն կազմելիս, յես վորոշ նկատառումներով դուրս
քողի ինչպես անտիպ, այնպես էլ տպված բազմաթիվ բանաստեղծու-
թյուններ յեղ պոեմներ, վորոնք լույս են տեսնելու առանձին գրքով:

Ինչ խոսք, վոր այս գրքի մասնավորաբար բանաստեղծություն-
ների բաժնում, կան բազմաթիվ գրվածքներ, վորոնք վոչ մի կապ չունեն
իմ այսօրվա գրական վորսնումների հետ:

Այնուամենայնիվ ավելորդ չհամարեցի հիշյալ բանաստեղծու-
թյունները զետեղել ժողովածուի մեջ՝ մատավոր կերպով ընդգրկած լի-
նելու համար իմ անցյալ գրական հանուպարիը:

Գ. Մ Ա Ն Ա Ր Ի

1932. Մ. 28

Ներկված



(24969-61)
30304-61

Handwritten notes in Armenian script.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իմ յերկրի մի նամբի վրա
Բարձրացավ յերգերիս բարդին,
Նոյնբերը ջրեց նրան,
Նոյնբերը կոչեց կյանքի . .
« Բ ա ղ ի ն ե ը »

Վ Ե Ր Ձ Ի Ն Ը

Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ,
Վերջին կարոտն եմ՝ նայիբաբաղձ.
Ինձանից հետո վի՛ն կբացվի,
Սահմանագիծը կլինի պարզ:

Վերջին պոետն եմ, վոր յեկել եմ
Հողի բուրմուռնքից, հողից, հերկից.—
Այնպես հորդամն ե իմ յերկիրը,
Ու այնպես խորն ե հուռնն իմ յերգի:

Կմարի յերգերիս վերջին մարխը,
Վերջին զանգը խոււ կզբնդա,
Միայն յես կզգամ նրանց վախը,
Նրանց տազնապը լուկ յես կզգամ:

Կը քայլեմ հետո դեպի քաղաք,
Ու հին սրինգը նետելով դեն,—
Կվերցնեմ շեփոր բազմաղաղակ,
Պղնձե յերգեր հետո կերպեմ:

Իսկ ինձնից հետո վի՛ն կբացվի,
Սահմանագիծը կլինի պարզ.—
Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ,
Վերջին կարոտն եմ՝ նայիբաբաղձ...

ՅԵՐԿՈՒ ԳԱԶԵԼ—ՅԵՐԵՎԱՆԻՆ

1

Այնքան կարոտ, այնքան կրակ — պիտի թողնեմ քո
փոշոււմ.
Ու արնավառ այնքան յերակ — պիտի թողնեմ քո
փոշոււմ:

Թափառուներ հազարախոհ ու կարոտներ անորոշ,
Այնքան յերգ ու այնքան դրոշ — պիտի թողնեմ քո
փոշոււմ...

Այնքան պայծառ առավոտներ ու կեսօրներ արևոտ,
Իրիկնային այնքան կարոտ — պիտի թողնեմ քո
փոշոււմ.

Այնքան կրակ, այնքան կարոտ, այնքան բոցեր դրոշի,
Ու անունս, վորպես փոշի — պիտի թողնեմ քո
փոշոււմ...

2

Ուր վոր գնամ՝ հետս կգա — սրնգահարըդ իրիկնային,
Աբովյանի պատին կոթնած — սրնգահարըդ իրիկնային:

Բոլոր թողած կայաններում յես կլսեմ յերգն այդ
անկամ,
Վոր յերգել ե հազար անգամ — սրնգահարըդ
իրիկնային:

Կիրցնեմ հազար անուն, վորպես չեղած մի
վարդարաշ,
Բայց դիտեմ, վոր չեմ մոռանա — սրնգահարըդ
իրիկնային:—

Ո՛ր, յերկէք իմ, յերեկիդ պես դառնակակի՛ծ ու վշտալուր,
Ներկայիդ պես այսօր ու հուր — սրնգահարըդ
իրիկնային...

1924

ՀՈՎԶ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՏ

Տեսնում եմ հին գյուղերը, Լոռին,
Յերգերդ՝ փրփրաբերան Դեբեա,
Բռնեկ ենք փոշեկալած ուզին,
Գնում ենք հեռուները քեզ հետ:

Սոսում ես կախարդական ուժով,
Ակնարկում հին գյուղերի մասին,
Վերևում արևն է վառ ու շող,
Ներքևում՝ ճանապարհի փողին:

Գնում ենք ու գնում ենք քեզ հետ,
Մայլերի ճանապարհով՝ հովիտ.
Զի համում այստեղ և վոչ մի թևրթ,
Մշուշները խռովող մի միաբ:

Գնում ենք ու գնում ենք ժպտուն,
Գյուղերի գորշ շարքերի մոտով.
Դու տխուր մի հին յերգ ես յերգում,
Գնում ենք մենք լեռների գոտով:

...Մեր դիմաց ահա դաշտը անձիր,
Կայարանն ու գծերը նրա.
Ցնդում է սավերը քո լուսե
Յերկաթե այն գծերի վրա:

Ցնդում են հին գյուղերը, Լոռին,
Յերգերդ՝ փրփրաբերան Դեբեա...
...Այն յերբ եր, փոշոտ եր հին ուզին,
Լեռներով գնում եինք քեզ հետ...

ՀՈՎԶ. ՀՈՎԶԱՆՆԻՍՅԱՆԻՆ

1

Վորպես միզոտ մի հեռու՝ տեսնում եմ դարըդ վերջին,
Որերում ու յերգերում տեսնում եմ դարըդ վերջին:

Ու հիմա, յերբ փողոցում քեզ պատահում եմ հանկարծ,
Թվում ես մի՞ֆ ու յերագ — տեսնում եմ դարըդ վերջին:

Մենք անցնում ենք նույն մայթով ոտարների պես
յերկու,

Մենք ներում ենք մեկ մեկու, — տեսնում եմ դարըդ
վերջին:

Խարույկի պես, յերգի պես հրասիրտ ու հրադեմ,
Ահա որերը լիմ դեմ, ահա և դարըդ վերջին...

2

Դու անցյալիդ կնայես ու կժպտաս դու,
Կնայես և ներկայիդ — ու կժպտաս դու:

Այնքան հեռու յեն նրանք ու այնքան ծանոթ,
Վորպես յերգ ու առավոտ — ու կժպտաս դու:

Դու մի մթին իրիկուն փողոց դուրս կգաս,
Կխորհես, վոր դու չկաս — ու կժպտաս դու:

Բայց մի հեռին փողոցում, մի պատուհանից
Կլան յերգերըդ հին — ու կփպտաս դու:

Տուն կը դառնաս ու վաղուց յերգերըդ յերգած
Մի անգամ ել կկարդաս — ու կփպտաս դու:

1924

Կ
1924
2-0822
(24969-6)
30304-6

Զ Ն Գ Ա Ա Ր Ե Վ Ը Թ Ո Ղ...

Զնգա արևը թող
Իմ յերգերի վրա
Ու իմ յերկրի անդող
Յերեկներին շոայլ,
Զնգա արևը թող
Խնդությամբ մի անտակ,
Իմ յերգերի հորդուն
Յերանդներին տարտած:

Կինի մայիս փարթամ,
Շոայլ, անմի, հորդոց,
Հասկի վրա արդար
Զնգա արևը թող...

1926



ՅԵՐԿՐԻՍ ՆՄԱՆ ԹԱՐՄ ԵՍ...

Յերկրիս նման թարմ ես,
 Յերգի նման դու,
 Հմայում ես մրգի պես,
 Գրքի նման մութ:

Յերգեր, յերգեր աչքերիդ
 Կիսակապույտում,
 Յերկրիս դաշտերը բերրի,
 Մեր գյուղը տրտում.—

Հին սեմին մեր խրճիթի
 Մի գառ են մորթում.
 Արյան մի շիթ շուրթիդ
 Ժպտացիր դու:

1925

ԳՈՒ ԼԻՍԱ ԼԵՌՈՒ ՅԵՍ...

Դու հիմա հեռու յես,
 Հեռու յե քո արծաթ ձայնը,
 Նա նորից կարկաչում է,
 Բայց արդեն վնչ ինձ համար.
 Ինձ մնաց հուր ու հրկեզ
 Այս խայթը մահամնա,
 Յեվ արծաթ քո ձայնի արձագանքը...

Յեվ այդ է իմ յերգը հիմա...

1925

ՅԵՍ ԻՆՉՈՎ ՔԵՋ ՀՄԱՅԵՄ...

Յես ինչձիլ քեզ հմայեմ.
Վոչ գանձեր ունեմ, վոչ փայլ,
Յես վոչինչ չեմ խնայել
Բո սիրո, փառքի համար:

Բո սիրուն, փառքին վայել
Չեմ դտել դեռ վոչ մի բառ.
Յես ինչձիլ քեզ հմայեմ, —
Վարդավան, դու վանդ, դու վան...

1925

ԿԱՆԱՋ ԱՐՏԵՐ ԵՅԻՆ...

Կանաչ արտեր եյին,
Արահետներ փողոտ,
Մեկտեղ գնում եյինք,
Արև եր վառ ու շոգ:

Շուրջը մարգեր, հող, թուփ,
Խնդություն եր կյանքը, —
Ու մեռնում եր հովտում
Կիսավերակ վանքը...

1925

ՀԱՐԱՋԱՏ, ԻՄ ԱՆԳԻՆ

Հարազատ, իմ անգին,
 Յեկար ու գնացիր,
 Թողիր խոհեր անծիր,
 Անլուսին մի այգի
 Ու անծաղիկ մի թուփ...

Գգվանքների մոխիր
 Ու շուկներ թողիր,
 Հուշեր, շուքեր թողիր,
 Ու թնայն...

1925

ՅԵԿ, ԱՆԳԻՆ, ՅԵՐԳԻՍ ԱՅԳԻՆ...

Յեկ, անգին, յերգիս այգին,
 Յեկ, այնպես զով ե այնտեղ,
 Յեկ, զգա շունչը կյանքի,
 Յեկ, քաղիր շաղուն վարդեր:

Յեկ, անգին, յես քեզ համար
 Պահել եմ վերջին նուռը, —
 Գիշեր ե լույս ու վարար
 Ու բաց ե այգու դուռը...

1925

ԱՇՈՒՆՔՎԱ ԱՅԳՈՒ ՆՄԱՆ...

Աշունքվա այգու նման
Դեղնել են տերևներն իմ.
Վողջ կյանքից ինձ յերգ մնաց,
Իմ յերգը թող չմեռնի:

Հասել են բերքերն իմ վառ,
Ճեղքվել է ահա նոթն, --
Թեև ուշ աշնան նման
Դեղնել են տերևներն իմ...

1925

Հ Ո Վ Ե Ր Գ

Յերբ անձրևը դադար տա՝
Կլինեմ քո հովտում, —
Այնտեղ ամեն թփի տակ
Կա մի աղջիկ տրտում:

Կհավաքեմ յես նրանց,
Կնստենք թմբին,
Կգրուցենք մենք ուրախ,
Մինչև որը մթնի:

Մենք կխոսենք քո մասին,
Իսկ հետո վերից
«Հերիք» — կասի աքասին,
Բնել տվեք ինձ:

Նրանք մշուշ կդառնան,
Անհուշ ու տարտամ,
Իսկ յես մենակ կմնամ
Այն աքասու տակ:

Իսկ լուսինը խանդոտ
Դեղին փուփ կթափի
Արտաներին անդորր,
Արտերին, արտերին:

1925

Կ Ա Ր Ո Տ

Միրած, վոսկե աղջիկ, դեղին, հասկե աղջիկ,
 Աղջիկ իմ ջինջ աչքով,
 Իզուր տարվեցիր դու անձրևներին կանչից,
 Իզուր հեռացար դու...
 Ապրում եյիր պայծառ դաշտերում իմ հոգու,
 Ծաղիկ եյիր բացված,
 Բարդու մի ծառ եյիր, իմ բարդենին, իմ քույր,
 Իմ ծաղկավոր անցյալ...
 Ախ, անձրևից հետո դու ծիածան դարձար,
 Շքեղ, հուր ու յերահ,
 Բլուրներին ընկար, արոտներին արձակ,
 Ու մարգերի վրա...
 Հետո ցնդեց այն ել. ուր ես, սեր իմ սիրած,
 Վոսկեթև իմ թիթեռ,
 Աղջիկ եյիր, թե վիթ, ցնորք, մուխ ու միրած,
 Աղջիկ եյիր միթե...
 Ահա որը բացվեց լիմոնի պես լուսե
 Ու նրա պես անուշ.
 Ախ, ել վոչինչ, վոչինչ իմ սիրտը չի հուզի,
 Ախ, ել վոչ մի անուն:
 Միրած, վոսկե աղջիկ, սիրո լուսե որբան,
 Միթե ել չե՞ս դառնա. —
 Յեկ, խառնվիր յերգիս, այս արևոտ որվան,
 Այս ջրին ու գարնան...

1925

Մ Ա Ս Ր Ե Ն Ի

Իմ պայծառ ընկեր,
 Իմ սեր մասրենի,
 Խնչու յես ընկել,
 Տխրել ես ելի:
 Յերգդ զվարթ եր,
 Սվավում եյիր,
 Լսում եք վարդը
 Յերգերը քո հին:
 Կեղներ արևը
 Լեռան մի ուսից,
 Նրա բարևը
 Կայրեր թուփ ու սիրտ:
 Բարդին կնազեր
 Նման հարսերի, —
 Արդյոք յերանգ եր,
 Միրուն մասրենի...

1925

* * *

Գառների պես սպիտակ
Քո դեմ իմ հույզերը.
Սպիտակ են, սպիտակ
Յեվ քո նուրբ ուսերը:

Դու շուրջըս հյուսել ես
Լուսեղեն մի ցանց,—
Անհնայս են հույսերըս,
Անուշ իմ ցավ:

Գիտեմ՝ կորուստ ե, անցած
Անհնար այս սերը.
Սիրում եմ քեզ, իմ հանցանք,
Յեվ իմ սերը սե ե...

1925

* * *

Ձգիտեմ՝ քեզ եմ սիրում,
Թե իմ սերը,—
Այս սերը խոր ու խորունկ
Ինձ հուզել ե:

Ո՞վ ես, ի՞նչ ես, չգիտեմ,—
Մթին հանելուկ,
Գիտե՞ս սիրել դու միթե,
Ու սիրել հիմ:

Յեվ ինչո՞վ ես այդքան դու
Սառն ու հանդարտ,
Անձրևների տակ ժպտուն
Վարդի պես վարդ:

1925

* *

Յես գիտեմ հիմա, գիտեմ հիմա՝
 Զղջումի համար արդեն ուշ է,
 Տես, տխրութիւնն է, ու մնո, ու մնի,—
 Հիմար, իմ հիմարս
 Հիմար, իմ հիմար,
 Նորից յեղնում ե հին մշուշը...

1925

* *

Կծերանամ մի որ յես, կծերանաս դու,
 Ամեն մեկըս մեր բախտի, մեր ցավի հետ,
 Կդառնա վողջը հանդարտ և իմաստուն,
 Յեզ գուցե այն ժամանակ հանդիպենք մենք:

Յեզ գուցե մենք հանդիպենք վորպես ոտար,
 Դու կորացած ուսերըդ դարձնես յես,
 Իւ մըմնջաս ինքըդ քեզ ու քեզ համար.
 —Ինչքան տանջել եմ յես քեզ, ծերուկ պոետ...

Գուցե մեռած լինեմ յես, յերբ դու դեռ նոր
 Կողջունես վառ որերը վարար կյանքի,
 Շիրմիս վրա կորորվեն վարդեր մեռնող,
 Կշշնջան անունըդ վառ ու անդին...

1925

Ա Յ Ս Ո Ր

Այսօր կարծես դու ավելի հանդարտ ես,
 Սիրտ անուրախ, գանգրահեր իմ մանկիկ,
 Քեզ ժպտում ե անդորրուժյան արտը
 Ու հմայքը բազմախորհուրդ կյանքի:

Այո՛, մանկիկ, խելոք պիտի մնաս,
 Դու ուզում ես արևի շեկ գունդը,
 Դու ուզում ես աստղերով լի մի թաս
 Ու կապույտում ցանված լուսնահունար...

Խելոք, մանկիկ, խելոք, խելոք մնա,
 Տես, քո յերկրում նոր հունտեր են ցանվում,
 Հիմա պետք է վոչ սեր, վոչ ել քնար,
 Վոչ ել քնքշանք՝ շաղախված հին ցավով:

Թող քեզ թովի նոր ուրերի վարդը,
 Թող արևը, թող ցնորքը, անգին,—
 Այսօր, այսօր դու ավելի հանդարտ ես,
 Սիրտ անուրախ, իմ գանգրահեր մանկիկ...

1925

* * *

Այսպես անցնում են որերը, ուրերը,
 Գալիս հասնում են նորերը, նորերը,
 Յես ել կանցնեմ, այ իմ անուշ, իմ զուլան,—
 Սարից իջնում եմ ձորերը, ձորերը:

Վտուրս արնել են քարերը, քարերը,
 Հալածում են ինձ դարերը, դարերը,
 Յերգով յեկա, վերքով կերթամ, իմ զուլան,
 Յերգըս տարել են չարերը, չարերը...

Քամին սղիկեց իմ ծառերը, ծառերը,
 Չեն զընգում ել բառերը, բառերը,
 Վերջին յերգի՛չ, անուներդ վեհ ու զուլալ,
 Ինչ շուտ մարան քո վառերը, վառերը...

1925



ԿԱԾԱՆ ՄԵՆԱՎՈՐ...

(Վահան Տերյանի հիշատակին)

Կածան մենավոր,
 Համբ հոգին իր տար
 Մինչև գիրկդ անդորր
 Ու մինչև անտառ:
 ... Հեռացավ մի որ
 Այնպես անհաղորդ,
 Անեղբ ու դանդաղ
 Մշուշի նավով,—
 Ցավով հեռացավ,
 Կածան մենավոր...

1926

ԴՐՍՈՒՄ ԱՆՁՐԵՎ Ե...

Դրսում անձրև է և իմ սրտում
 Յերգվում է մի յերգ նրա պես թեն.
 Իսկ նա յերգում է այնքան տրտում...
 Յես լսիլ եմ ուզում, թե արդեն, արդեն

Արցունքի շիթեր ընկան ձեռքիս:—
 Բայց յես ժպտում եմ, ո՛ր գիտեմ յես՝
 Կփոխվեն նրանք հետո յերգի,
 Ծաղիկներին պես, վարդերին պես:

Ծաղիկներին պես ու վարդերին՝
 Անձրևից հետո այնքան պայծառ...—
 Յերգիր, անձրև՝ իմ, իմ մտերիմ,
 Բերրի՛ արցունքներ, թափվե՛ք անձայն...

1926

Հ Ո Վ Ե Ր Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Փշատենին շնչում ե.—«Անցավ...»
Թրթուրը որորվում ե.—«Ինչպես...» —
—Անցավ նա, անցավ սերդ անդարձ,
Մենակ թողեց, մենակ թողեց նա քեզ:

Հովը մտավ թավուտները.—«Գտիր...»
Մարգագեհանից ձին վրնջաց,—«Ո՞ւր ե...»

—Գնաց նա, կանչում ե սյլ ավից,
Ձեռ գտնի: Մի վորոնի: Ձեռ ե:

Արագիլներ, կաշաղակներ, գժեր,
Քեֆ արեք, քանի լուսին դեռ կա.
Բամիներ, ծղրիզներին քշեք...—

Ծառերը պար են բռնել յերկար:

Ծառերը պար են բռնել յերկար,
Դրմիաց թունդ նաղարան վերից,
Ամպերը վրա-վրա յեկան,
Անձրեք ծաին բռնեց դերի...

Անձրեք խշխշում ե.—«Բերի...»:

.

Բարդենին ուրախ ձայնեց.
—Յեկավ, յեկավ...

Այդ ուր ես, ուր ես թառել,
Անուշ բարեկամ:

Ձգել ես քո հասակը,
Գուցներըդ ծածան,
Դու անուշ, հարազատ իմ,
Իմ սեր-ծխածան:

Այդ յես եմ այդպես քշում,
Շրջում եմ լեռներ,—
Նստել եմ կարմիր նժույգ,
Գալիս եմ՝ բռնեմ...

1926

Խ Ր Տ Վ Ի Լ Ա Կ

Ծառախմբի մի գրկից
 Չոր բարդենի, վիզը ցեց.
 — Ո՞ւմ ես այդտեղ սպասում...
 — Ճերմակ, ճերմակ աքասումն...

Կմախքացած իմ բարդի,
 Չոր խրավիլակ իմ հանդի,
 Ի՞նչ աքասի, աշուն ե,
 Վոսկորներըդ խշշում են:

Այնտեղ շրշյուն ու սաղարթ,
 Կանաչ յերկինք, կապույտ արտ...
 — Հիմաբ կմախք, իմ բարդի,
 Չոր խրավիլակ իմ հանդի...

1926

—

Ո Ր Ո Ր

Քնիր, իմ հեղ,
 Որորոցում,
 Յերգեմ մոր պես
 Խաղաղություն:

Պայծառ խոսքեր
 Ասեմ յես քեզ,
 Յերգեր վոսկե
 Ասեմ մոր պես:

Կախեմ լուսինն
 Որորոցից,
 Կարեմ ուսիդ
 Ասողեր լուսե,—

Ասողեր անհուշ,
 Ասողեր անգին,
 Քնիր, անուշ,
 Յնորք-մանկիկ...

1926

—

ՀԻՆ ԱՅԳՈՒ ԴՌԱՆ...

Ախ, հին այգու դռան յես
Կնստեյի արտում,
Կիջներ գիշերն անեղր
Այգում և իմ սրտում:

Բարակ կերգեր մի ծղրիտ,
Կխշար ուռին,
Մի թուփ սիրով կտիւրեր,
Կթեքվեր առվին:

Էանցներ ջրվորը առույզ,
Ջուրը կզնգար,
Կերգեր ամեն մի առու,
Ամեն ծիլ ու քար:

Իսկ լուսինը ասես
Մաղմոս եր թերթում,
Յերը հին այգու դռան յես
Կնստեյի արտում:

1926

ՅԵԿԱՎ ԻՆՁ ԱՅՑԻ...

Յեկավ ինձ այցի
Այսոր իմ հուշը.
Տխուր եմ, ասի,—
Աշխարհը մոտ է:

— Հիմար ես, գիտ ես,—
Ասաց իմ հուշը.
— Կյանքը մոգիչ է,
Արև է, ուժ է:

Այրող այդ վերքը
Քո մեջն է մխում,
Յերգիլը քո յերդը
Մի լինի տխուր...

1926

Հ Ո Ւ Շ

Գարնան անձրևն և խշշում
 Իմ հին տան վրա,
 ծանոթ մի յերգ եմ հիշում,—
 Հիշում եմ նրան:
 Նա անձրևի պես թափվեց
 Յերգերիս այդում,
 Ու ծաղկեցին վարդեր
 Ու ծառեր ծաղկուն:
 Թաց ոշոշնեց կասկածի,
 Տուղտեր մեղմուժյան,
 Ուրախության աղացի,
 Բարդիներ փարթամ:
 Յերգերի հորդ շատրվան
 Խփեց իմ այգում,
 Յերգեց ջուրը յերգահան,
 Յերգեց անքուն:
 Հիմա այդ յերգն եմ հիշում,
 Հիշում եմ նրան,—
 Գարնան անձրևն և խշշում
 Իմ հին տան վրա...

1926

* * *

Նույն գետն և աջից,
 Գիշերը սև և.
 Զինջ, վճիտ ազջիկ,
 Մեռավ քո սերը:

Խրինջում և դռան
 Վտակեբաշ իմ ձին.
 — Չէս հասնի նրան,
 Մի նայի սանձին...

1926

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Արտերը հագել են
 Նարնջե յազմա,
 Փռել են հանդերը
 Ծաղկավոր պատմա:

Հոտերը տուն դատան
 Հանդերից ելի,
 Ու մաղվում ե շաֆրան
 Ամպերից, վերից:

Լճափում հարսնիք կա,
 Հեյ, շարժեք վտտները,
 Լուսինը թամազա,—
 Հարբել են գորտերը...

1926

ԱՆՁՐԵՎ Ե ՔՈ ԱՅԳՈՒ ՎՐԱ...

Թափվում ե անձրև մի բարակ
 Վտակելոք աշնան ծառերին,—
 Ապրում եր իմ սիրաբ աբազ,
 Ուզում եր զգալ կարելին:

Դու ազահ շնչեցիր, սիրա իմ,
 Ու վորպես աշունքվա այգի՝
 Փռեցիր սինին մրգերիդ
 Ու հավաք հարիբ դու, անգին:

Դրանից ե, վոր հիմա
 Մոռացել ես խորունկ յերգելը—
 Անձրև՝ ե քո այգու վրա,
 Ու դրսում մրսում են մրգերը...

1926

ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Թափիչ են քո շուրթերը,
 Շուրջըս շունչըդ հորդել է,
 Այնքան մեղմ շնչում են
 Թափիչե քո շուրթերը:

Իմ յերկրի մրգերի պես
 Շուրթերըդ քաղցր ու անդին,
 Ու բուրում են մաղբրըդ
 Անտառի պես անհանդիսա:

Աչքերիդ սև թերթերը
 Այրում են հրով հրկեզ,—
 Հասել են քո շուրթերը
 Իմ յերկրի մրգերի պես...

1926

ԱՆԳՈՐՐՈՒԹՅՈՒՆ

Շուրջը անտառ է, մացառ ու թուփ,
 Պուրակներ շուրջը, շրջող շողեր.
 Ո, փոփիք, լուսե խաղաղություն,
 Կանաչ իմ, մայր իմ, սեր իմ շողե:

Շուրջը խարշափ է, շուրջը շրջուն,
 Այդ ծաղիկներն են մեղմ աղոթում,
 Ու ծաղիկների քնքուշ շուշուն
 Շրջում է սրտում, հովաում, ողում:

Յես յերազել եմ այս պահը, յերբ
 Զուլում է կյանքը թափուտներին,
 Ու ծաղիկի նման մի բազմաթերթ
 Տրվում է շաղին, շողին, հովին:

Սուրն է, անհատակ այս անուրջը,
 Զուրբ մի ծանոթ յերգ է հուշում.—
 Այդ Մեծարենցն է շրջում շուրջս,
 Ու շեր է ասում հովի շուշուն...

1926

Ք Ա Ր Ե Մ Ա Ր Դ Ը

Կրօնեմ հիմա այս կածանը,
Կկտրեմ ժպտուն ուղին յերկար,
— Ընդունե՛ք այս սլաղ հուշարձանը
Յեզ այս գլուխը վշտից թեքած:

Ճերմակ լուսինն է ինձ քանդակել
Անքուն և անքուն գիշերներով,
Քանդակել է սլաղ ու անտարբեր...
— Հյուրընկալ յեղեք, յեղեք ներսդ:

Այս հուշարձանը... նա գալիս է,
Գալիս է դանդաղ, ու խեղճ, ու վեհ.
Շուրջը դարուն է ու մայիս է,
Ու նա ծեծում է դարպասը ձեր:

Յեղե՛ք հյուրընկալ, յեղե՛ք ներսդ,
Ընդունե՛ք քարե ճերմակ մարդուն,
Ծածկե՛ք գլուխն իր ծաղիկներով,
Ու թող յերգի նա յերգե՛ր արբուն:

Կգան նոր հյուրեր, նոր մայիսներ,
Դաշտերում կերգեն ուրի՛շ հովեր.—
Հյուրընկալ յեղեք, յերբ գալիս են,
Գալիս են դանդաղ, ու խեղճ, ու վեհ...

1926

Ա Ն Դ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յերեկոն իջավ. ցուրա է, քամի յե,
Անտառը լուծվեց խավարում քիչ-քիչ.
Ախ, խորախոր է անջատման վիհը,
Ձի ծածկի նրան ել վոչի՛նչ, վոչի՛նչ—

Վոչ զղջման արցունք, վոչ հերոսություն...
Այնտեղ, հին այգում, ննջում է խաղաղ
Նա, վորն ինձ ավեց մեծություն ու թույն,
Վորին հանեցի մի որ կախազան

Ինքս իմ ձեռքով... և անպատգարակ
Քաշեցի նրա մարմինը լուսե
Ու թաղեցի հին խնձորենու տակ:

Անձրեղ յերգեց թաղման սլատարագ,
Ու հողիս այնպես հեկեկալ ուղեց,
Բայց վոչ մի կաթիլ արցունք չգտավ...

1926

ԴՈՒ ՅԵՐԱԶԵԼ ԵՍ

Դու յերազել ես մի որ
Մի սեր արևազուն,
Յեվ աչիկներ տնդորր,
Ու շուրթեր հասուն:

Դու յերազել ես ու նա՝
Կյանքը շողոքորթ,
Սին ժպտացել է միայն
Ծարավի դեմ քո:

Նա կարող էր բողոքով
Ուղիներ հարթել.
— Կյանք իմ, կյանք իմ շողոքորթ,
Թղթե՛ վարդեր...

1926

Գ Ի Շ Ե Ր Ը

Վողջ գիշեր բարդիները
Խշտապին չափարի մոտ,
Վողջ գիշեր ականջում եր
Իմ սիրաբ աչք ձայներին.
Ինձ կանչում եր վողջ գիշեր
Հնորյա, հին մի կարոտ,
Կարկաչում եր մի անուն
Դաշաերից ու լայներից:

Ծնծղաներ եյին ցնծում,
Բանդիւններ արծաթաձայն,
Վողջ գիշեր հովը սլարեց
Ախ, այնքան, այնքան թեթե.
Վողջ գիշեր բոնել եյի
Հնորյա, հին մի կածան,
Ու շուրջս մեռած որեր,
Ու մեռած ծագիկթերթեր...

Ձեր յերգը ի՛մն է նորից,
Ու հիմա, յերբ գիշեր է,
Ուռչում է կարոտս խենթ
Ջրերի նման դարնան.
Ու այնպես դեռ հեռու յե
Ինձ թվում իմ աշունք,
Յեվ որերբս թևում են
Թեթե դեռ ու դեռ վառման:

Չեզ հետ եմ նորից աճում,
Բարդիններ, ձերմակ հարսներ,
Ցնորք իմ վոսկիհանդերձ,
Յերկրային, անդին հմայք,—
Յես քո բերքն եմ ընդունել,
Քեզնով ե միրգն իմ հասել,
Իմ յերկրի վառման արև,
Նայիրյան վոսկե՛ քնար...

1926

Ո Ր Ո Ր, Ո Ր Ո Ր...

Արևավոր, արևավոր իմ սերերին,
Իմ հույզերին արևավոր ու նո՛ր ու նո՛ր,
Իմ լույսերին ու լուսավոր իմ հույսերին,
Ընկուղենո՛ւն լայնասողարթ — որո՛ր, որո՛ր:

Որոր, որոր,

Որոր, որոր:

Որոր մարդին, արտուտներին, ծառին, ձորին,
Կածաններին իմ մենավոր, ծաղկած բարդուն,—
Որոր, քնքուշ իմ աքասի, որոր — մորի՛,
Որոր սարին, հանդին, արտին, որոր՝ մարդուն:

Որոր, որոր,

Որոր, որոր:

Շամբուտներին ու ամպերին մութ ու անձրև,
Անտառներին, արոտներին, քամուն, քարին,
Որո՛ր սրտին իմ՝ արտի պես անձրևածե՛ծ,
Որո՛ր սրտին՝ վարդերի պես արնակարմիր:

Որոր, որոր,

Որոր, որոր:

Որոր նրանց՝ արևային յերգիչներին,
Վորոնք մի որ յերգ յերգեցին ու անցկացան,
Կարգացողին որոր — սրտոտ ու մտերիմ,
Կարգացողին, վոր յեղել ե, հիմա չկա:

Որոր, որոր,

Որոր, որոր...

1926

Յ Ե Ր Ե Ք Բ Ա Ր Դ Ի

ԽՈՐԵԵԻՆ

1

Յերեք բարդի յես գիտեմ,
 Նրանք նազում են իմ դեմ,
 Ո, յերեք բարդի.
 — Մանկություն իմ դեղնածամ,
 Մանկություն իմ, վոր անցար
 Նոր ցանած արտից...

Ձանգի զոզանջ եմ հիշում,
 Նեղ արահետ, անտառ, շուն
 Ու դառներ ձերմակ.
 Անհուշ լեռան մի ուսից
 Բարձրացող վանք ու լուսին
 Յեվ ինչ-վոր վրան:

Այդ բարդին շատ ե հեռու,
 Նա մշուշվեց որերում,
 Յոթ սարից անդին.
 — Մանկություն իմ դեղնածամ,
 Մանկություն իմ, վոր անցար
 Նոր ցանած արտից:

2

Յերկրորդ բարդին, անն նա,
 Բանուկ մի ճամբի վրա,

Յերգուն ու խշուռն.
 Շուրջը՝ գյուղեր, կանաչ ծով,
 Առուն՝ անուշ զնգոցով,
 Մարգեր թարմաշունչ:

Շուրջը յերկիր մի զարթնող,
 Անուշ բուրոզ հերկ ու հող,
 Հազար կանչող ձեռք.
 Դաշտի վրա լայնանիստ
 Չարթնող ուժեր անհանդիստ,
 Ու գնացքի ձեն:

Լայնասաղարթ իմ բարդի,
 Չարթնող յերկրի մեծ ճամբին,
 Արևավոր սեր.—
 Դու շարժում ես ձեռքերդ
 Ու յերգում ես յերգերդ—
 Դու յե՛րգ իմ լուսե...

3

...Յերրորդ բարդի, յերրորդ ծառ,
 Դեղնասաղարթ ու պայծառ,
 Վոր կռանում ես.
 Նայում ես խոր ու բարի,
 Հեռավոր քո անտառից—
 Ի՞նչ ե անունդ...

Գու ծերությունն ես անհուշ,
Շուրջդ մուժ ու աղջամուղջ,
Հողը՝ անհանդարտ,
Նա մոմոում է խանդից,
Յեռում յեռուն յեռանդից,
Մնում նոր անտառ:

Կկուանաս դու մի որ,
Սբտամեռ ու գլխիկոր,
Կանաչ արտի դեմ,—
Շուրջդ, շուրջդ կշափեն,
Նորից շուրջդ կը ծափեն
Հազար բարդիներ:

Յեվ որերը հեռացած,
Սավերների պես ծածան,
Կնատեն արտիդ.—
— Մանկությունն իմ փոսկեծած,
Մանկությունն իմ, վոր անցար
Նոր ծլած արտից...

1926

Բ Ա Լ Լ Ա Դ Զ Ա Լ Ո Յ Ի Յ Ե Վ Ա Ռ Ա Ջ Ի Ն Ս Ի Ր Ո Մ Ա Ս Ի Ն

1

Չալոնն իմ շունն եր, չալ-չալ աչքունն եր,
Չալոնն չքնաղ եր, պայծան Չալո.
Ընկնում եր վոտիս, աչքը փակում եր,
Ծածկվում եր տառիս շալով:

Յեա հանում եյի մեր հին զգրոցից
Գույնզգույն լաթեր ու սրմա,
Չարգարում եյի պոչից մինչև վիղ
Ու տանում դաշտերը նրան:

Չալոնն քայլում եր պչրունու նման,
Սրվունն պոչը բռնած ցից,
Բավում եր վոտիս, մոտում եր մոռյլ,
Մոտում եր հպարտ, հաճույքից:

Տուն եյի բերում մութ փողոցներով,
Շների աչքերից անտես.
Դանդաղ իջնում եր կապույտ յերեկոն
Ու ծածկում սար ու դաշտեր:

2

Չալոնն իմ շունն եր, չալ-չալ աչքունն եր,
Չալոնն չքնաղ եր, պայծան Չալո.
Ընկնում եր վոտիս, աչքը փակում եր,—
Բայց բանը վերջացավ չարով:

Գաղթի մութ ճամբին կորավ իմ շունը,
Ո՞վ գիտե՞ վճիռ ձին կոխտեց...
Շուրջըս մեռնում եր վերջին աշունը,
Չմնաց ինձ վնչ մի ընկեր...

3

Մի աղջիկ յեղավ իմ յերկրորդ սերը,
Խաժ աչքով աշխուժ մի աղջիկ,
Վոսկեգույն էյին նրա մազերը
Ու բուրում էյին դարչին:

Մի որ միասին գնացինք այգի,
Հուլիսյան գիշերն եր նազում,
Նա չալ-չալ շորեր ուներ իր հագին,
Իսկ այգում—խաղողն եր հասնում:

Նստեցինք մենք թափ վորթատունկի տակ,
Նա դրեց գլուխը ծնկիս,
Յես շոյում էյի նրա վիզը տաք
Ու նայում մշուշված դեմքին:

Ո, սեր իմ, սեր իմ... — Ինձ հատել էյին
Բիբերը նրա մլարուն,
— Չալոն ե նայում նրա աչքերից,
Չալոն ե տխուր նայում:

Անհուշ նազում են վորթատունկերը,
Իսկ հետո անձրեն ե խշշում:

Քեզ չեմ մոռացել, կորած ընկերքս,
Քեզ չեմ մոռացել, իմ շուն...

Որերի հեռվում նրա հաշոցը
Հնչում ե կարծես լալով...

Չալոն իմ շունն եր, չալ-չալ աչքունն եր,
Չալոն չքնաղ եր, պայծառ Չալո...

1926

ՆԱՐՆՁԵ ԻՄ ՈՐԵՐՈՒՄ...

Նարնջե խմ սրերում

Վրնջում ե յերգըս.

— Ի՞նչն ե, ի՞նչն ե քեզ տանջում,

Յերգ խմ...

Շուտով անգարձ կը թռչի

Կապույտ թռչունը...

— Յերգ խմ, յերգ խմ գեռ չերգած,

Վար վրնջում ես...

1926

Պ Ո Ւ Տ

Մ ս ր ս

Մի ջինջ գիշեր ե յեղի.

Մի ջինջ գիշեր,

Մայրս ջանել մի յեղեզ,

Հայրս ուժեղ:

Բարդիներն են յերգիլ

Ջրերի մոտ,

Ամեն ինչ խորն ե յեղիլ,

Ամեն ինչ հորդ:

Ու մորըս հուզիլ ե

Բարդիների յերգը,

Իսկ գաշտերում փիրուզի

Ծղրիզներն են յերգիլ...

Ախ, ծղրիզներ շատախոս՝

Լուսնկայի հետ,—

Ծնվեցի ձեր պատճառով

Այսպես պոետ...

1926

ԻՄ ՅԵՐԿԻՐ ՔՈ ՅԵԼՄԱՆ ԺԱՄԻՆ..

Լեցուն եւ յերգերով քո նոր,
 Լեցուն քո հոյս ավիշով,
 — Հիշում եմ ճամբաներ մուտք,
 Ու մուտք հուշեր եւ հիշում:

Նայիր ինձ այդպէս աներկղէս,
 Թող սուրբ յերգերիս քամին,
 Թող այսպէս սուրկով յերգեմ,
 Իմ յերկիր, քո յերման ժամին...

1926

Սյուրբ վողին հին յերգի
 Ծեծեց իմ դուռը,
 Ու յերբ բացի յես դուռը՝
 Ընկել եր սեմին—
 Ճերմակ, ճերմակ մի աղջիկ՝
 Բերնին վրտիւրը,
 Թղթե ծաղկած մի պսակ
 Դեղին վարսերին:

1926

ԿԱԾԱՆՆԵՐՈՎ

Վորպես հանգած մի անուն
 Յերկնքի վրա,—
 Այդ լուսինն է գեղնամույն՝
 Աչքերով մեռած:
 Ու բարդիներն են շրշում
 Գիշերների մասին,
 Էսում է անշուշտ
 Խոնարհ մասրենին:
 Հանապարհներ անհմա,
 Քառուղիներ ձիգ,
 Ու պարխազներ հնամյա,
 Վերձիգ...
 Խաղաղ գիշերն է խոսում
 Խոսուն ձայներով,—
 Գնում եմ յես իմ լուսե
 Կածաններով...

1926

Բ Ա Ր Գ Ի Ն Ե Ր

1

Յես փոքր եյի գեռ, փոքր եյի յես,
 Աչքեր ունեյի բարի ու մեղմ,
 Արտերի ճամբին տեսա յես քեզ,
 Դու այնքան աղջիկ, այնքան անմեղ:

Առաջին հանդիպում... և ինձ թվաց,
 Վոր նման ես դու ճերմակ գառի,
 Ուզեցի քեզ հետ դաշտը գնալ
 Ու հասնել ճերմակ բարդի ծառին:

Ուզեցի, բայց դու գնացիր տուն,
 Ու յերազ դարձար, դարձար վերհուշ,
 Փովեց դորշագույն մի իրիկուն,
 Մի Բողար հաջեց հեովեց հեռու:

Հետո գիշերը, անհանգիստ քուն,
 Լուսնիկա դաշտեր, դունչը գառիս...
 Յես գնում եյի մեր դաշտերով,
 Յես հասնում եյի բարդի ծառին...

2

Արագիլներ յեկան ու գնացին,
 Յեզ գարուններ անցան, դարձան նորից,
 Հասակդ ձգվեց, վորպես հացի,
 Շուրթերդ կարմիր, կարմիր մարի:

Գնացքը սողաց միջին ձորից,
Ինձ ել վերցրեց, ճչաց, զնաց.
Իմ աչքը մնաց կանաչ շորիդ
Յեզ քո մազերին վոսկետրցակ:

Ախ, իմ դաշտերը լայն ու արձակ,
Յեզ մեր խրճիթը, կալը, դեզը —
Յերազի նման յեկան, անցան,—
Սպիտակ իմ գառ, թողի քեզ ել...

Յեզ որորում եր իմ սիրտը թույլ
Անուշ շրշուհնը հեռու արտի,
Ու գլխիս վրա խշշում եր խուլ
Դաշտերում թողած ճերմակ բարդին...

1926

Ո Ր Ե Ր

Նորից որեր են վառ, ու իմ սրտում
Հուրհուրում և քո հրահուրը
Ու խոսքերը քո քաղցր ու տրտում
Կարկաչում են, վորպես բարակ ջուրը:

Յերզի նման մի վաղուց յիբզված
Հիշում եմ նորից այն վորք մանկան,
Վորին աշխարհը հեքյաթ թվաց,
Ու նա սկսեց անհոգ ման գալ:

Այն վառ մանկիկը: Թվաց նրան,
Վոր լեռներից դեն չկա աշխարհ.
Յերկինքը կապույտ, կապույտ վրան,
Չկա քաղցր միրգ մրգից աշնան:

Բայց յերբ մեծացավ, դարձավ պոետ,—
Նա մրդեր տեսավ և քաղցր և դառն,
Ծաղիկներ ցանեց, յերգ ու պոետ,
Դարձավ իմաստուն մի սրբախոսական...

1927

Ն Ի Ա Ն Յ Յ Ե Բ Գ Ը

Խշշում են բարդիները.—Վողջճւլն,
 Վողջճւլն յերկաթե հյուրին.
 Ծաղիկները ախուր են շրշում,
 Իսկ այնտեղ գողգողում է ուռին:

Պիտի գա ու չգալ չի կարող,
 Կքանդվեն անտառները մի՞ին,
 Կձգվեն պողոտաներ քարոտ,
 Նորանոր պողոտաներ կրկին:

Ձեր վառքի մասին անյավոր
 Կերգի հովերի քանքարը,
 Նրանց հետ միասին՝ ծանոթ
 Նայիրյան վոսկե այս քնարը...

1926

Ա Շ Ո Ւ Ն

Աշուն, խաղող ես բերել,
 Վոսկե տերև ու մշուշ,
 Շրջազգեստներ բեհեզե,
 Սեր ես բերել, աշուն—

Ու ախրություն ինձ համար,
 Ու ախրություն ինձ համար,
 Ու ախրություն ինձ համար
 Ու շուք:

Աշուն, լուսին ես բերել
 Ու անձրևներ սրամաշուկ,
 Ցանկապատի մոտ նստած
 Դու մի ղեղին, ախուր շուն:—

Աշուն:

Աշուն, ինչպիսի ես մաշում՝
 Խարտոցի պես պաղ ու խիստ.
 Մեռել՝ վոսկե քո նաշում՝
 Թող քնեմ խոր ու հանգիստ:

Աշուն, խոսքեր ես բերել,
 Վոսկե խաղեր ու ծնծղա,—
 Ու ախրություն ինձ համար,
 Ու ախրություն ինձ համար
 Ու մահ...

1926

Ս Ր Ի Ն Գ Ը

Նա յերգում է ամեն ուր,
 Նա ամեն ուր լալիս է,
 Սրնգահարը կույր ու խեղճ,—
 Ու հեռու յե, ու չկա
 Նրա յերգի մայիսը:

Ու կմեռնի նա մի ուր
 Այդ մայիսի վրա սրադ,
 Սրնգահարը կույր ու խեղճ,—
 Ու փողոցը կզառնա
 Նրա համար ցուրտ դագաղ:

Բայց այն, ինչ վոր յերգեց նա
 Յեվ ինչ յերգում է հիմա—
 Սրնգահարն այն կույր ու խեղճ—
 Յերկրիս հովերը կերգեն
 Հովիտներում անուրախ:

— Յերգեր, յերգեր հնամյա,
 Սրնգահարներ կույր ու խեղճ...

1927

Ա Յ Գ Ե Ս Ս Ա Ն Ն Ե Ր

Այգեստաններ մի թին, սաղարթավոր ու վեհ,
 Այգեստաններ, վորոնք կարկամել են, տարվել
 Բլուրների վրա ու բլուրներն ի վեր...
 Այգեստաններ:

Այգեստաններ հուռթի ու կատաղի, հզոր,
 Բազուկներով կանաչ ու մրգերով դեղին,
 Այգեստաններ, վորոնք վարարել են այսօր,
 Սպասում են սիրով իրենց հավաքողին:

Սնկանման խաղող ու տանձ, ու բար, ու դեղձ,
 Իմաստությունն՝ աշնան մրգերի պես հասուն,
 Իմ մրգաստան յերկիր, մրգանման իմ յերգ,
 Յերգի նման անմահ, յերգի նման ասուն...

Առեք, առեք յերգըս վուկերառ ու հզոր,
 Այգեստաններ բերքուն ու ձեր գիրկը տարեք...
 Այգեստաններ, դուք, վոր գազազել եք այսօր,
 Այգեստաններ...

1927

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ը

Յես վերջինը չեմ, հասկացե՛ք ինձ,
 Յե՛վ վորը կարոտն իմ վերջինը չե.
 Ախ, կծնվի դեռ այնքան թախիժ,
 Այնքան վիհեր դեռ պիտի շնչեն...

Վերջին պոետը... դեռ չկա նա,
 Նա պիտի գա դեռ, պիտի յերգի,
 Ամեն մի յերգն իր՝ հատու դանակ,
 Ամեն մի յերգն իր՝ մորմոք ու վերք:

Վողջճւճն, վողջճւճն քեզ, վերջին պոետ,
 Յեղիք հպարտ դու, յեղիք լուսե,
 Վորքան խաչեն քեզ ու հայհոյեն—
 Այնքան թող յերգդ խորունկ հուզե:

Կգաս յերկրիս խուլ մի անկյունից
 Ու յերգերը քո վե՛հ կհնչեն,—
 Վերջինը չեմ յես, հասկացե՛ք ինձ,
 Ու բորբ կարոտն իմ վերջինը չե...

1927

* * *
 Կարծես մանուկ եմ դարձել յես,
 Բռնել եմ մեր արտի ճամբան,
 Յերգում են ծղրիզ ու սեզ,
 Նարինդը սուլում ե հարբած:

Նրանց պես եմ յերգում յես ել՝
 Սիրով մի, խնդությամբ հետին.—
 Ընդունիր, ընդունիր, սեր իմ,
 Յերգերը քո պայծառ պոետի...

1927

Արև, շողերդդ գնալի գու,
Յերգիս արտի վրա,
Թող շողա քո նիզակը
Իմ սրտի վրա:

Շողա՛ թող շողդդ լուսե
Մայթերի վրա,
Թող անձրևները հոսեն
Վարդերիս վրա:

Արև, հրահուր թաշուն,
Ոճիբ ինձ քո լուսով.
Վարդն անձրևով ե շնչում,
Իսկ յերգը — հույզով...

1927

Զ Ա Ր Ե Ն Ց Ի Լ Ե Տ

1

Հիշում ես, հիշում ես՝ խշշում եր աշունը,
Զմեռն սպասում եր մերկ սարից անդին,
Բուլվարի ծառերը խշխշում էյին,
Բուլվարը նման եր հիվանդի:

Մեր հողնած յերակների խողովակներով
Փչում եր աշնան քամին ցրտացուբա,
Նա մերթ հեկեկում եր աղիողորմ
Ու մերթ ել կատաղի ցնցում:

Նա ծվատում եր մացառ ու թուփ,
Հեկեկում խուլ ու տրտմաթախիծ,
Ամայի անտառում ու դեղնած դաշտում
Փնտտում եր գոնե մի ծաղիկ:

Անտառի տերևներն էյին խշխշում,
Մահանում դաշտերն ընդարձակ.—
Հիշում ես, հիշում ես՝ աշուն եր, ինչպես աշուն,
Ամառը շուտ անցավ, շուտ անցավ:

Շուտ անցավ ամառը. — նա միլրդ եր ու հասույթ,
Նա հասուն որերի բեղմնն նախորե,
Բայց յեկավ աշունը, յեկավ մահացուբա.
Որեր իմ, որեր իմ, որեր...

Լսում ես, լսում ես, — խշշում եր աշունը,
Զմեռն սպասում եր մերկ սարից անդին,

Յերգերի ծառերը խշխշում էյին,
Ծառերը՝ նման հիվանդի:

2

Յես հիմա հիշում եմ մեր բոլոր այն հուշերը,
Մեր բոլոր ճամբաներն անցած,
Այդ ամենը հիմա որերում մշուշվել են,
Բայց դեռ խայթում են, վորպես հանցանք:

Առաջին տերեւթափ, աճազին և անկապան,
Այդ հոգմ եր, փոթորիկ եր, սամնամ.
Տանջանքով յերկնում էյինք նոր յերգի նոր ապսոսան,
Յեզ այդ եր...արյուն... քամում...

Յես գիտեմ վոչ մի աղջիկ չարժե մեր մեկ իսկ յերգին,
Վոչ մի յերգ՝ այս տենդին բերրի,
Վոր՝ յերգի պիտի փոխվեն արնահոս մեր վերքերը, —
Գարնան պես վառման յերգերի:

Յեզ իզուր այն ճահիճը լուսնահար այլայլվում է,
Զառանցում է չարկամ ու խոցող,
Դեռ կանցնի մեր յերգերի յերկաթի բատալիոնը
Վերելքի հզոր զնգոցով:

Բարեկամ, մարտիկ, ընկեր, ինչ լավ է, վոր մենք
կանք գետ,

Կարող ենք ուղիներ հարթել,
Յերգերի վեհ շառաչով ծառանալ հին ծառի դեմ,
Հասցնել նոր կյանքի վարդեր...

1927

„Խ Ե Ղ Ճ Լ Ի Լ Ի Ա Ն“

Ս Ի Ր Ե Լ Ի Յ Ե Լ Ի Ա Ե Ե Ե Ե Ե Ե

Դու ապրում ես, դու ապրում ես ու յես դեռ քեզ
հիշում եմ,

Հիշում եմ դեռ քեզ,
Պաղ մարմարի ասնդուխներից իջավ անշող աշունը,
Իջավ ու յերգեց:

Անձրեածեծ մայթին ընկավ մի թիթեղէ ցուցանակ
Շառաչով մի խուր,
Մի կին, մթնում կանգնած, շոյեց մատները բարակ
Ու ժպտաց տխուր:

Հետո մշուշ ու սովերներ, ու մշուշում սպասող
Մի լապտեր կարմիր, —
Դաշնամուրը խուլոս ու նենգ, դաշնամուրը խուլ
մի հագով,

Ու մի պաղ մարմին:

Մի կանաչ կին, մի վոստիկան... Տարան նրան
փողոցով

Մի մութ, զարտուղի, —
Ու լալիս են նրա սրտում ձևերը նուրբ ու խոցող
Ռեմբո Արտուրի...

1926

Կ Ա Ր Ո Տ

Ս Ի Ր Ե Ն Ի Ա Կ Ա Ե Ն Ի Ի Ն

Յերեան քաղաքում նստած
 Կարոտում ես սե քո ձիուն,
 Կարոտով աշնքսն հատակ,
 Ու աշնքան, աշնքան խանձուն:

Բաժակի դեմ գարեջրի
 Նստել, մտածում ես մռայլ՝
 Կերե՞լ ե նա արդյոք գարի
 Յե՞վ ո՞վ ե նստում նրան:

Ո՞ւմ տակին խրխնջում ե հիմա,
 Վ՛հր ճամբին սմբակը մաշում,
 Չե՞ն տանջում հողհու՞թյան անխմաց,
 Չե՞ն թողել անջուր...

Անցնում ե խրխնջով քո ձին
 Ուղեղիդ ծալքերից արթուն,
 Հեծյալը քաշում ե սանձից,
 Արնոտում բերան ու շրթունք:

Ո՛, Ակսել, գիտե՞ս դու միթե,
 Թե քանի նժույգ եմ կորցրել,
 Քշել եմ մթին անդունդներ,
 Հանել բարձրերը:

Ո՞ւր ե նա, ո՞ւր ե նա, ո՞ւր ե նա...
 Ո՞ւր են այժմ իմ ձիերը,
 Վ՛հր ճամբին խրխնջում են հիմա
 Յե՞վ ապրում են արդյոք, թե՞ մեռել են...

Վոչ մի ուժ չի դարձնի յետ
 Վոսկեձամ իմ նժույգներին,
 Ու վոչ մի, վոչ մի արահետ
 Ել նրանց ինձ մոտ չի բերի:

Յե՞վ ուրիշ ե կարոտս հիմա,
 Ա՛յլ սիրով եմ այսպես դժգունել,
 Ու հոգուս ճամբեքի վրա
 Վրնջում են ուրիշ նժույգներ...

1928

ՀՈՒՐՀՐԱՆ ԱՐԵՎ

Ա Ր Վ Ե Գ Ի Ն

Հուրհրանն արև,
Արև հուրհրանն,
Վառ կանաչ ծառեր
Ջրերի վրա:

Իսկ հովը հիմա
Մի յերգ և յերգում,
Յերգերիս նման
Պայծառ ու յերգուն:

Իմ յերգն և այնտեղ,
Հնչում և ուրախ,
Հուրհրանն արև,
Արև՝ հուրհրանն...

1929

Ս Ե Ր Գ Ե Յ Յ Ե Ս Ե Ն Ի Ն Ի Ն

Հիմա մեզ մոտ ցուրտ և, ցուրտ և և հյուսիսում,
Ջյունն և ծաղկել հիմա շիրմիդ յեղբերին,
Ցավով մի անամոք յես քո մահն եմ հիշում,
Իմ հեռավոր յեղբայր, Սերգեյ Յեսենին:

Գիտե՞ս, գիտե՞ս արդյոք, վոր քո մահից հետո
Նորից գարուն յեկավ ու ծաղկեցին վարդեր, —
Վոր տարիներ անցան ու դեռ կանցնեն հերթով,
Նույն արևն և վառվում հուրհրանն ու վարդե:

Ել ինչո՞ւ քեզ հիշել, — մի սիրելի անցորդ,
Վոր շատ անգամ ճամբան մոռացել և, ծռել,
Խեղագար մի նժույզ՝ ազատ թողած սանձով,
Մինչև վոր մի գիշեր իր ուղեղը ցրեց...

Յրեց քարքարուտի, ցրեց ժայռերի դեմ
Ու դաշտերում մնաց սոսկ խրխինջը նրա,
Իսկ յերբ առավոտը շողշողաց պաղ ու թե՛ն՝
Լացի շիթեր կային ծաղիկների վրա:

Ծաղիկների վրա անոգ շիթեր լացի,
Հետո արևն յելավ լիժոնի պես լուսե,
Ջարթնեց մեծ առօրյան ու վորոտաց անձիր,
Հողը նորից արև ու նոր հունդեր ուղեց:

Անողոք և կյանքը, անողոք ու համառ,
Նոր ծաղիկներ հիմա նոր բույրով են զարթնել
Ու քո մահից հետո, իմ հեռավոր յեղբայր,
Նորից գարուն յեկավ ու ծաղկեցին վարդեր...

1928

Յ Ե Ր Գ

Կ ո մ ի տ ա ս ի ն

Սիրտս քեզնով լեցուն է,
Սիրտս ախպես,
Քո յերգերը հնձում են
Նուրբ ու անտես:

Յե՛վ արտերին վոսկետո՞,
Արահեաներին,
Յերգում ե յերգըդ որոր
Անցած որերից:

Որոր հանդին ու կալին,
Հասկերին որոր,
Որոր հոգնած մաճկալին,
Որ՞նք, որ՞նք:

Որոր և՛ քեզ, հեռավո՞ր,
Հեռավո՞ր իմ,
Որորներիդ որոր,
Յերգիդ մտերիմ...

1927

Ա Ն Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

Ա ր փ ի կ ի ն

Տեսնում եմ դեռ դեմքըդ բյուրեղ,
Քո ժպիտը մեղմ ու մարմանդ,
Շիրմիդ վրա լացող քույրեր,
Ուռիները կյանքիդ գարնան.
Ու պրոֆիլըդ՝ լացող մարմար,
Խաղաղ, վարպետ անտույ յեթեր,
Շիրմիդ վրա լուսե կամար
Ու թիթեղե ծաղկեթերթեր:

Անբառ յերգեր շիրմիդ վրա,
Ծաղիկներին նման կարմիր,
Հիշատակի կապույտ վրան՝
Անանձնական ու անմարմին.
Սիրտը, սիրտը քո հուրհրան՝
Խոցված մահու գաժան տեղով,
Քո լուսավո՞ր շիրմի վրա
Մե՛ծ պտետի խիղճը յերգող...

1928

Հ Ո Ւ Շ

Հովհ. Թումանյանի պայծառ հիշատակին

Անուշն ե լալիս մշուշում,
Փախչում ե Սաքոն դիվահար,
Ձորերում Դեբեան ե Ֆշշում,
Արևը — բարձրացած վահան:

Ու հեռո՛ւ, հեռո՛ւ որերից
(Մանկությո՛ւն, լուսե՛ մանկություն...)
Այնքան քաղցր կովում են ելի
Շունն ու կատուն...

1929

ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆԵՆԻՍՅԱՆԻ ՄԱՀԱՆ ԱՌԹԻՎ

Վաղուց լուկ եր քո քնացքը,
Շրջում եյիր դու համր ու անկյանք,
Վորպես քնարի կտրած լարը,
Վորպես քնարի անշունչ պատյան:

Շրջում եյիր դու, ծերունի պոետ,
Աշունված յերգով, մաղերով՝ արծաթ,
Միայն առոթյան դեմքը շոյեց,
Ու վոչ մի յերազ յետ չդարձավ:

Անցան և անդարձ... ու յերբ բացվեց
Նոր կյանքի վորտոտան սոսովտար,—
Դողում եր յերգը ծվեն-ծվեն,
Ինչպես զոդում ե մահապարտը:

Անցար և անդարձ... մի անուն ել,
Նայում եմ սառն, ասես անվիշտ.
— Բանաստեղծները մահանում են,
Իսկ յերգը, յերգը, յերգը կա՛ միշտ...

1930

Ա Ն Ջ Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սիրելի Ավ. Իսահակյանք

Յերազ տեսա յես.—
 Նստել եմ հապես
 Ականջքս ձենի,
 Մաքով խոնկած,—
 Ու ներս մտար դու
 Զվարթ, ժպտերես,
 Ուստա Կարոյի
 Ականջից բռնած..

1930

Ա Ն Վ Ե Ր Ն Ա Գ Ի Ր

Ս Ա Ր Ե Թ Ի Ե

Այդ լուսի՞նն ե խշխշում
 Հնորյա այգում,—
 Ո՛, նա փշուր-փշուր
 Թափվեց իմ հոգում:

Մայր արագիլը մեռավ,
 Մեռա՛վ իր բնում,
 Զագը մենակ մնաց,
 Ու ել չի բնում:

Թեթե՛ լինի մագիլը
 Սրտիս վրա.—
 ...Մենակ ե արագիլը,
 Կմեռնի՛ նա...

1930

Մ Ա Ն

Շիրմիս վրա բուսած
 Զվարթ վարդենի,—
 Այստեղ հանդչի գուսանն
 Անաի արտերի:

Դաշտերում հով ու հե,
 Կիջնի իրիկո՛ւնն եր,
 Կիջնի թախիժը սև
 Հուշ դարձած հողում իմ:

Ու հողի տակ պառկած՝
 Կզգամ աճելը քո,
 Կզգամ անձրևը թաց,
 Կզգամ մշուշը գոլ:

Յեղ ուշ մի իրիկուն
 Կըզա վերջին սերըս,
 Ու կնայի խոկուն՝
 Ուսին իր հյուսերը:

Կնայի քեզ հուսատ,
 Զվարթ վարդենի.
 — Գուսան, պայծառ գուսան
 Արտերի, արտերի...

1927

Մ Ա Ն Ա Զ Ա Ն Գ

Այդ նա՛ յե դաշտերի վրա,
 Հովիտներում այս և այն ճամբի.
 — Ընդունի՛ր մահըդ արհավրած,
 Ընդունի՛ր հանգիստ:

Ծաղիկները պառկ կղտոնան,
 Ուղիները՝ խաչված ձեռքըդ,
 Ու կերդե պատարագ թաղման
 Սուլիչների համերգը:

Մեռնո՛ղ սեր վերջին հողվորի,
 Կճնեն նոր սերեր խնդուն,
 Փշե պաակո՛վ արևորվեր,
 Փշե սրակավոր իմ դու:

Ինչերը կխփե սև վրան,
 Լեռների վրա և այն ճամբի...
 — Ընդունի՛ր մահըդ արհավրած,
 Ընդունի՛ր հանգիստ...

1927

Խ Ո Ղ

Աշուն և դեղնապայծառ, վոսկեման ու վոսկեքող,
 Աշուն և այգիներում, փողոցում և իմ սրտում,
 Աշունը մի դեղնաթերթ ու տրտում գիրք և թերթում,
 Աշունը խշխշում և իմ սրտում վառ ու յերգող,
 Աշո՛ւն իմ դեղնապայծառ, վոսկեման ու վոսկեքող...

Ահա նա թոթափում և բաշերն իր վառ ու վոսկե,—
 Տեսնո՞ւմ ես, մեծացել եմ ու հասել են բերքերն իմ,
 Ու խորքից և խշխշում ընթացքը իմ յերգերի,
 Ել չկա լաց ու յերգում, ել չկան դեղուն խոտքեր,—
 Ահա նա թոթափում և բաշերն իր վառ ու վոսկե...

Վողջո՛ւյն քեզ, հասած մրգի, հասկերի՛ իմաստություն,
 Շուտ յեկար, շտապ յեկար, բայց յեկար անվերադարձ.
 Հուշ բերիք ու մշուշներ ու արև մի վոսկեթաս,
 Բերիք բորբ բերքերը քո, վեհությո՛ւն, ու խնհ, ու թնւյն...
 Վողջո՛ւյն քեզ, հասած մրգի, հասկերի՛ իմաստություն...

1927

Մ Տ Ե Ր Ի Մ Խ Ո Ս Ք Ե Ր

Ժպտում և այսոր քարը, հողը,
 Գարո՛ւնդ և շնչում ամեն ինչում,
 Ինձ դուրգուրում և քնքուշ շողով,
 Ու քո անունն եմ մեզմ շնջում:

Խաղաղություն քեզ, հայրենի՛ տուն,
 Հայրենի՛ յերկիր, հայրենի՛ սեր,
 Ահա յես քո դեմ — սա՛ռն մի դիտուն,
 Յեզ իմաստուն, և՛ մտասկեռ:—

Այսպես, մի՛շտ այսպես... որորոցում
 Միլիոն մանուկներ, միլիոն ծաղիկ,
 Շուրթեր բորբոքված ժպտի բոցով,
 Նայվածքներ պայծառ ու անթախիծ...

Այսպես, մի՛շտ այսպես:— Յեզ դո՛ւ, պոե՛տ,
 Մե՛ծ հայրենիքի քաղաքացի՛,
 Ել բավական և շողեր շոյես,
 Միբես անձրևներ, կամ աղացի:

Միրի՛ր այն հողը, վոբի՛ վրա
 Կանգնել ես ու նա չի արտնջում,
 Միրի՛ր արևը, յեզքը նրա—
 Գալի՛քը փնտռիր ամեն ինչում:

Յեզիք արթո՛ւն դու, յեզիք դիտո՛ւն,
 Ու պայծառ յեզի՛ր, յեզի՛ր լուսե.—
 —Խաղաղությո՛ւն քեզ, հայրենի՛ տուն,
 Հայրենի՛ յերկիր, հայրենի՛ սեր...

1927

Բ Ր Ո Ն Զ Ե Լ ՈՒ Ս Ի Ն

Յես հավատում եմ այս առավոտին,
 Ու մեն մի, մեն մի տրոփին նրա,
 Վորքան ել սիրտս թախիժը ուսի,
 Քարե՛ր ծանրանան ուսերիս վրա: —

Յես հավատում եմ այս առավոտին
 Ու նրա համար դեռ ապրում եմ, կամ,
 Քայլում եմ, մեջքիս ալ-կարմիր դոտի,
 Ուղիներով այս և՛ նոր, և՛ յերկար:

Վողջնւ՛յն, ո, վողջնւ՛յն ծիւերին այս նոր,
 Վողջու՛յն քեզ, յերկիր, հույզերիդ լույսին.
 Վողջունում եմ քեզ խնդութ՛յամբ բոսոր
 Հզոր ու անմար, ո, բրոնզե լուսին:

Վորքան ել սրտունս ժանտաթերթ վարդեր,
 Վորքան ել յերգերս ջավով դժգունեն—
 Վողջու՛յն, նո՛ր ծիւեր, արզավանդ արտեր,
 Կանաչ դաշտերի կարմի՛ր նժույզներ...

1927

Մ Ե Ռ Ն Ո Ղ Զ Ա Ն Գ Ե Ր

Հին ժամերի զանգեր,
 Հին ժամերի զանգեր,
 Հովտում ու գյուղերում
 Ու հյուղերի վրա,
 Ո, հիսուսյան մրափ
 Մոայլ ու ժանդակեր,—
 Հին ժամերի զանգեր
 Քաղաքների վրա:

Հին ժամերի զանգեր,
 Վոր հնչել եք մի որ
 Որորոցիս վրա,
 Վորպես դաժան սրոր.
 Թունավորել կյանքը
 Ու բուրել խունկ ու մահ,—
 Հին ժամերի զանգեր,
 Վոր հիշում եմ հիմա:
 Հիմա, ամեն մի նոր
 Որորոցի վրա,
 Վորպես նոր մի սրոր,
 Գորդում ե անա
 Մեր առորյա՛ն հզոր,
 Մեր առորյան անահ...

Հին ժամերի զանգեր,
 Վոր մեռնում եք հիմա:

1929

Գ Ա Ր Ո Ւ Ն

Անող էս այժմ, անսեր էս դու,
 Անդոր են այժմ սեր ու յերդում
 Ու գալը նոր գարնան,
 Ախ, ս՛ւր էս դու, սեր իմ, վասկի՛ր,
 Անուշ կակիժ չաաված խոսքի,
 Գարուն իմ հուրհրան...

Լուսն էս դու, լսո՞ւմ էս դու,
 Հողիդ բյուրեղ, սիրարդ խնդուն,
 Ու կյանքըդ վառ, անգին,—
 Հեռու յես դու, հեռու իմ ցալ,
 Յնորք իմ լույս, անուշ անցած,
 Կորուսյալ իմ հանգիստ—

Վառե՛մ հիմա ուրիշ կրակ,
 Ուրիշ արյուն, ուրիշ յերակ,
 Ուրիշ հրով կիզեմ,
 Հեռո՛ւ յես դու, առնւ արծաթ,
 Գարնն սլայծառ, արտ իմ արձակ,
 Անցալ անցած իմ սեր:

Գարուն կգա, արյուն կգա.
 Կանաչ արյուն, ավիշ ու կաթ,
 Կերգեն ուրիշ հյուղեր,
 Ուրիշ սերեր, ուրիշ ձևեր,

Ուրիշ թևեր դեռ կթևեն,
 Կըզան ուրիշ հյուրեր...

Անող յերգ իմ, անսեր եյիլ,
 Անզոր եյիլ, իղուր եյին,
 Կախվել եյիլ թելից.
 Գարնան դողն եր, հողը կանչեց,
 Ո՞վ խուլ մնաց, ո՞վ չախանջեց.
 — Յելի՛ր, յելի՛ր, յելի՛ր...

1928

Հ Ա Մ Տ ՈՒ Ք Յ ՈՒ Ն

Յես գիտեմ՝ վոչ մի, վոչ մի ծագիկ
Իմ արցունքով չե, վոր ապրում ե,
Ել ինչլիս ե պետք մուժ ու թախիժ,
Ել ինչլիս ե պետք քո համբույրը...

Յես շատ սիրեցի ե շատերին,
Դահիճ յեղա վոմանց ու վոմանց զոն,
Ինձ մեղմ որորեց վշատենին,
Ու ջուրը յերգեց քաղցր ու դոն:

Ու յես ասում եմ, ասում եմ այժմ.
Խաղաղությունն ձեզ, որեր անցած,
Յես իմ դեմ յեղա այնքան դաժան,
Գործեցի իմ դեմ այնքան հանցանք...

Բայց նայում եմ յես նոր աշխարհին,
Այդ նա՛ն յե, — յերգըս, վոր հնչում ե...

— Յես գիտեմ, յես գիտեմ՝ վոչ մի ծագիկ
Քո յերգերով չե, վոր շնչում ե...

1926

Զ Ա Ր Ք ՈՆ Ք

Սյրվում ե շեկ փոշին,
Շողջողում ե արևը,
Վորպես վոսկե մի կոշիկ
Շողջողում ե արևը:

Այս վորքան լո՛ւյս ու բեհեզ,
Այս վորքան հուր ու համբույր,—
Այգում, արտում ու հանդում
Շողջողում ե արևը:

Մրգերը լույս են հա՞գել՝
Դեղնաթավիշ ու յերան,
Լիմոնի պես հուրհրան՝
Շողջողում ե արևը:

Ու կանչում են ամենուր
Կարկաչները նոր կյանքի.
— Ո, արթնացի՛ր, մանկիկ իմ,
Շողջողում ե արևը:

Ո՛, յերկիր իմ, դո՛ւ, իմ յերգ,
Սրեազուն իմ նոր սեր,—
Բախախ վրա քո լուսե
Շողջողում ե արևը...

1928

Ս Ի Ր Ե Ր Գ

Պարզ ե՛ս սիրում եմ քեզ,
Որերն ինձ ասին,
Յես յերկար եմ մտածել
Այս սիրո մասին:

Իսկ կասկածներս անթիվ են,—
Մթին են և խնոս,
Սիրո, սրտի խնդիրը
Վորքան ելվառ:

Սիրում եմ քո անունը,
Շնչող ու թեթե,
Ու շառաչուն զարունն այս,
Ու ձաղկեթերթեր:

1929

Հասկե՞քն են խոր շշնջում,
Հասկերը, թե սիրաբ իմ.
Աշուն իմ, զվնրթ աշուն,
Հասար գու իմ կարոտին:

Ժպտում են հանդ ու արտեր,
Վառվել են հրով ներքին,
Բացել են ահա հանգես,
Մաքերի, մրդի, յերգի:

Աշուն իմ վառ ու վերջին,
Իաշտերի զեղնաբնշ ձի.—
— Թռչուն ես՝ անցսր վերից՝
Արևի միրգը կտցիզ...

1930

Ի Ն Զ Հ Ե Տ

Յեզ գիտեմ յես հիմա, վոր համառ ե,
Ատորյա աշխատանք ե անդուշ
Այն ամենը, վոր վարար, հողմավար եր,
Վոր դալու յեր յերգով ու խանդով...

Յեզիշե Ձոքեմց

Հիմա, յերբ շուրջդ յես ե,
Վազք ե լայնահուն,
Կարկաչում են ջրերը
Դեռ քո ականջում:

Նրանք սերեր են յերգում,
Լուսին ու մորի,—
Դու խնդութ յամբ ներքուստ
Լսում ես նորից:

Գիտեա, պոյեա, վոր կյանքում
Ձի լինի վոչինչ
Լուսիններով անքուն,
Ու ջրերով ջինջ:

Աշխատանքով համառ,
Կրակով ներքին
Յեկավ այս մեծ ամառը
Մրգի ու յերգի:

Իսկ քեզ հուզում ե դեռ
Դռնակն այն այգու,
Վորի մոտ սիրտըդ յերգեց
Կարտուով, անքուն:

Վոսկենազիկ լուսինը,
Քայլքը աղջկա,
Նրա վոսկի հյուսերը...
Ձի յեղել, չկա:

Ու չի յեղել մեր կյանքում,
Ձի լինի վոչինչ—
Լուսիններով անքուն
Ու ջրերով ջինջ:

Աշխատանքով համառ,
Կրակով ներքին
Յեկավ այս մեծ ամառը
Մրգի ու յերգի:

1930

Այնքան հունդեր ցանված,
Յերգող այնքան հերկեր,
Այնքան սերեր հանկարծ,
Կանչող այնքան ձեռներ...

Այնքան յեռանդ արու,
Վոգորումներ վառման,
Հույզերի բյուր անու,
Վարար ջրեր գարնան:

Իսկ նա վորին հասնի,
Վորին հասնի յերգն իր,
Նա մոլորված բազե,
Դեմը - անձիր յերկիր:

Դրանից չե՞, վոր նա
Հաճախ ճչում է դառն,
Մերթ ել մնում է համր
Ու չի տեսնում վնաս:

Շիրթում է մերթ ել
Հունդը, ասողը ցնծուն, —
Հունդը յերգելու անդ
Նա ասողեր է կոչում:

Ա Ն Ձ Ր Ե Վ

Պսպղում են դրսում տատիս
Քուլպա գործող շղերը,
Մարգագեանի վրա, արախ—
Հողը վողողվել է:

Խաղաղության արծաթ անձրև
Իմ յերկրի վրա,
Սիրտս քո դեմ խորն եմ բացել
Ու քոնն եմ հիմա:

Յեա շնչում եմ քո ջերմ բույրը,
Հողեղեն մարմին,
Յեվ այրող ե իմ համբույրը,
Արնոտ ու կարմիր:

Գուրգուրում եմ հողնությունդ,
Վարսերդ վոսկի,
Հավատում եմ, հավատում եմ
Հասկերիդ խոսքին...

Յ Ե Ր Ե Ք Տ ՈՒՆ

Միայն քո մասին,
Անձրև՝ ջերմաշիթ,
Յեղ քո, աքասի,
Հիասքանչ ժպիտ...

Յես այս պոեզիան
Ողձում եմ անկամ,—
Զլինե՛ք հետին,
Զլինե՛ք քանքար...

Ո՞վ, ո՞վ կսանձի
Այս յերգուն ահը.
— Թող քեզ նախանձի
Գուրգեն Մահը...

1926

Գ Ա Ր Ն Ա Ն Ա Ն ՈՒ Շ Դ Ե Մ Ք Ո Վ

Գարնան անուշ դեմքով,
Գարնանային սեր, —
Սիրում եմ քո յերգող
Քնքշանքդ լուսե:

Յես սիրեցի քո մատը
Բարակ, լուսնեղբրիկ,
Ու յերգս, վոր գունատ եր —
Հրահուր ե նորից:

Հրահուր ե նա նորից,
Անամոլ ու պայծառ,
Ժպտան, ժպտան, մորենի,
Անուշ իմ ծառ...

1926

ՆՈՐ ՅԵՐԳԵՐ

Նոր յերգեր կան, նոր յերգեր,
Յեղ սիլ ե այն յերգելու,—
Նրանք համր են ու կերկեր,
Անկար ե հլու:

Նոր հունդեր կան հողի տակ,
Նոր ծաղիկներ կան բացվող,
Նոր մանուկներ սպիտակ,
Նոր առավոտ ու նոր ցող:

Մերտ իմ, պայծառ յեղիբ դու,
Աշխարհի դեմ, կյանքի դեմ.
Պարզ յեղիբ ե իմաստուն,
Թող յերգ լինի ժպիտըդ:

Բեզ ե լուսւմ յերկիրդ
Նոր արևի տակ դարթուն,—
Վողջճւյն քո նոր յերգերին,
Վողջույն հողին ու մարդուն...

1926

ՎՈՂՋՈՒՅՆ ՔԵՁ, ՈՐ...

Սարսուռ հավախոսի,
Սահուն սահանք,
Սուս՝ խոսում ե սոսին,
Սոսին բարձրահասակ:

Ահա սարի ուսին՝
Հիսուսի պես սառ՝
Սպիտակեց լուսինը,
Սուզվեց վորպես սուզակ:

Յերգեց հովը—դուսան,
Ժպտացին դաշտ ու ձոր.
— Վողջճւյն, արև ու սար,
Վողջճւյն քեզ, սր...

1926

Յես ինչո՞ւ քեզ սիրեցի, —
 Բուրում ես հողի նման,
 Վրնջում ես վորպես ձի,
 Ու լացըդ խրխինջ թվաց...

Գո լացի, դարձի համար
 Փռել եմ յերգի սեղան.
 Յեկ, վերջին, վերջին ամաս,
 Զմեռը հաշվենք չեզաճ...

1926

Հ Ո Ր Գ Ո Ր

Բարդիներին յես ասի.
 — Ձեմ սիրում ել ձեզ.
 Ինչ յերգեցի ձեր մասին,
 Ծաղրեցին, իսկ յես —
 Ել չեմ ուզում զուր հուզում,
 Ել չեմ ուզում ձեզ...

Նրանք զվարթ խշշացին,
 Ժպտացին վճիտ.
 — Խենթ, — ծիծաղեց աքասին,
 Ասաց. — միամիտ...

Յերբ քնած ես լինում դու —
 Գալիս են նրանք,
 Յերգվում են սեր ու խոստում,
 Խնդրում են կրակ...

Յերգի՞ր յերգըդ, ս՛վ պոեա,
 Յերգերըդ ամաս,
 Մրդերի պես հոսաովեա,
 Կրքերի պես վառ:

Առատության յեղջյուրից
 Մենք քեզ ավինք այն,
 Ինչ չենք ավել վոչ վոքի,
 Ինչ քոնն ե միայն:

Իսկ դու թողած քո յերգի
 Նորքը բերքառատ,
 Մասհույզ ու յերկմիտ
 Նայում ես նրանց:

Մոռացել ես դու անկամ,
 Գանձերը թողած,
 Ու վնչ մի, վնչ մի անգամ
 Ձեռքդ չդողաց:

Յերգիք, յերգը յերգիք,
 Յերգերը — ամառ,
 Մրգերի պես հոտավետ,
 Կրքերի պես վառ...

1926

Ս Ի Բ Ե Լ Ի Ա. Խ.—Ի Ե

Յես յերկրիս ձայնը լավ եմ լսում—
 Ու պարզ տեսնում եմ նրա ուղին.
 Նա վոչ նժույզ է, վոչ էլ մառբ,
 Յե՛վ վոչ դառանցանք հին ու դեղին:

Յերկիր, դաշտային կարմիր ծաղիկ,
 Քո արմատները բերբի հողում,
 Յերկիր, դու շնչող, կապույտ թախիծ,—
 Քո բացվող որն է իմ դեմ շողում...

Դու բարձրանում ես վորպես մերած,
 Բայց հոգի ունես, ունես մարմին,
 Հառնում ես անա վորպես հրաշք
 Յե՛վ վորպես արև՝ հրակարմիր:

Հառնում ես մայթում, հանդում, արտում
 Յե՛վ խրճիթներում այս հողեղեն,
 Ու տարածվում ե ուժը մարդու
 Հողերիդ վրա՝ վորպես հեղեղ:

Ծլում ե յերգը նոր ու բյուրեղ,
 Ու կբացվի նա ու, վորպես վարդ,
 Զվարթ յեռանդով պիտի բուրե
 Հողերի վրա նոր, արգավանդ...

Յերկրային ներկա, նոր առավոտ,
 Նոր ծիլեր՝ աճող բերրի հողում,
 Իմ յեղնող յերկիր, նոր իմ կարոտ,
 Քո բացվող սրն ե իմ գեմ շողում:

1929

Մ Ր Գ Ա Ս Ա Ն

Սիրել եմ մի ուր քո յերգը,
 Յերգերիդ կսկիծը նկուն, —
 Յերգերիդ գառնանուշ բերքը
 Մարգերում, դաշտում, իմ այգում:

Մարգերում, դաշտում և այգում
 Լացել ե քո խուլ անձրիք,
 Աւ յես, պարտիզդան իմաստուն,
 Թողել եմ հին այգու սեմը:

Յերգել ուրիշ մի արևի տակ,
 Ուրիշ մի արևով տարվել. —
 Իմ յերգի նոր մրդաստան,
 Իմ յերկրի նոր արև...

Հին հնձան, ո՛ր լքված դու տուն,
 Հին յեղջյուր՝ մի շնչով ընկած...
 — Իմ յերգի յերկաթե հարուժյուն,
 Վոր դափում ես ծանրաստրակ...

1930

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Նայիր հիմա՝ յերկինքը,
 Նրա կամարին. —
 Այս յերգը յերգեց ինքը՝
 Գուրգեն Մահարին:

Դու մոռացար յերգերդ,
 Մոռացված արդեն,
 Ինչպես անցած հերկերի
 Ժանտաթերթ վարդեր:

Յերգ յերգեցիր ու անցար,
 Բայց վաղը, գիտեմ,
 Կհամարվի այն հանցանք
 Ու կլինի քեն:

Ու վոչ-վոք չի բարձրանա,
 Վոչ վոք չի ասի,
 Վոր քո հոգում կար և՛ մահ,
 Յե՛վ լույս — միասին:

Վոր այդ քո սիրտն եր տխուր՝
 Ուրի՛շ տխրությամբ,
 Շուրջը որե՛ր հրահուր
 Ու յեղնոց մի կյանք:

Նայիր հիմա վերևը՝
 Ամպերին այն գորշ:
 Տես, յեղնում ե արևը,
 Վորպես վառ դրոշ:

Այդպես կանցնի քո յերգի
 Թուխպը առաջին,
 Դու կձուլվես կրկին
 Կյանքի շառաչին:

Ու ել վոչ վոք չի հիշի
 Յերգերիդ մութը մաշող,
 Վոր յեղամ ծանր գիշեր
 Ու մշուշ անշող:

Կերգի յերգիդ յերկինքը՝
 Վորքան համարի,—
 Այս յերգը յերգեց ինքը՝
 Գուրգեն Մահարին:

Յ Ե Ր Գ Ի Պ Ե Ս

Անչար ե իմ հոգին, — յես հիշում եմ կրկին
 Միրով, ուրախությամբ, պատկերը քո անգին, —
 Ու այս որվա նման անեզր, անկրկնելի
 Անչար ե իմ հոգին...

Անչար ե իմ հոգին քո շարության ղիմաց,
 Նույն առուն ե զնդում անառների խորքից,

 Անչար ե իմ հոգին:

Իմ նոր դարնան հմայք, նոր անյգ, նոր ցնորքի,
 Մայիսների սիրով կարճա եմ քեզ հիմա,
 Տնւր հունդերդ ասողե իմ նոր, բերրի՛ նորքին, —
 Անչար ե իմ հոգին:

Տ Խ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Տխուր իմ արտություն,
 Անուշ իմ ցավ,
 Մտար դու իմ սրտում
 Ու ել չանցար:

Բնդդ իմ սևազետա,
 Հարազատ քույր,
 Հնազանդ եմ քո դեմ,
 Յեղ կույր, և կույր:

Համբուրում եմ անա
 Մատներդդ պաղ,
 Բո զիրկն ինձ համար
 Եիրիմ ու բաղդ...

1926

Կանցնի իմ չերգը գարնան ամպի պես,
Ցողեր կմնան խոտերի վրա,
Մեռնող մրմունջներ, վոր լով դ՛ու գիտես:

Ախ, շուկներն ել կհանգչեն մի որ,
Վորպես մանկական որոցքի վրա
Մայրական ժպիտ, մայրական որոր:

1926

Դեռ գնդում ե, գիտեմ,
Հայն սավերում ձեր տան
Առուն չերգուն ու մեղմ,—
Դեռ չերգում ե հիմա:

Բարդիները չերկար,
Ծաղկանոցը գեռ թարմ...—
Զրի նման չեկա,
Զրի նման կերթամ...

1928

Չանձրացել ես գինուց, սերից,
Ախ, ապրեցիր հազար տարի.
— Յերգիր, պոեա, չերգըդ բարի:

Իրիկնային մեղմ լույսերի
Շշուկներն են կանչում «արի».
— Յերգիր, պոեա, չերգըդ բարի:

Կուրեր բերեց հովը հեովից,
Հասավ, պատմեց կապուչա սարին.
— Յերգիր, պոեա, չերգըդ բարի...

1927

Արտերին նորից,
Արտերին նորից
Իջավ չերեկոն.
Յերան հովերը թեթև չերգերով,
Իջան սարերից ու անցան գետով:

Ջուր ես քաշում դու
Իմ հոգու հորից,
Սորունկ ջրհորից: —
Արծաթ դուլչի մեջ աստղերն են խաղում,
Լուսինն է մեռել կապուչա դագաղում...

1926

Մ Ր Գ Ա Ն Ա Ս

1

Ճոնչում են ծառերը
Ու հողը վարարել է,
Արևը, վոր վառվել է՝
Ասես միբղ է արևն ել:

Իմ յերկիր պայծառ ու վեհ,
Վողջ յերգերս քո մեկ մազին.
Հասել է անա ձեռքս
Քո կարմիր մրգահասին:

2

Մրգահաս է կյանքը մեր,
Սճում է ուղեշ-ուղեշ,
Նոր ուժն է կյանքին բերել
Կամք ու սիրտ, յերգ և ուղեղ:

Բարձրանում է նորն անդուր,
Մկաններ են դալարվում,
Յեղնում է նորը խանդով
Ու հոսում առու-առու...

1930

Ի Ս ՅԵՐԿՐԻ Մ Ի ՃԱՄԲԻ ՎՐԱ...

Իմ յերկրի մի ճամբի վրա
Բարձրացավ յերգերիս բարդին,
Նոյեմբերը ջրեց նրան,
Նոյեմբերը կոչեց կյանքի:

Շատ անգամ ձիյերն անցան,
Հանելով գորշ փոշի ու տոթ,
Կըծեցին ճյուղերն իր կանաչ,
Ու թողին բունը — վերքատ...

Հիմա բարձր են նրա ճյուղերը,
Չի հասնի նրանց վոչ մի դունչ,
Ել իզուր են նրանք նայում վեր,
Յեղ իզուր, իզուր են խրխնջում...

Կկտրեն բարդին սղոցով,
Կշինեն սյուն մի անգրավ,
Քաղաքի բանուկ փողոցում
Կկանգնի նա հողում խրած...

Ելեքտրո — առավոտներից
Կզա նսր մի պոետ անաստո,
Յեղ լամպն իր ելեքտրո- յերգերի
Կզնի ճակատին իմ պարզ...

Սպիտակ, սպիտակ բարդի,
Իմ յերկրի մի ճամբի վրա. —
Նոյեմբերը քեզ կոչեց կյանքի,
Նոյեմբերը ջրեց նրան...

1929

Զ Ա Ր Թ Ո Ն Բ

Թաց՝ բուրում ե այսոր
 Հողը, գետի հունը,
 Բացվում ե որը նազով, —
 Գարունն ե, գարունն ե:

Բարե,—ասում եմ յես ինձ, —
 Ասա, ի՞նչ ես զգում,
 Յերգիր խորունկ քո ներսից,
 Վարար, վարպես Զանգուն:

Յերգիր, ե այնպես, այնպես,
 Վոր լսողն զգա
 Խնդությունը քո կեզ
 Յեզ աճունին այս զգաստ:

Յերգիր, յերգիր քո յերպը,
 Որերը քեզ հեռ են,
 Վարդ ե հիմա վերքը,
 Իսկ դու՛ պոետ ես:

Յերգրդ լինի թող մի նեա
 Որերում այս խոր,
 Դու նճր յերգրի պլոններ,
 Կոչումը՝ նոր:

1929

Ո Ր Ո Ր Ո Ց Ի Յ Ե Ր Գ

1

Ննջիր, մանկիկ իմ,
 Ննջիր հանդարտ,
 Որը հանգիստ ե,
 Որը խաղաղ:

Հայրդ գալու յե
 Յերկու տարուց,
 Գնաց յերկրին մեր
 Պարաքը տալու:

Մեծացիր դու ել
 Արև՛ իմ նոր,
 Դարձիր հզոր ե
 Կարմիր զինվոր:

Բայց յերբ լինես դու
 Քսան տարու, —
 Կերգե յերկրում քո
 Ուրիշ դարուն:

Ուրիշ համիկներ
 Կծաղկեն վառ,
 Քեզ չի հասնի ել
 Վոչ մի խավար:

Կլինի հինը
Վաղուց քանդված·
Ննջիր, մանկիկ իմ,
Ննջիր հանդարտ...

2

Ննջիր, մանկիկ իմ,
Որն է մթնում,
Այսօր հանդիսա քեզ,
Վաղը՝ խնդում:

Լուսինն է խոսում
Հասկերի հետ,
Դաշտում հոսում է
Լուսաջուր դետ:

Լինի վարձը թող
Բախտը քո նոր,
Ծովի նման ու
Ծովի պես խոր:

Հայրդ գալու յե
Յերկու տարուց,
Գնաց յերկրին մեր
Պարաքը տալու...

1928

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի Կ

Փ Ո Ք Ր Ի Կ Լ Ա Ր Ի Ա Ր Ա

Զարթիր, իմ աննւշ, իմ հոկտեմբերիկ,
Մեր լնձի որերի դու գարնան ծաղիկ,
Գիշերը անցավ, արև է հիմա
Բո արևավոր աշխարհի վրա:

Բո հայրը մեռավ դաժան պայքարում,
Վոր բացվեր այսօր կանաչ մի գարուն,
Բո հայրը մեռավ դիրքերում համառ,
Վոր մի նժր արև բացվեր քեզ համար:

Բեզ համար, ինչ վոր գարուն և արև,
Խանդավառ յերգեր, խնդություն հրե,
Յերջանկության որ, վարդեր ու վարդեր,—
Զարթիր, իմ աննւշ, գարուն և արդեն:

Զարթիր, իմ աննւշ, իմ հոկտեմբերիկ,
Մեր լնձի որերի դու գարնան ծաղիկ:

1925

Յ Ե Ր Գ Ս Ր Տ Ա Ռ Ռ Ի Զ

Խորհրդային արտերի
Վոսկի հասկերն եմ սիրում,
Սրեւ մեր մայրենի,
Այգեստանները հեռու,
Այգեստանները բերրի,
Այգեստանները զվարթ,
Բույրը գարնան վարդերի
Ու վոսկեվոր հանդ ու արա:

Ու բազուկը շինարար,
Ու բազուկը ստեղծող,
Ուժը գարնան պես վարար
Ու հեղեղի պես հզոր:
Ու նորաշեն շենքերի
Հայացքը պարզ ու լուսե,—
Շողքը մանուկ դեմքերի,
Գարնանային յերգ ու սեր:

Խորհրդային իմ յերկիր,
Խորհրդային հարազատ,
Թող չշահի քո դեմքին
Վնչ մի ոտար խարազան,
Վնչ մի բռունցք բռնակալ,
Վնչ մի տիրող ու հարկամ,
Վոչ վոք չի տա քեզ դրախտ՝
Վոչ հերոսը, վոչ արքան:

Բարձրացիր, վեհ իմ յերկիր,
Ու շարքերով, ուս ուսի,
Կովկասյան սեպ լեռներին
Մինչև տայգան հյուսիսի,—
Մինչև Վոլգան լայնահուն,
Կրեմլը մինչև անգրավ,
Հրազդանից մինչև Դոն,
Մինչև միգոտ Անխրադ,—

Թող վողջուսեն քո յեկքը,
Սուլիչների յերգը խոր,
Բաղաքների համերգը,
Ավանները հեռավոր,—
Շառաչը նոր ափերի,
Ու վոսկեվոր հանդ ու արա,
Այգեստանները բերրի,
Այգեստանները զվարթ:

Ա Ն Ա Ն Ա Կ

Դու հիմա հեռու յես, գիտեմ,
 Հուշերիդ մարդերը—ցանցառ.
 Բայց գիտե՞ս, դեռ վառվում ե քո դեմ
 Իմ սերը—պայծառ ծիածան:

Յե՛վ լացս ծունկերիդ վրա
 Հիմա արտեր ե վոռողում.—
 Յե՛վ վորքան թռչուններ մեռան
 Այն հեռու որերից քո հոգում...

Անանակը բլբի վրա
 Շողշողուն գույներով թովիչ.
 Դու սիրով նայեցիր նրան
 Յե՛վ սիրով աչքերից թողիր:

Իսկ հետո ամեն ինչ նսւյնը.—
 Զրագաց, և՛ արտ, և՛ առն...
 Հացենուն՝ ազուավի բույնը,
 Ու զանգի զոզանջը տրտում:

Դու ասում եյիր.—իզուր ե,
 Պոեար չի կարող սիրել.
 Պոեար աշունքվա ճյուղ ե,
 Իր սերը՝ հողմավար տերև...

Իմ անուշ, անուշ իմ համառ,
 Դու յեղար անչափ չար ե խիստ,—
 Տարիներ են անցել անա
 Ու յես քեզ սիրել եմ միշտ...

Գառներ են մայում իմ հոգում՝
 Սպիտակ, սպիտակ ու թե՛ն,
 Քո կարոտն են նրանք յերգում
 Ու լիզում մտուբը փայտե:

Իմ խոնարհ ու յերգուն յերկրում,
 Յես՝ պոետ ու քաղաքացի,
 Խնամում եմ պայծառ ու բերքուն
 Յերգերիս քնքուշ աղացին:

Յե՛վ գիտեմ, վոր պայծառ գալիքին
 Ինձնից ել կհյուսավի մի շող.
 Այս փոխվող հուններին անագին,
 Ուժերին անհուն ու քշվող...

.

Անանակը բլբի վրա
 Շողշողաց գույնարով թովիչ,
 Սիրով գու նայեցիր նրան,
 Յե՛վ սիրով աչքերից թողիր:

Իսկ ինձ մտա վոչինչ չի փոխվել,
 Հիշում եմ խոսքերդ՝ վարանած.—
 «Դու միշտ ել կիսատ ես թողել,
 Կսիրես ու կմոռանաս...»

ՅԵՐԿԻՐ ԻՄ, ՅԵՐԳ ԻՄ ԱՆՈՒՇ...

Դաշտերում սեզ ու ծաղիկ,
 Հյուղերում վորքան մանուկ,
 Դալիք իմ, լուսե գալիք,
 Յերկիր իմ, յերգ իմ անուշ:

Փռվում ե իրիկունք,
 Նման ե գորշ մի վարդի, —
 Արևը կրակում ե
 Մոխիրե սարից անդին:

Իմ յերկրի աստղերի տակ
 Դեռ ծնվող վորքան մանուկ, —
 Ո՛ր, յերկունք խո՞ր ու հստակ,
 Յերկիր իմ, յերգ իմ անուշ...

1926

ՈՐԵՐ ԻՄ ՈՐՈՐՈՒՆ, ՈՐԵՐ ԱՆՀԱՆԳԻՍՍ...

Հազար թեղերով կապում եմ ինձ կյանքին,
 Հազար թեղերով՝ խորհրդային գարնան.
 — Որե՞ր իմ որորուն, որե՞ր իմ անհանգիստ,
 Թող վորոնումը ձեր մորմոք չդառնա:

Դու քո հողու աչքով պայծառ նայիր շուրջը,
 Պարզահայաց յեղիր և իմաստուն,
 Հերոսաբար անցիր անցման այս կամուրջը՝
 Առաջավոր մարտի առաջավոր շարքում:

Հերոսաբար անցիր ու թող սիրաբղ, սիրաբղ,
 Վոր ցավում ե աշնան այս թաց առավոտով,
 Զրահավորվի թող այս մարտնչումի բերտով,
 Դալիքների յերգով պայծառանա... ու թող

Կապվի նոր այս գարնան, կապվի հողին, կյանքին,
 Ու թող մորմոքը հին ել յեռ չդառնա.
 — Որե՞ր իմ որորուն, որե՞ր իմ անհանգիստ,
 Հազար թեղով կապված խորհրդային գարնան:

1926

ԱՐՈՎՅԱՆ ՓՈՂՈՅԻ ԾԱՌԵՐԻՆ

Տասնվեցամյա աղջիկների պես
Նրանք պայծառ են, նրանք՝ անուշ,
Հաճախ նրանց հետ զրուցում եմ յես,
Կտամ են նրանք ու գլխով անում:

Գիտե՞ք, ասում եմ, ձեզ հետ միասին
Յես ել անկեցի իմ յերգի ծառը,
Ձեզ հետ բարձրացավ և իմ աքասիին,
Ձեզ նման նա չեւ թարմ ու պայծառ է:

Հետո, ասում եմ, դուք դեռ կերկարեք,
Կդառնաք զին ու սաղարթախիտ,
Ձեր շուրջը ուրիշ վրասներ կպարեն,
Ուրիշ սեր կլինի, ուրիշ թախիծ:

Դուք դեռ այնքան շատ տարիներ ունեք...
Քամին կտանի ձեր նոր հունդերը,
Կփոխվի ջուրը, կփոխվեն հուններն,
Բայց ձեզ կսիրեն նոր սերունդները:

Ժպտում են նրանք թարմ ու լիասիրտ,
Ու յես, նրանց հետ, սրտով պայծառ եմ
— Գիտե՞ք, անուշներ, ձեզ հետ միասին
Յես ել անկեցի յերգերիս ծառը...

1926

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

1

Աստվածամայրն և շրջում
Ձորերում այս խուլ,
Ննջիր, մանուկ իմ վճիտ,
Ննջիր, իմ ախուր:

Վանքն և կանգնել հնամյա,
Վորպես կույր յերգիչ,
Վորի սրինգը մզլած
Ընկել և ձեռքից:

Ու փնտռում ե նա իզուր,—
Ի՞նչ և փնտռում նա,
Միևնուն է՝ վոչ մի ջուր
Ել յետ չի դառնա:

Ու չի դառնա վոչ մի վիթ
Որերից անցած,
Ինչպես վոր չի ամոքվի
Վնչ մի սև հանցանք:

Յեղ այս սայլը՝ վեր պարզած
Բազուկովն իր ջոր,—
Ի՞նչ է, ի՞նչ է աղերսում,
Ապրում և ինչո՞վ:

Որեքն իր գորշ ու անդեմ
Ո՞վ է խռովել,
Ո՞վ է յերգում՝ լալու պես՝
Հեռվում հորովել...

2

Պիտի գն նա, այն նորը,
Նա ծանոթ է ինձ,
Ու քշի այս ձորերից՝
Ինչ ցավ ու թախիծ:

Յերկաթավոր կգն նա,
Վե՛հ ու հրավարդ,
Ու կպարզվի յերկրին այս
Հին ու հնավանդ:

Ու դաշտային առնետը
Կփախչի բնից.
Կշառաչի անտառը,
Կզրկվի քնից:

Ու գիշերվա խավարում,
Կծաղկեն զվարթ—
Ելեքտրական ծաղիկներ,
Ելեքտրական վարդ:

Իսկ հիմա նա յե շրջում
Ջորերում այս խուլ.—

Ննջիր քո լույս մտուրում,
Մանուկ իմ մաքուր:

Դու կզարթնես, կզարթնես,
Յերբ դանդը վանքի
Ղողանջի խուլ տագնապով
Ու վախով կանգնի...

Դու կզարթնես ու շուրջդ
Կժպտան զվարթ
Ելեքտրական ծաղիկներ,
Ելեքտրական վարդ...

1926

Յ Ե Ր Կ Ի Ր

1

Բարձրանում ե քո գեմքը հրաշուշան ու բոսոր,
Մեր դաշտերի վրա լայն — պայծառանում նորից-նոր:

Այստեղ յերկաթը յերգեց, այնտեղ պղինձը ճչաց,
Հնամենի ձորերում կանչեց ահա մի շչակ:

Ո՞ւր են, ո՞ւր են թագնվում արահետները վախկոտ,
Յերբ արշավում են համառ պողոտաները հաղթող:

Պողոտաները հզոր, պողոտաներն անողորք,
Նրանց գեմ վնչ մի տրտունջ, նրանց գեմ վնչ մի բողբոջ:

Թող ծղրիղները յերգեն իրենց յերգը հնամյա,—
Յերկաթավոր իմ դարում վոչ մի յերգ չի դիմանա:

Յերբ արշավում ե նորը, հրավառն ու վիթխարին,—
Ծղրիղները թող չերգեն ու թող լուսինը մարի:

Յերկաթավոր իմ դարում ո՞ւմ ինչ՝ լուսինը կավճոտ,
Ո՞ւմ ինչ՝ խոնավ խորշերում ծղրիղի յերգը տանջող:

Այստեղ յերկաթը յերգեց, այնտեղ պղինձը ճչաց,
Հնամենի ձորերում կանչեց ահա մի շչակ:

Ել ինչո՞ւ յեն թագնվում արահետները վախկոտ.—
Արշավում են ծանրաքայլ պողոտաները հաղթող...

2

Յերկաթավոր մի բազուկ մի նոր աշխարհ ե կռում,
Մի նոր յերկիր ե յերկնում նայերական իմ յերկրում:

Գիտեմ, գիտեմ՝ կախրեն այնքան պուրակ ու լեռներ,
Անտառներում ախուրաչ յեղնիկինքը կմեռնեն:

Թող անտառները վողբան նրանց մահը նորորյա,
Յերկաթավոր իմ դարում նրանցից ի՞նչ կմնա:

Յերբ արշավում ե ծանրը, հրավառն ու վիթխարին,
Յերբ կա պայքար ու կռիվ՝ բազկի, հողի ու քարի:

Հողաշերտերն են դողում ստորերկրյա մի դողով,
Արշավում են, արշավում պողոտաներն անողորք...

Այստեղ յերկաթը յերգեց, այնտեղ պղինձը ճչաց,
Յերեկվա յեղկ ձորերում կանչեց ահա մի շչակ:

Յեվ իզուր են թագնվում արահետները վախկոտ,—
Արշավում են աննահանջ պողոտաները հաղթող...

1926

ՆԱՄԱԿ

ՍԻՐԵԼԻ ԻԼԻԱՅԻՆ

Նույնն է յերկիրը հիմա՝
Արտեր ու վարդեր,
Ննւյն կարտաը հրավառ,
Ննւյն խնդումը թեժ:

Նատած հեռու, հեռավոր
Սենի յեղերքում,
Գիտեմ, անձիր կարտաով
Յերկիրդ ես յերգում:

Գիտեմ տենչերը քո հուր,
Կարտաներդ վրտ,
Գիտեմ, թե ինչ ես խորհում,
Մեժ հողի յեղբայր:

Սրտիում է Սենը,
Գրում ես անքուն,
Ու կարծում ես ե՛ն է՝
Զանգուն է զնգում:

Պարզվում ես գոհ ու հատակ,
Ժպտաով վռսկուն...
Կամուրջների բեռան տակ
Սենն է սրտիում:

1926

ԿԱՆՁՈՒՄ Ե ՀՈՂԸ...

Կանչում է հողը, հողը,
Բուրում է բարի,
Որը լույս է, շող է,
Յերգ է ու կրակ:

Խրխնջում է գարունը
Խրճիթիս գրան,
Այրվում է արևը
Սարի վրա:

Հազար-հազար մոլորված՝
Իմ յերկրից հեռու,
Հազար-հազար որորան,
Հազար առու:

Ո՛ւր էք, ո՛ւր էք, ո՛վ էք,
Ել չկա՞ դարձ.—
Կանչում է ջուրը, հողը՝
Կողերը բաց:

1926

ՀՈՂԻ ՅԵՐԳԸ

Մեծ քաղաքները խու խուժը
Կանչում ե նորից անհանգիստ,
Մշուշում թարթում ե կամուրջը,
Հայացքը հառած իմ հանդին:

Իսկ անդին գյուղերն իմ անթե,
Իսկ անդին հիվանդ մի անհոգով
Հյուղերն են իմ ճամբան բանակը,
Հողերն են դժգոհ մըթմըթում: —

— Բավակահն ե վորքան շրջեցիր
Քաղաքից-քաղաք յերգելով.
Տես, ձեթի ճրագը շիջեկ ե,
Սերմեր են մեռնում հերկերում:

Կոպերիդ տակ կապույտ յերիդ,
Մազերիդ՝ բույրը գինետան,
Իմ կորած զավակ, ել հերիք
Մնաս քո յերկրին ոտար:

Դու ալստեղ ուրիշ կլինես,
Կդանես քո յերգի հունը.
Կսիրես քո նոր յերգերը
Բարձրացող զվարթ սերունդը:

Քեզ ալստեղ ճանաչում են նրանք,
Յերգում են քո նոր յերգերը,
Իսկ դու թափառում ես մռայլ,
Ու նեղ ե թվում յերկիրըդ:

Միևնույն ե՛ վորքան ել փախչես,
Ցնորես քաղաքներ հսկա,—
Քեզ հոգըդ պիտի ճանաչե,
Քեզ հոգըդ պիտի զգա:

Յեվ Հայաստանն ե քո հերկը,
Ուր պիտի յերգըդ զրնգա.
Դու յերգիր, պոես, քո յերգը,
Յեվ պայծառ յեղիր, և զգաստ:

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

...Նույն ամառն է, նույն փոշին... ախ, հասկացիր ինձ
հիմա,

Յեւ լող քեզ եմ վորոնել իմ որերում անխմաց.

Յեւ լող քեզ եմ որորել ցնորքներում իմ լուսե,

Ու արամաթավ քո շնչով՝ իմ այս յերգերը հուզել:

Կգա աշունը դեղին, տերեւներով վոսկեզույն,

Մութ կլցվի իմ յերգում ու անապակ քո հոգում:

Բայց կմտաս դու ելի նոյն փառքով ու թարմությամբ,

Վերջալույսում լողացող գարնանային վոսկե ամպ...

Յեւ յերգերը քո խորունկ ու վերքերդ մանավանդ

Յեւ կպահեմ իմ հոգում, վորպես անխոր մի ավանդ.

— Յերկիր, յերկիր իմ լուսե, ընդունիր հուրը հեռին

Ու յերգերը փերուզե քո գանգրահեր պոետի...

1925

ԳԱՇՏԵՐԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ

Տեսնում եմ դեմքըդ շուգունե,
Քայլերըդ յերկաթածանր,
Գիշերըդ դանդաղ շողում է
Ջրերի վրա բարձրացած:

Գալիս ես, գալիք իմ, և ահա
Գոփում ես հողի թմբերին,
Քայլում ես դաշտերի վրա,
Արտերի կողքով անբերրի:

Ձգում եմ այնքան մոտիկ,
Վոր կարծես յեղբայրս է ձիավոր,—
Նա, մեջքին ալ-կարմիր գոտի,
Արշավում է դեղին դաշտերով:

Սպասում, սպասում եմ յես քեզ,
Գյուղատան յերկրիս հեռ միասին,
Մութ գոմում բանտարկված խոյի պես,
Կարոտում եմ հզոր քո լույսին:

Ձայնում ես դաշտերի մուժից,
Այդ դու յես քո նոր յերգերով,
Յեւ տեսնում եմ բարձրացող փոշին,
Տեսնում եմ՝ տալիս ես գրոհ:

Յեւ զգում եմ այնքան մոտիկ.—
— Յեղբայրըս, յեղբայրըս ձիավոր,
Կապել ես ալ կարմիր գոտի,
Արշավում ես դեղին դաշտերով...

1925

ՓՇԱՏԵՆԻ

1

Տեսել ես շատ անգամ,
Տեսել շատերին,
Ճածբի յեզբին կանգնած
Փշատենի:

Նախիրներ ես տեսել՝
Դեղին, թողոտ,
Հողնած հնձվոր ու սել՝
Արախց դարձող:

Ու մնացել ես մենակ
Տխրությամբ ջինջ,
Յեկեկ, անցել են նրանք.—
Բեզ լ՛հնչ, քեզ լ՛հնչ...

Կեղնի արևը հրակ
Ու կիջնի կույր,
Մոխրահեր ու մուսյլ
Կմնաս դու...

Դու կձգվես լուսնին
Ծաղկուն ու նայ,
Յերբ լեռների ուսից
Բարձրանա նա:

Ու կնայես նրան
Սառն ու արթուն,
Կեղնես մի վտտի վրա,
Կպարես դու:

Դաշտում մեկը կարի
Մահու ուրազ,
Բայց կպարես դու անվիշտ
Ու կենսուրախ...

2

Փշատենի անհույս,
Անհուշ իմ ծառ,
Ահա որե՛ր անուշ,
Որեր պայծառ:

Իմ յերկրի հանդերում
Վոսկի հասկեր,
Կյանքը, կյանքը խնդուն
Վանդք ե, վանդք ե:

Վրնջացող ձիեր
Խճուղու վրա,
Խփել ե արևը
Նարնջե վրան,—

Յեվ դաշտերից մշուշոտ
Գծով ուղիդ,
Ահա դալիս ե շող-շող
Յերկաթուղին:

Ա՛խ, փշատի իմ թուփ,
Յերգ իմ վարդե,—
Անձրեի տակ ժպտուն
Վարդե՛ր, վարդե՛ր...

ՅԵՐԿԵՐ

1

Յես ինձ յերգում եմ քո մեջ, յերկիր,
Իսկ քեզ — անկաշկանդ իմ հույզերում,
Յեզ զբանից չե՞, վոր իմ յերգը
Այսքան հորդուն ե ու հորձանուտ:

Դրանից չե՞, վոր ջերմ ե շնչում,
Ինչպես կեսորվա այն քամին ե,
Վոր, չն, թոչնւմ ե դաշտի միջով...
Յեզ այն, վոր խորն ե, մարդկային ե...

Այս լեռնաստանի բավիղներում,
Ու մեր դաշտերում արամաթախիծ,
Ու գյուղերում մեր համր ու ներում, —
Իմ յերգը անգոր ու կատաղի...

Իմ յերգը պետք ե լիներ դրոշ,
Լիներ սավառնակ, կամ հրետանի,
Քո որերի պես պարզ ու վորոշ,
Յեզ վոչ թե դաշտում ընկած քամի...

Ու յես դգում եմ, զգում եմ, ս,
Տխրությունը քո՝ սրտին իմ մտտ,
Ու իմ հույզերում յերգուն ու նոր
Խարանվում ես դու, վորպես ամոթ...

2

Յերկիր հյուղերի, պանկ հասկե,
Յեթե պետք ե քեզ անվերջ դովել —

Յես ել կդանեմ վոսկի խոսքեր,
Խոսքեր, վոր չունի վոչ մի պոետ...

Յեզ միթե այդ ե քեզ հարկավոր,
Յեզ կարծա ես դու նրան միթե՞
Հաճույքին այդ խեղճ ու անկարող,
Ու խնդությանն այդ սին ու թեթե...

Հիվանդ ե հոգիս քո ցավերով,
Յերկաթի սերը տանջում ե քեզ,
Կարոտս խորն ե ու ավերող,
Իսկ քո թևերին աթար ու դեզ...

Դեռ դորշ հյուղերն են քեզ դուրդուրում,
Ախ, այդ թախիծն ե ինձ ողակել —
Ահա թե ինչու իմ յերգերը,
Չեն կարող բարձր աղաղակել...

Յես շղթայված եմ քո ներկային,
Յերկիր հյուղերի, սեր իմ վառման, —
Դանդաղ սայլերին քո յերկանիվ,
Քո ջրին, հողին ու քո գարնան...

Քո խոփն ե կիսել սրտիս հերկը,
Քո բույրն եմ շնչում մտտ ու ծանոթ, —
Յեզ զբանից ե, վոր իմ յերգը
Այսքան հորդուն ե ու հորձանուտ...

1925

Ա Ռ Ա Վ Ո Տ

Հեռվում հռնդում են խանդուն հանդերը,
Անթիվ հատիկները ճայթում են հողում,
Արևածաղը կարմիր հագել է
Ու կարմիր շորերով է շողում:

Մշուշներ, մշուշներ ծանրաթև, դառնաթուփ,
Մշուշներ դարանած ձորում ու հովտում,
Ու յեղներ բառաչող, ախ, յեղներ արնաթոք
Ու համաճարակ սպիտակ հոտում...

Բայց յեղնող նոր ուժը մի խրամ հաղթել է,
Մոտենում է հաստաա ու ահեղ շողում,—
Ահա հռնդում են խանդուն հանդերը
Յեվ անթիվ հունտեր ճայթում են հողում...

1925

Ե Ս Գ Ա Ր ՈՒՆ Ք Վ Ա Պ Ե Ս

1

Ես գարունքվա պես,
Ես գարունքվա պես,
Ծաղկել է յերգըս
Ես գարունքվա պես:
Պարզել եմ ձեռքս,
Պարզել եմ ձեռքս
Ու կանչում եմ քեզ՝
Ես գարունքվա պես:

2

Ես գարունքվա պես
Ելի նոր ես գու,
Ես գարնան ել, տես,
Դու յես իմ սրտում.
Ցանած իմ նորքը,
Ցանած իմ նորքը,
Տես, կանչում ե քեզ
Ես գարունքվա պես:

3

Ազիզ մնա, ջան,
Ես գարունքվա պես,
Ազիզ մնա, ջան,
Չանես սևերես,
Բուժել ես վերքըս,

Հուզել ես յերգըս,
ես դարունքվա պես
Քհնն են յերգերըս:

4

Չյունհալ ես, ջուր ես,
Հարա յես տալիս,
Գարուն ես, քնայր ես,
Գալիս ես, դալիս,—
Կանգնել եմ ահա
Իմ սեմի վրա,
Գալիս ես, հյուր ես,
Մայիս ես, մայիս:

5

Բացել եմ դուռը
Կրքնկնի վրա,
Սփել եմ դռանը
Կարոտի վրան,—
Քո անուշ բույրը,
Փայլը հուրհրան—
Քնարի վրա,
Աշխարհի վրա:

6

Ծաղկուն ծառերից,
Ծաղկուն ծառերից,
Վողջունում եմ քեզ
Ծաղկուն ծառերից:

Յես ինչո՞ւ այսպես
Անթափանց դարձա,
Յես ինչո՞ւ, ինչո՞ւ
Քեզ չհասկացա:

Կանգնել եմ ահա
Սանդաղատ ու վեհ,
Հովերն են բարակ
Սաղում վար ու վեր.
Վողջուն քեզ, չեղկի՛ր,
Վողջուն քեզ յերգիս
Փառքի սարերից,
Փառքի սարերից...

1929

ՆԱՎԱՀԱՆԳՍՏՈՒՄ

Մեր շոգենավը հզոր կողերով
ձեղքում եր ջուրը՝ դեկը—խմաստուն.
Մենք յեկել եյինք փերից հեռու,—
Բեկ հանդիպեցի նավահանգստում:

Դու կապույտ շորեր ունեցիր հագիդ,
Անվրդով՝ ծովի կապույտի նման.
Աչքերիդ մուժը անկուիլ կյանքի,
Ու անուշ հանդիստ կողերիդ վրա:

—Գնանք, —ասացի, —թովիչ ե ծովը,
Այնտեղ կուիլ կա, մահ ու հաղթանակ,
Յեկ ու ամրացիր պաշարի բովում,
Շարքերում մեր կուռ ու յերկաթակամ:

Դեռ շատ ճանապարհ ունենք գնալու,
Ու ծովը դեռ շատ վտանգներ ունի,
Յեզ մի՞թե, մի՞թե քեզ չի՞ հմայում
Մեր հաղթանակի փոթորկոտ ուղին:

Յեզ ի՞նչ ունես դու փերում այս քար,
Հանգստում այդ համը ու անհյուրընկալ.
Իսկ ծովը, ծովը— այնպես խելազար,
Այնքան խմաստուն ու այնքան հանկարծ:

Ու դու նայեցիր ինձ լուռ ու հանդիստ,
Ախ, քո հայացքից լուռ մի վերք միաց.—

Դու կապույտ շորեր ունեցիր հագիդ,
Անվրդով՝ ծովի կապույտի նման:

—Շղթայված եմ չես այս հովիտներին,
Հավիտենական այս բախտից անդոհ,
Ու պիտի ապրեմ, հրամանով վերին,
Իմ անուրախ ու սրտամաշ կյանքով:

Յես պիտի ապրեմ մշուշում այս լուռ,
Այս հանգստում ու նավահանգստում,
Ել վոչինչ չունեմ չես կյանքին տալու,
Կյանքն ել չի ավել ինձ վոչ մի խոստում:

Սուլիչը սուլեց:—Լսի՛ր, ասում եմ,
Ո, վոչինչ չկա վորոշված վերուստ.—
Յեկ, դարձիր ծովի անսեր ցասումը,
Յեկ, դարձիր մարտիկ, բնկեր ու հերոս:

Կհասնենք մի որ նոր նավահանգիստ,
Կողջունենք նրա փերը չերահ,
Կզգանք բերկրանքը լուսավոր կյանքի,—
Թ՛քի՛ր հանդստիդ նշենու վրա:

Յերկրորդ սուլիչը:— Դու գնա, —ասիր, —
Կարող ես դու չել ուշանալ ծովից,
Յես շղթայված եմ այս կույր չերազին,
Հիշիր, վոր այստեղ մի դժբախտ թողիր:

Իսկ չես կհիշեմ, քանի վոր դեռ կամ,
Քո հայտնութունը անդին ու բարի,

Յեւ աչն, վոր ծովի թարմությամբ չեկար
Յեւ իմ որերը անհանգիստ արիր:

Յերրորդ սուլիչը: Տեսնում եմ՝ անբառ
Պարզում ես ձեռքդ թեթև և բյուրեղ,
Դու թողիւր, վոր քեզ դրկեմ քնքշաբար
Ու թաց աչքերիդ մութը համբուրեմ:

Ել մնաս բարձի, անհոճ նշենի,
Նավահանդատին շղթայված իմ սեր,
Մնացի՛ր կապված հովտային շևին,
Ինչո՞ւ իմ կանչին սիրաբոց չլսեց:

Շողենափն անա ծովերի հանդեպ
ձեղքում ե շուրք, դնում և սուաջ.—
Ախ, կարող ելիր լինել դու ինձ հետ,
Բայց դու մնացիր, մենակ ու ստոած...

...Կզան մակուշկներ, կզան նոր-նորեր,
Նոր-նոր ընկերներ, վորոնք ուշացան,
Դու միշտ կարող ես հովիտը թողնել,—
Իմ սիրտը չերբեր քեզ չմոռացալ:

Ու նոր, նոր հասնող մակուշկների մեջ
Յես քեզ կփնտռեմ կարոտով ուժատ,
Իմ կորած ընկեր, շղթայված իմ սեր,
Հին հովիտների քնքշաթերթ շուշան...

1926

Մ Ո Ր Ս Ն Ա Մ Ա Կ Ը

(Ն մ ա ն ու բ յ ու ն)

Կարող ես այս անգամ ել չլսել մորդ,
Կարող ես արհամարհել իմ նամակը,
Սեանց աչն ել սիրաս անամոք ե. —
Վտակորին և հասել դանակը...

Սիրելի իմ Գուրբա, արդեն ձմեռ և, ցուրտ,
Ու հողմը վշտոտ յերգում ե դաշտերում,
Բայց յես հավատում եմ, վոր մի որ կզատ դու,
Դժվար և կորուստիդ մտքի հետ հաշտվելը:

Սուրենը հիվանդ եր, ու սուր ել հագում եր,
Թողեց տալարանը, թողեց ուսում,
Ես ցրտին որերին նա արև եր յերագում,
Ու Մոցսպը նրան ուղարկեց Սուխում:

Իսկ փոքրը, Սորենը, գրում ե շարունակ,
Սեռքում սիրտս սրտալի խոսքով.—
— Սիրելի իմ մայրիկ, յերբ բացվի դարունը,
Կգրեմ՝ յեկ ինձ մոտ՝ Մոսկով:

Յերկու յեղբայրներդ ել չարքաշ բանվորներ են,
Դատում են որական ութ ժամ,
Ճակատի քրտինքով պահում են իրենց մորը,
Յես արդեն հիվանդ եմ, ուժատ:

Իսկ դու հման ես, ինչ ես, ինչին ես ծառայում,
Միրելի իմ Գուրինս, և հուր ե քո բունը,
Մինչև յեբբ լեռից վար հոսե քո առուն,
Չե՞ վոր դու քո տան տերն ու հարկատուն ես:

Այստեղ դու կարող ես ծառայել բանկոպում,
Կամ լինել Հայաստան հաշվետար,—
Վոր շինես հայրական հյուրընկալ քո առունը,
Վոր բախտդ լինի անվթար:

Դրկիցները քեզանով ինձ յերնեկ են տալիս.—
— Բանաստեղծ ե զավակդ, նրան ճանաչում են,
Կարդում են նրա յերգերը սրտալի,
Ու համբավը նրա որ որին աճում ե:

Իսկ Կարոն, ընկերդ, որ-որին բացվում ե,
Դարձել ե Շրջկոմի աչքի լույսը,
Վանքի պես լեցուն խնդում ե նրա առունը,
Միրելի իմ Գուրինս, լսում ես...

Եզուց ել կրերի լուսնի պես մի աղջկա,
Վոր իր մոր ձեռներին շուր լեցնի,
Կապրեն միասին, յերջանիկ, անչկա,
Հարգանքով, սիրով փոքրի ու մեծի...

Իսկ դու դարձել ես թափառիկ հրեա,
Իսկ դու մտնում ես ինչպես հանդիպի,
Միրելի իմ Գուրինս, մինչև յեբբ քո մայրը
Նայի կայարանի ամայի ճամբին...

Արդեն ձմեռ ե, ցուրտ, գնել եմ տաս փութ փայտ,
Նստում եմ կրակի դեմ, կարում ու հաշվում,
Վոտքիս սակ մուտում ե մեր կատուն կարմրաթայտ,
Իսկ բուրբ վշտոտ կաղկանձում ե դաշտում:

Իսկ բուրբ ծեծում ե ձյունածածկ պատերը,
Մլավում ե անտեր դռների վրա,—
Միրելի իմ Գուրինս, մինչև յեբբ իմ սերը
Արտիդ դուռը թակի այն բուրբի նման:

Մի որ ել յես կարող եմ ընկնել անկողին
Ու մտնել մայրական իղձերս անկատար,
Լոկ կատուն կլինի հուղարկավորն իմ,
Ու հողմը կանե պատարագ:

Բայց յես հավատում եմ, վոր մի որ կգաս դու,
Դժվար ե կորուստիդ մաքրի հետ հաշտվելը,
Միրելի իմ Գուրինս, ձմեռ ե արդեն, բուրբ,
Ու հողմը վշտոտ յերգում ե դաշտերում:

Ու հողմը ցրտաշունչ դաշտերի վրա
Մարքում ե ձյան պտույտ, չարքի հարսանիք,
Բարդենին յերգում ե վորպես քահանա,
Վորտում ե քամին ձյունե պարսատիկ...

Միրելի իմ Գուրինս, առն դարձիր, հերիք ե,
Ել հերիք ե մտնես որերդ անդին,
Մինչև յեբբ, մինչև յեբբ կարոտած մայրիկդ
Նայի կայարանի ամայի ճամբին...

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Անուշիկ իմ մայրիկ, ստացա նամակդ,
Վոչ միայն յես, սիրտս ել կարդաց,
Զգիտեմ ինչպես քո ցաված սիրտն ամոքեմ,
Ինչպե՞ս արդարանամ, վոր լինեմ արդար:

Այրող ե մորմոքն իմ, նրանից չես վախճի,
Վորքան ել հանդիմանես քեզ,—
Հետո այն վերածվում ե աղջկա, կամ թախճի,
Աչքերը գերեզմանի պես...

Այդ ամենը հիմա մի անդարձ անցյալ ե,
Սիրելի, սիրելի մայրիկ,
Նոր խինդով այս գարնան վարդեր կբացվեն,
Ու հովը կերզի անտառից:

Դեռ ինձ շատ հարկավոր ե հեռու թափառելը,
Դեռ ինձ շատ հարկավոր ե բարձրանալ ներքե,
Անցյալում յես այնքան կրակներ մարել եմ,
Ու բացել վտաններս այնքան վերքեր:

Ու հիմա գնում եմ կաղ վտտով, բայց համառ,
Ու շփում ծնկներիս արշուճոտ մորթին,—
Դեռ ինձ շատ հարկավոր ե մնալ անմայր,
Վոր լինեմ յերկրիս արժանի վորդին:

Միլիոն մայրերի հետ մենք նորն ենք կառուցում,
Միլիոնով միասին մենք կյանքը հրում ենք,
Փշրում ենք գետերի կաշկանդող սառուցը,
Վորպեսզի բերենք կոմունը:

Խորենը Մոսկովում կոմյերիս բանվոր ե,
Գրում ե նամակներ, ամոքում քեզ...
Դեռ յես շատ պետք ե փոքրանամ քան վոր եմ,
Վորպեսզի դառնամ նրա պես մեծ...

Սիրելի իմ մայրիկ, դու ապրի՛ր քեզ համար,
Ինչքան վոր ապրել ես մինչև հիմա.
Յես հիմա ունեմ մայրեր անհամար,
Վորքան ել լինեմ անթեւան:

Դեռ յերկար յես պիտի մնամ առանց քեզ,
Դեռ յերկար պիտի լինեմ անհանդիստ,
Մինչև վոր նորոգվեմ, մինչև վոր լինեմ յես
Աթժանի վորդին իմ համայնքի:

Գրում եմ, հիշում եմ մեր բակը, տունը,
Ու մորս՝ գլխակոր սեմին նստած.
—Սիրելի իմ մայրիկ, զսպի՛ր բարկությունդ.
Մի որ ել հետ կգամ, բայց արդեն վստահ:

Թող հողը կաղկանձե ու խառնե գեգերը,
Թող վոռնա պատարագ ու ծես.—
Յես քեզնից հեռացա սպիտակ մազերով,
Հետ կգամ պիտներ վորպես...

ԽԱՉՎՈՂ ՔԵՎԵՐ

Կանչիր, կոսնակ, կանչիր,
Քանի դարուն չկա,
Աշնան նման տխուր
Կանչիր, խեղճ իմ թռչուն,—
Քամիներն են յերգում
Մեր դաշտերում ընկած,
Հողը սուս է արել
Ու ասես չի շնչում:

Իսկ յերբ դառնաս նորից
Գալիք նորոգ գարնան,
Ուրիշ որ կլինի,
Ուրիշ յերգ ու խնդում,—
Վոչ վոքի չի հուզի
Քո կոինչը վառման,
Ու յերկնքի ֆոնին
Խաչված կմնաս դու...

Ներքե, վոտներիդ տակ
Աստղեր, վորքան աստղեր,
Վերևումն ել աստղեր,
Ո, աստղային դագաղ.—
Ո՞վ է այդքան լույսեր,
Լույսեր վառել այնտեղ,
Յերեկ գաշտեր եյին
Վոտներիդ տակ ընկած:

...Մուժ կը պատի հետո...
Ու յերկնքի վրա
Աստղերը չեն փայլի
Ու չեն յերևա ել.
Մի անգամ ել կերդես,
Կկոնչաս վհատ,
Ու՛ մոլորած ուղիղ՝
Կշարավես ներքե...

Հիմար, հիմար թռչուն,
Աստղերը կարծեցիր դու
Ինչ վոր մենք մեր ձեռքով
Վառել ենք ու վառում.
Դրանք նոր դյուղեր են՝
Լուսավոր ու խնդուն,
Ու բացվել է այնտեղ
Ելնքարական գարուն:

Իսկ դու հիմա յերգիր
Քանի դարուն չե՛ դես,
Աշնան նման տխուր
Կանչիր, խեղճ իմ թռչուն,—
Դեռ ծաղիկներ ունենք,
Ունենք սեղ ու թիթեռ,
Դեռ լուսինն է փայլում
Գիշերային լճում...

Փ Ր Կ Ո Ւ Յ Յ Ո Ւ Ն Ը

Գալիս ե անա նա,
Դաշտերի գազանը,
Գալիս ե ծանր ու մառ,
Լսում եմ նրա ձայնը:

Նրա շուրջը նախիրն ե
Վոր փախչում ե— չնւ...
Նախիրը փախչում ե
Շվար բառաչով:

Հասկերի մի խուրձ բոց
Բերել եմ հանդիպեմ,
Գծերի վերա քո
Վերջին գառս մորթեմ:—

— Վողջնւյն քեզ, վողջնւյն քեզ,
Յերկաթե յեղբայր,
Հագնում են գյուղերը
Լուսեղեն մի փայլ:

1938

* * *

Շատ յերգեր եմ յերգել չես,
Յերգում եմ հիմա,
Բայց իմ այս յերգերի սեւ
Ուղում եմ չես մնալ:

Յես հիմա ձեզ եմ յերգում,
Կապտամանուշ աբաեր,
Ու ձեր կողերը հերկող
Յերկաթե մարդը:—

Այդ եմ ավել իմ յերգին
Յեվ այդ եմ ուզել.
— Յերկաթավոր իմ յերկիր,
Յերկաթավոր սեր:

1927

ԿԱՊՎԱԾ ԵՄ ԻՄ ՅԵՐԿՐԻՆ...

Կապված եմ իմ յերկրին
 Ինչպես ծառը՝ հողին,
 Ու դարթնում ե յերգըս
 Յերկաթե խողզողից:

Յեզ ամպերի մաղից
 Թափվում են ալ վարդեր.
 — Անդա՛րձ, անդա՛րձ իմ թախիժ,
 Վոր ցնդում ես արդեն...

1929

ՈՏԻԿԻՆ

Յեղի՛ր պայծառ,
 Յեղի՛ր լուսե,
 Վորպես անցած
 Որերի սեր:

Սրտումդ՝ չերգած
 Անչար հույզեր,—
 Վորպես ներկա
 Որերի սեր:

Յերգի՛ ալիք,
 Շողո՛ւն սուսեր,
 Վորպես դալիք
 Որերի սեր:

Առն՛ աբծաթ,
 Հույսեր ու սեր,
 Յեղի՛ր պայծառ,
 Յեղի՛ր լուսե...

1932

Ս Ե Ր

Սորհրդային արևի տակ
Պիտի ծաղկի ու բողբոջի
Մեր սերն աչնքան վառ ու հասակ:

Պիտի ծաղկի ու բողբոջի
Մարդկային այս տունկը կանաչ,—
Պիտի զնգա ու խոխոջի:

Ձուրը կյանքի վարար-վարար,
Ձարկված հազար ժայռ ու քարի,
Ձուրը արար ու կենսարար:

Ու գույներն այս անկրկնելի
Պիտի փոխվեն անմեռ, անմար
Դեռ չգրված նոր յերգերի:

Նոր յերգերի, վորոնք խռով՝
Շառաչում են դռների մոտ.
— Յե՛ր, ընդունիր վերջին սիրով...

1932

Հեղեղ են ուժերը,
Ուժերը—վառման,
Անցել և գիշերը,
Արև և ամբան:

Ամբան պես հասուն են
Հարսերդ ահա,
Յերկիր իմ, հասնում են
Հասկերըդ հիմա:

1930

Վ Ո Գ Ե Կ Ո Ջ Ո Ւ Մ

Մոտ տարիները զիզզազում թե .
 Յերգեցիր յերգեր հույզերով թաց,
 Այժմ զգաստ յեղիր, կռիվը թեժ
 Տես, խաանում ե:— Թեպետ խնդանց

Քո սիրտը ծաղկով՝ թախիժ բերող
 Ու բանդ թվաց քեզ քո յերկիրը,
 Բայց վերջին, վերջին Հոկտեմբերով
 Պիտի բարձրանան քո յերգերը:

Յերգերիդ գնդով գնահ գրո՞հ
 Ու վարդ լինեն թող քո վերքերը:

1932

Յ Ե Ր Կ Ա Ս Ե Գ Ն Դ Ե Ր...

Յերկաթե գնդեր, վոր դոփում եք դաշն,
 Սարսում աշխարհի հիմքերը վսեմ,
 Ո, կիջնեմ մի որ խոնավ հողի տակ,
 Բայց ձեր դոփյունը նորից կլսեմ...

1932

Փ ո ք բ ի կ Ա ր փ ի կ ի ն

Ծ աղ ի կ ն ե ռ, ծ աղ ի կ ն ե ռ, ծ աղ ի կ ն ե ռ,
Ա լ ի ք ն ե ռ, ա լ ի ք ն ե ռ, ա լ ի ք ն ե ռ,
Գ ա լ ի ք ն ե ռ...

Բ ա լ ի կ ն ե ռ, բ ա լ ի կ ն ե ռ, բ ա լ ի կ ն ե ռ...

1932

Գ ո վ ք

Ա ս ի յ ե ս. — Դ ու բ ա ը ը ղ յ ե կ ա ռ,
Կ ա ն ա չ դ ու ս ա ը ե ը ղ յ ե կ ա ռ,
Դ ա ը ե ը ղ յ, դ ա ը ե ը ղ յ, դ ա ը ե ը ղ յ յ ե կ ա ռ:

Ա ս ա ց. — Յ ե ս ն ո ը ե ը ղ յ ե կ ա,
Ա լ-կ ա ը մ ի ը շ ո ը ե ը ղ յ ե կ ա,
Ո ը ե ը ղ յ, ո ը ե ը ղ յ, ո ը ե ը ղ յ յ ե կ ա:

Ա ս ի. — Դ ու հ ու ը ե ը ղ յ ե կ ա ռ,
Զ ը ն գ ու ն ջ ու ը ե ը ղ յ ե կ ա ռ,
Լ ու ը ե ը ղ յ, լ ու ը ե ը ղ յ, լ ու ը ե ը ղ յ յ ե կ ա ռ:

Վ ո ս կ ե մ ա ն լ ա ը ե ը ղ յ ե կ ա ռ,
Մ ա զ ա ս լ ա ծ, դ ա ը ե ը ղ յ ե կ ա ռ,
Մ ա ը ե ը ղ յ, ս ա ը ե ը ղ յ, ս ա ը ե ը ղ յ յ ե կ ա ռ:

1932

ԿԱՐՄԻՐ ՄԱՐՏԻԿԻ ՈՐԱԳՐԻՑ

Զնգում ե նորից իմ հուշերի առուն
 Այս ուշ գիշերում,
 Յեվ իմ հուշերում
 Բացվում ե ահա մի շքեղ գարուն:—

Մեր խումբն եր յերգում մթին անտառում.
 Մեր շուրջը խավար,
 Ավեր ու ավար,
 Առաջը՝ կռիվ, մահ ու մաքառում:

Յերգում եյինք մենք յերգը գալիքի,
 Յեվ մակընթացը վերջին ալիքի:

1232

ԱՐԵՎԸ ԵՄ ՅԵՍ ՍԻՐՈՒՄ...

Արևն եմ յես սիրում
 Նոյեմբերյան գարնան,
 Արտաների հեռուն,
 Կարտաները վառման:

Կատարները, վորոնք
 Անհաս ու անսահման
 Շողշողում են հրով
 Նոյեմբերյան գարնան...

1932

Հ Ա Տ Վ Ա Մ

(Նոյեմբերյան փրագմենտ)

Դուան մոտեցավ ու դուռը թակեց,
 Մայրը բաց արավ դուռը ահառած.
 Վերդին եր՛ մթին սարերը փախած.
 — Փախի՛ր, մի մնա ու ազատի՛ր քեզ...

Նա զենք եր կապել, շինել եր հագել...
 — Մայրի՛կ, աշխարհին արև ե ծագել...

1932

Հ Ա Տ Վ Ա Մ

(Նոյեմբերյան փրագմենտ)

Յեկավ սե ձիավորը,
 Հասավ դյուզի տակը,
 Ասաց իր ազգանունը,
 Բաշեց մտրակը:

Ասաց. — Կանգնե՛ք կովի,
 Թշնամին մոտ ե.
 Հողվո՛ր, սուրը սրի,
 Կտրի՛ր նրա վոսը:

Պայթեց մի հրացան,
 Ընկավ ձիուց վար նա,
 Ու արևը բարձրացավ
 Աշխարհի վրա...

1932

ՇՈՒՐ ՍԱՐԻ ԲԱԼԼԱԳԸ

(Նոյեմբերյան ֆրագմենտ)

- Ինչո՞ւ յես լուռ, մայրիկ...
- Յես հիշում եմ հիմա
Կռիվը Շուր սարի:
- Ի՞նչ ես տխուր, մայրիկ...
- Քանի՛ կտրիճ ընկալ
Շուր սարի մութ լանջում...
- Դու լալիս ես, մայրիկ...
- Ծաղիկներն են կանչում
Շուր սարերի լանջում,
Շուր սարերի վրա
Մի որ ընկան նրանք,
Հանգան վորպես կրակ...
Ա՛խ, մնացին անտես
Ես արևին կարմիր,
Վոր բարձրացալ, ասես,
Շուր սարերի լանջից...
- Դու ժպտում ես, մայրիկ...
- Շուր սարերի լանջում
Ծաղիկներն են կանչում...

1932

ՔՐՏԻՆՔ ՅԵՎ ԱՐՅՈՒՆ

Դու քրտինքով յեկար, մրգերի ու յերգի
Բազմաբեղուն աշուն, բեղմնավոր ու վարար,
Ու թողիք, վոր շունչդ այգիներում չերգի
Նոր որերի՛ յերգը՝ նոր որերի՛ համար:

Արնով ու քրտինքով բարձրացած իմ յերկիր,
Արնով ու քրտինքով դու գնում ես առաջ,
Շուրջդ մակընթացը մեր վիթխարի չերգի,
Փլուզումի՛ փոշի ու կառուցման շառաչ...

1932

ՅԵՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Յես չեմ մոռանա քեզ, իմ յերգերի գարուն,
 Հազար մայիս անցնի, հազար ծաղիկ ցնծա,
 Ղողանջի բյուր լուսին, զնգա հազար առու...

Յես չեմ մոռանա քեզ.— շողուն այգաբաց եր,
 Բացվում եր վառ ուրը քո աշխարհի վրա,
 Ու իմ յերկրի աչքը արամությունից թնայ եր:

Ու խնդություն յեղավ, յեղավ տոն ու հանդես,
 Բայց քո ջինջ աչքերի թարթիչներին՝ ահա
 Յես տեսնում եմ, իմ յերգ, տխրությունը այն թինք,

Վորը ժպտում ե ինձ շողի նման, ցողի,
 Ու քո այգաբացից, քո գարունից յերան՝
 Տրամաթաթավ յերգի շուրջներն ինձ թողիր,—

— Գարնանային քնար, յերգների յերաղ...

1932

ՅԵՍ ԶԳԻՏԵՄ

Յես չգիտեմ աշխարհում քո յերգից մեծ յերգ,
 Յես չգիտեմ աշխարհում.
 Հազար աշուն ել հասներ՝ չեյի տեսնի այսքան բերք,
 Բրախնք ու արյուն:

Զեյի տեսնի աշխարհում այսպիսի լեզերք՝
 Արար ու վարար.
 Ստեղծագործ միտք ու ձեռք ու բեղմնավոր այսքան
 հերկ

Նոր կյանքի համար:

Հնչում ե քո անունը հերոսական ու վսեմ,
 Հնչում ե ահա.
 Այն սիվ ե, վոր աշխարհում քո շառաչը չլսեց,
 Քանդավառ ու վառ:

Հին աշխարհի համար դու յեղար անեղ անազանգ,
 Ու նոր աշխարհում
 Արև՝ յեղար, փրկություն, դրոշ յեղար հարազատ,
 Բրախնք ու արյուն...

1932

ՏԱՐՎԱ ՉՈՐՍ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

«Կյանքը մարդուն պտուղներ է բերում, բայց հաճախ
չէ, վոր հուրհուրատում են նո՛ւա՛ կախվելով նշուղներից
կարմիր խնձորների մեան...»

ԳՅՈՐԾԵ «ՏԱՐՎԱ ՉՈՐՍ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ»

ԱՂՆԸ, 38

Գ Ա Ր Ո Ւ Ն

Յելնեմ ման գամ,
Դաշտերն ընկնեմ,
Յելնեմ ման գամ
Արտերն ընկնեմ,
Դաշտերն ընկնեմ,
Արտերն ընկնեմ,
Յելնեմ, գնամ
Հանդերն ընկնեմ:

Ջան, իմ յերկիր,
Դու խաս բախչա.
Ջան, իմ յերկիր,
Դու թնց բախչա.
Դու բնց բախչա,
Ծաղկած բախչա,
Ջան, իմ յերկիր,
Պանծառ բախչա:

Յերգեմ ծաղկած
Վարդերը քո,
Յերգեմ կանգնած
Արտերը քո,
Վարդերը քո,
Արտերը քո,

Նոր աշխարհի
Զարդերը քո:

Յեղնեմ, ման դամ
Հողերից դեն,
Յեղնեմ ման դամ
Դողերից դեն,
Հողերից դեն,
Դողերից դեն,
Արեգական
Շողերի դեմ...

Ա Ս Ա Ռ

Արևն յելավ
Մոտի սարից,
Շողքը դիպավ
Մամռոտ քարին:
— Հնձի, հնձվոր,
Հունձդ բարի.
Բրախնքը թող
Կուրծքդ վարի:

Մեր լավ յերկրի
Արտն ե վոսկի,
Մեր լավ յերկրի
Հասկը հասկին.
Ջան, իմ խշշան
Արտ ու անիեր,
Ջան, իմ անբան
Անուշ անիեր:

— Հնձի, հնձվոր,
Հունձըդ վարար,
Բրախնքը քո
Աղբյուր դուլար:

*

Մեր լավ յերկրի
Արտը մի գետ,
Հնձի երթանք

Եսոր քեզ հետ.
Թող զըրընդա
Մանգաղը սուր,
Թող քրտինքը
Զթափվի զուր...

— Հնձի, հնձվոր,
Հասկը հասկին,
Քրտինքը քո
Հալած վոսկի:

*

Արև մտավ
Սարի կողին,
Բռնի հիմի
Ճամբեն գյուղի,
Գյուղի ճամբեն
Վոլճր-մոլճր, —
Հնձված արտեր
Քո չորս բոլոր:

Հնձվոր, հնձվոր,
Մթնեց որը,
Մթնով լցվեց
Սարն ու ձորը.
Ջան, իմ խշշան
Արտ ու ափեր,
Ջան, իմ ամուսն
Անուշ ախպեր...

Ա Շ ՈՒ Ն

Իջավ աշուն
Մեր դաշտերուն, —
Վոսկի աշուն,
Վոսկե շորով,
Ամպերն ելան
Որոր-շորոր,
Մշուշ իջավ
Մեր չորս բոլոր:

Ջան, կալերուն
Իջավ աշուն՝
Վոսկի աշուն,
Շորով նախշուն,
Յերգով յեկար,
Բերքով յեկար,
Առատածեռ
Ձեռքով յեկար...

Ջյուն կթափի
Խրճիթներուն,
Մեր տներուն,
Կառերներուն:
Ջյուն կթափի
Սար ու արտին,

Մար ու արտին,
Զոր ու հանդին:

Մեր արտերուն
Թող գա աշուն,
Մեր սրտերուն
Զգն մաշում.
Ամպին լինի,
Լինի դամպին,
Հողին լինի,
Լինի հանդին,
Մարդու վորդին
Ենքան անդին,
Շուտ կը գանի
Իր արունը,
Իր արունը,
Իր դարունը:

... Ամպերն ելան
Որոր ~ շորոր,
Մշուշ իջավ
Մեր չորս բոլոր,
Մշուշ իջավ
Դողճվ, շողճվ.
— Վոսկի՛ աշուն,
Վոսկի՛ շորով...

Զ Մ Ե Ռ

Զյուն ե թափվել
Խրճիթներուն,
Մեր տներուն,
Կտուրներուն.
Զյուն ե թափվել
Մար ու արտին,
Արտաներին,
Զոր ու հանդին:

Հողերի տակ
Ենքան հատիկ,
Ենքան վաստակ
Հողի տակին, —
Գարնան գալուն
Սպասում են,
Սպասում են
Ու ասում են. —

Զենք վախենա
Քո բորանից,
Զենք վախենա
Քո բերանից,
Քո բերանից
Քո բորանից
Սպիտակած
Քո խորանից:

Ձենք վախենա
 Մենք քո սրախց,
 Ձենք վախենա
 Մենք քո ցրախց,
 Փչի, վորքան
 Սիւտղ կուղե,
 Ելի կզան
 Որեր լուսե:

Որեր լուսե,
 Որեր գարնան,
 Որճր ու սեղ,
 Որեր վառման...
 Ենքան որեր
 Լեն ու անգին,
 Քող գն ձյունը
 Ձոր ու հանգին:

1929

ԲԱԼԼԱԴՆԵՐ ՅԵՎ ՓՈՔՐԻԿ ՊՈԵՄՆԵՐ

ՅԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿ ԵՆ ՆՐԱՆՔ

Յերկու մանուկ են նրանք բանուկ փողոցում,
Թափառական ու գունատ և անդարձ կորած.
Յերբ գիշերն է թանձրանում, անձրևը կծում՝
Հին դարպասի մի խորշում պահվում են նրանք:

Յերկուսի ել հայրերը բանվորներ էյին,
Յերկուսի ել հայրերը ուժեղ, հաղթիրան,
Նրանք մռայլ հանքերում մի որ գոհվեցին,
Իսկ մայրերին «Վոսիկ Սարդ» պանդուկը տարան:

Ու նրանք վորբ մնացին դաժան քաղաքում,
Աղջիկը, նա, վոր ուներ յերկնագույն աչքեր,
Տղան մազեր ուներ շեկ ու վոսիկգույն,
Ու խորշերից նա խոնավ թոքախտ եր ճանկել:

Յերկու վորբեր են նրանք՝ բարեկամ դարձած,
Մի որ իրար դեմ յելան յերկու փողոցից.
Աղջիկը միրգ եր կրծում, իսկ սղան չոր հաց,
Աղջիկն իր միրգը պարզեց՝ առ, դու չեկ կրծիր:

Գարձան նրանք բարեկամ, հավասար ընկեր՝
Գտնված մի վոսկորի կամ մրգի համար,
Յերբ մի կտոր հաց գտան՝ աղջիկը յերգեց,
Լսեց սղան անձկությամբ ու ժպտաց խոնարհ...

2

Ու գարուններ անցան, հասան որերն աշնան,
 Նրանց հին շորերը մաշվեցին ու ընկան.
 Մնաց վերջին լաթը՝ անողնական, մաշված,
 Ազդրերով բաց ու դորշ շրջում են դեռ նրանք:

Ահա նստել են լուռ, ցանկապատին մոտիկ,
 Խանութից դուրս նետված թաց մրգերն են ջոկում,
 Աղջիկը բան չգտավ, վոր վերցնի, ուտի,
 Տղան խանութպանին հայհոյում է մաքում:

Ու մնացին այդպես, տրտում ու սևակնամ.
 Իրիկվա հովը փչեց սառն ու թեթե,
 Պահակը հինգ անգամ հայհոյեց ու գնաց,
 Ու արևը մտավ տանիքների յետև:

Իրիկունը կախվեց փողոցների վրա
 Ու վորտեղից-վորտեղ փչեց մի ցուրտ քամի,
 Ու փողոցի փողում թաց անձրևներ ընկան,
 Հորդ անձրևը մազվեց իրիկնային ժամին:

Ու կանգնեցին նրանք վտանգի դեմ՝ արթուն,
 Տղան բռնեց նրան, արագ անցավ առաջ.
 — Մանուկներ են նրանք՝ անոթեան, անտուն,
 Իեմը՝ խավար գիշեր ու հողմերի շառաչ...

3

Դաժան գիշերն իջավ այն քաղաքի վրա,
 Դեռ շափում էր անձրևը շենքերի վրին.
 Հին դարպասի խորշում պահվեցին նրանք,
 Ու կիսամերկ ընկան՝ գրկված միասին:

Սեղմվեցին նրանք՝ ազդրերը հյուսած,
 Տղան զգաց ինչ-վոր դող, ոտար ջերմություն,
 Աղջիկը խուլ ու դժգոհ ինչ-վոր բան ասաց,
 Տղան ձգվեց ավելի ցանկությամբ մի մութ:

Ու զգաց, վոր աչքերը տաքացել էյին,
 Ու զգաց, վոր ինչ-վոր բան թակում է տեղով.
 Այնքան հեռու յեր թվում ազմուկն անձրևի,
 Նա հեռւմ էր սրտապայթ ու սեղմում խանդոտ:

...Առավոտյան անձրևը խուլ մաղում էր դեռ,
 Յերը դարպասի մութ խորշից հանեցին նրանց.
 — Յերկու մանուկ են նրանք, հավասար ընկեր,
 Մեկը՝ մեռած տաղնապից, մեկը՝ խեղդամահ...

Յերկուսի ել հայրերը բանվորներ էյին,
 Յերկուսի ել հայրերը ուժեղ, հաղթիրան.
 Նրանք մոռյլ հանքերում մի որ զոհվեցին,
 Իսկ մայրերին «Վոսկե Սարդ» պանդոկը տարան:

1924

ԲԱԼԼԱԴ ՈՒՌԵՆՈՒ ԴԱՐԲՆԻ ՍԵՎ ՏՂԱՅԻ
ՅԵՎ ՅԵԼՆՈՂ ԱՐԵՎԻ ՄԱՍԻՆ

Նա տեսել էր միայն սեր,
Մանուկ ու գարուն,
Ուռենին այն որորուն,
Ուռենին այն որորուն.
Յերբ իջնում էր մութը սև՝
Նա թեքվում էր ու նիրհում,
Մինչև յեկնող արևի զնգոցը լսեր:

Շուրջը տներ ցանուցիք
Գյուղաքաղաքի,
Անցնող մի զույգ, փախչող ձի,
Հոտեր անհանգիստ:
Շատ ցերեկներ զժժացին,
Գիշերներ անցան,
Մի որ էլ սև լուր հասավ
Ամբողջ նահանգին...

Տխուր շարժեց ճյուղերը
Ու անշարժ մնաց
Ուռենին այն որորուն,
Ուռենին այն որորուն.—
Չուզեց կովի գաշտ զնալ
Դարբնի սև տղան,
Մի գիշեր էլ նա գնաց
Ու մնաց սարում...

Նրան գտան, բերին վար՝
Չեռները կապած,
Վարդ էր բացվել ճակատին
Ու ծորում էր ցած:
Որորուն այն ուռենին
Մրսփայց ցավից,
Կամաց թեքեց ճյուղերը
Ու սխուր մնաց:

Մի գիշեր էր սեասև,—
Անձրևն էր խշշում,
Մթնում ինչ-վոր ստվերներ,
Հեռվում՝ հաջող շուն:
Հրազեններ փայլեցին
Անձրևի տակ թաց,
Ու դարբնի սև տղան
Կանգնեց ուռու տակ...

Նրա աչքը կապեցին
Սպիտակ լաթով,
Նրանց մոայլ աչքերից
Արյուն էր կաթում:
Յոթ սև փողեր ուղղեցին
Ճակատին նրա,
Յոթ սև փողից վորոտով
Գնդակներ թռան...

Թեքվեց ուսուն նա կամաց
 Ու ընկավ հողին,
 Ու դիշերը միգամած
 Պարուրեց ուղին,—
 Յեվ ուռնին, ուռնին
 Դողդողաց խոտով,
 Իջավ լացող ճյուղերով,
 Գրկեց նրա դին:

Իսկ դարբնոցն, դարբնոցում
 Դարբինը հսկա
 Յերեք անգամ հին մուրճն իր
 Խփեց հին սալին.
 Յեվ աշխարհում ահացուրա
 Մի թև թսրտաց,
 Յեվ արեը բարձրացավ
 Փրկության սարից:

ԿԱՐՄԻՐ ԶԻԱՎՈՐԻ ՄԱՀԸ

(Փոխադրություն)

Գետը հոսում է.
 Գետի հայելում — լալիան ուռիներ,—
 Այնտեղ լվանում են իրենց վարսերը
 Լալիան ուռիները,
 Ուռիները:

Զիավորները կարմիր,
 Մերկ սրերը ուռիներին խփելով,
 Արշավում են դեպի մայրամուտ
 Վորպես քամի:

Ու հանկարծ, հանկարծ,
 Վորպես թռչուն վերավոր
 Մեկն իր ձիուց գլորվեց ցած:

Չաղաղակեց նա, չգոռաց,
 Արշավողներին չկանչեց յետ,
 Միայն նրանց ձիերի
 Շողշող պայտերին նայեց,
 Աչքերը՝ լեցված:

Ել նա չի փարելու,
 Չի փարելու
 Քառասմբակ արշավող
 Իր նժույգի բաշերին փրփուր,
 Բաշերին.

Ել նա չի կարող,
 Ձի կարող
 Սաղացնել իր սուրբ՝
 Ճերմակներն յետևից
 Գիշերով...

Դանդաղ մարում ե պայտերի ձայնը,
 Յեվ արևմուտքում ձուլվում են, ձուլվում
 Ձիավորները,
 Ձիավորները — զինավորներ կարմիր,
 Հողմաթեղ ու թեթև՝ ձիավորները,
 Ձիերը հողմաթե,
 Ձիերը թեթև,
 Ձիերը,
 Ձիերը,
 Ձի...

Գնաց մի կյանք՝ ձուլում նման հողմաթե...
 Լուսնի և ձայնի գետի,
 Ու ստվերներ մթնեցին,
 Ու ջնջվեցին դույններ,
 Ու վարագույրն իջավ, ծանր ու սև,
 Նրա կապույտ աչքերին...
 Նրա խարտյաչ մազերին
 Վոզկույզները փռեցին
 Լալիան ուռիները,
 Ուռիները...

Մի լաց, մի լաց, ուռենի,
 Կարա-Սույի հայելում
 Ձեռք մի կցի,
 Լաց մի լինի,
 Ուռենի...

ԲԱԼԼԱԿ ՄԻ ՌՈՒՍ ԶԻՆՎՈՐԻ ՄԱՍԻՆ

Եսպես, անցնում են որերը հերթով,
Հոսում ե կյանքը ալիք առ ալիք,
Անցնում են որերն ու նրանց յերթում
Մեկը անցյալ ե, մյուսը գալիք:

Բայց վորքան որերը անցյալ դառնան,
Վորքան հեռանան դույները նրանց,
Յես չեմ մոռանա ճակատն աչն արնած:
Յերկաթուղային գծերի վրա...

Յես չեմ մոռանա... Աշունը վորպես
Դեղնամազ պառավ՝ աչն հին ճամբեքին,
Դաշտերի վրա անձրևային ձես,
Լեռների վրա շղարշը մեզի:

Յերկիրը վորպես անհուշ մի մեռել՝
Ընկած որերի խաչուղու վրա...
Յերեկոն իջավ գունատ ու յերեր,
Իջավ յերեկոն գույներով մաայլ:

Յերկրիս դաշտերով անցնում եյի յես,
Մրտուս դառնութուն, ու թախիժ, ու թույն,
Մովերի պես համր, լուսնոտի պես հեղ,
Փնտուում եյի յես հյուրընկալ մի տուն:

Հետևում եր ինձ տխրությունը սե
Վորպես հետախուզչ, հոտառու մի շուն,
Իսկ աչքերիս դեմ պատկերներ նսեմ,
Հտպիտ պատկերներ գիշերվա մութում:

Պարում եր ինչվոր կտրված մի վոտ,
Ծովում եր ցավից մի կարմիր բերան.
Ծանրանում եյին ձեռներ արյունոտ
Իմ անոգնական ուսերի վրա:

Յերկաթուղային գծերի մոտով
Զգվում եր ուղիղ մի նեղ արտուղի,
Բայլում եյի յես հոգնատանջ վոտով,
Քե հոգնությունս նողմում եյի:

Զդում եմ հանկարծ, վոր ընկել եմ յես
Գծերի վրա՝ հեկեկում եմ խուլ,
Թվաց ինձ ոտար արձագանքի պես.—
— «Ե՛յ, ո՞վ ե այնտեղ, այն ո՞վ ե մխում»:

Մի մթին զանգված գծերի վրա.
— «Ո՞վ ես»... — «Զինվոր եմ»... «Ի՞նչ ե պատահել»:
Յեվ արյունոտ եր ճակատը նրա.—
— «Քեղ ո՞վ ե, զինվոր, դետին տապալել»:

— «Սմբապետ Շապուն. — Թքեց յերեսիս,
Թուրը պատչանով ճակատիս տվեց,
Քե ծակեց ուսըս... արնաքամ եմ յես,
Իսկ ինձ մոտ գտան մի քանի թուռցիկ...»

Նա լոնց մի պահ... խոլ հետո ասեց՝
Տարված յերագով, թե դառանցանքով՝
— «Իոնից, Վոլգայից կզան, կհասնեն,
Ե՛լս, յելման Վոլգա, Ե՛լս, ապստամբ Դոն...»

Լոնց, սրսփաց ու անշարժ մնաց...
Գիշերն եր նայում սևակնած ու լուռ.
Քամին դառանցեց դաշտերում քնած,
Դեմից բարձրացավ մահիկը դալուկ:

Ու որեր անցան, — կանգնեց չերկիրը,
Հոկտեմբերն չեկավ Նոյեմբեր ամսին,
Յեվ վարդեր ելին բուրբ վերքերը,
Ու նորը յերգեց նոր կյանքի մասին:

Ու վորքան որերը անցյալ դառնան,
Վորքան հեռանան գծերը նրանց,
Յես չեմ մոռանա ճակատն աչն արնած՝
Յերկաթուղային գծերի վրա:

Նրանց արյունով դրոշներ բարձրացան,
Արևը յելավ հաղթական խանդով.
Բռնեց նոր ուժը փողոց ու կաժան...
— Ե՛լս, յելման Վոլգա, Ե՛լս, ապստամբ Դոն...

1929

Բ Ա Լ Լ Ա Դ Բ Ա Գ Վ Ի Յ Ե Վ Ք Ս Ա Ն Վ Ե Ց Ի Մ Ա Ս Ի Ն

Ամեն առավոտ, յերբ լույսը բացվում է,
Յերբ վարդեր են լողում հասպից ջրերում,
Սուլիչները կանչում են, սուլիչները շվում են,
Ու քաղաքը դարձնում է, յելնում է, յեռում:

Յերգում է գորշ մուժում Բիրի-Նյբաթն անա,
Ու խշշում է սիրտը Իլլիչի խորշի.
Յեվ քարափում կանգնած շոգենավերը հափ,
Յեվ քաղաքը ձեծող նավթային փոշին,

Յեվ փողոցները խուռն, վիարինները շողուն,
Ցուցանակները մեծ ու շենքերի ներկան...
Բրոնզե համառ փայլով այդ Բագուն է շողում
Ու պարզել է վերև իր բուրդերը յերկար:

Այստեղ հոսում է հորդ արյունը մեր յերկրի,
Նավթարյունը հզոր, նավթային գարունը,
Այդ ուժն է մեր յերկրի, այդ ուժն է մեր ձեռքի,
Նավթարյունը հորդուն, նավթարյունը...

Պարզված ափից մինչ ափ, Ապշերոնյան հսկան
Ահա նայում է շեշտ աշխարհի մութ հեռուն.
Այդ Բագուն է քո դեմ՝ մեծանխատ ու զգաստ,
Ապշերոնի գրկում այդ Բագուն է յեռում:

Այդ Բագուն ե փռվել հանգուցյներով անթիվ,
 Նոր Բագուն ե այնտեղ հզորաբար խրոխտ,
 Ել չի պարզվի դեպ նա վնչ մի դեղին բանդխտ,
 Ել չի չանդուի նրան վոչ-վնջ:

Ել վնչ մի ուժ դեղին...Նրանք մի որ յեկան,
 Դրին իրենց թաթը կարմիր Բագվի վրա,
 Ու նավերը մտան մեր արյունով ներկած,
 Ու ջրերով Կասպից Քսանվեցին տարան...

Անդրկասպյան դեղին, դեղին ավազուտում
 Մրնոտ մի խրախճանք նրանք պատրաստեցին,
 Բագվի սրտից արցունք ու արյուն եր կաթում,
 Հոշոտեցին նրանք Քսանվեցին:

Ու հիմա, ամեն որ, յերբ բացվում ե լույսը,
 Յերբ արևը Կասպից մութ ջրերն ե ներկում,
 Յերբ ջրերն են ծեծում Ապշերոնի ուսը,—
 Վիշկաների խորքից Քսանվեցն ե յերգում:

Յերգում ե Քսանվեցը. լսեք, լսեք, լսեք,
 Դառնում են փոկերը, անիվների յերգը,
 Այն հիվ ե, հիվ ե, վոր նրանց դեռ չի լսել,
 Ո՞վ ե, վոր չի տեսել Քսանվեցի դեմքը:

Յերգում ե գորշ մուժում Բիրի-Նյբաթն ահա,
 Ու խշշում ե սիրտը Իլիչի խորշի,
 Յեվ քաղաքում կանգնած շոգենավերը համր,
 Ու քաղաքը ծեծող նավթային փոշին...

.....

Ու Բագուն ե նորից... Իջավ իրիկունը,
 Ու վառվեցին անթիվ լուսե լամպերն ահա,
 Գարմոնները շնչում են, դարմոնները յերգում են,
 Մակույկները լողում են ջրերի վրա:

Հանդչում ե քաղաքը, բուլվարները զվարթ,
 Քաղաքը շփում ե հողնած մկաններն իր.
 Ջրերը ծեծում են իրենց ափերն հանդարտ.
 --Քնիք, քնիք, քնիք...

Քնել նա չի կարող, ինչպես սիրտը մարդու—
 Դիշեր-ցերեկ պիտի խփի սիրտը նրա.
 Քնել նա չի կարող, նա կմնա արթուն,
 Ու կհսկի զգաստ Ապշերոնի վրա:

Քաղաք, հզոր ընկեր, իմ չուզունե յեղբայր,
 Քաղաք հերոսական, արնակարմիր Բագու,—
 Քեզ են ուզում այստր իմ յերգերը յերգած,
 Իմ յերգերը չերգած քո դռներն են թակում:

Քաղաք, դու, վոր մի որ բորենիներ տեսար,
 Ուր վոր դավադրաբար սրեր հեռանվեցին...
 Քաղաք, հզոր ընկեր, իմ չուզունե յեղբայր,
 Քաղաք իմ արնավառ, Քաղաք Քսանվեցի:

ՆՐԱՆՑ ՅԵՐԳԸ

1

Ի՞նչ ե, ի՞նչ ե զնգում լայն դաշտերի վրա.
 Ո՞վ ե յերգում այդպես իրիկնաժամին.
 — Վերջալույսն ե խիել նարնջե բորբ վրան,
 Ու յերգում ե դաշտում սուբանանդակ քամին:

Նա սուլում ե խանդով ու թռչում ե թեթե,
 Նրա հետ յերգում ե դաշտը, միասին,
 Մինչև արևն իջնի գագաթների յետև՝
 Կերպեն նրանք մարտի ու հաղթության մասին:

Նրանց հետ յերգում են բանակները, վորոնք
 Մարտնչում են դաշտում, հանքում, լեռնալանջին,
 Նրանց յերգում ուժ կա, նրանց յերգում կորով,
 Նրանց հետ յերգում ե մի կոմյերիտ աղջիկ:

Մի կոմյերիտ աղջիկ: Ուներ նա մի յեղբայր,
 Թղթակից եր գյուղում, հողվածներ եր գրում.
 Ուներ լուսե մաշեր արևներով յերգված,
 Նրա սրտում հազար մայիսավոր գարուն:

Նա կռվում եր անդուր, մարտնչում եր համառ,
 Կոմյերիտ այդ տղան հաղիվ քսան տարու,
 Նա կռվում եր մի նոր, լուսե կյանքի համար,
 Այն, վոր կառուցում ենք, վոր գալու յե, գալու:

Կոմյերիտ այն տղան: Աշնան ուշ մի գիշեր,
 Յերբ նա տուն եր դառնում մտքերի մեջ ընկած,
 Աավարը զիզդագեց զենքի շողանքը շեկ,
 Ու գեպի նա թռավ դավադիր մի գնդակ:

Ընկավ նա անշուկ, անշնչացավ, սառեց,
 — «Ու չկանգնեց ել նա ընկերները շարքում,
 Ու չծագեց, չծագեց նրա համար արև...» —
 Նրա մասին այսպես գյուղում յերգ են յերգում:

Յերգում են գովքը վեհ այն կոմյերիտ աղի,
 Յերգում են դաշտերում, յերգում խրճիթներում,
 Նրան, վորը զոհվեց բուճնցքների վոխին...

2

Ի՞նչ ե, ի՞նչ ե զնգում լայն դաշտերի վրա,
 Ո՞վ ե յերգում այդպես իրիկնաժամին,
 Վերջալույսն ե խիել մի նարնջե վրան
 Ու յերգում են հողի մարտիկները կարմիր:

... Հիշում ե յեղբորը ու խոսում ե ասես, —
 — Չեն մոռացվի յերբեք քո յերպերը յերգած,
 Մենք կռվում ենք, հաղթում քեզ նման ու քեզ պես,
 Արևավոր տղա, իմ կոմյերիտ յեղբայր:

Արևավոր տղա, իմ կոմյերիտ յեղբայր,
 Չեն ցնդի մեր սրտից շիթերը քո արյան,
 Արևավոր տղա արևներով յերգված,
 Շատաչում են արդեն ջրերը նոր զարնան...

ՊՈՆՄՆԵՐ

Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ի Յ Ե Ր Գ Ը

Ն Ա Խ Ե Ր Գ

1

Ահա որերը,— ու չես
Վորոնող, նոր մի պոետ,
Գալիս եմ չերգերիս հետ
Վառվող այս որերի դեմ:

Ու իմ դեմ թողում ե ներկան,—
Աշխարհը — հրի, մշուշի,
Աշխարհը, վոր յեղել ե, կա,
Կլինի ելի:

2

Յես գիտեմ ու ասում եմ ինձ.—
— Գեղեցիկ ե ցույցը Փարիզում,
Կա ցնցուն մի հորձանք Ռուբից,
Հույզերի դեռ հազար Վեզով:

Յես գիտեմ, բայց ասում եմ ինձ.
— Դու, պոետ, հասկացիր, հասկացիր,
Վոր յեթե փախչես այստեղից
Ու կապես փախուստի գնդացիր,—

Միևնույնն ե՞ փախուստի դեմ քո
Կտեսնես գյուղեր նայիրյան,
Թող ճշա կամքդ զժգո՞հ,
Վոր դեռ դու չես չերգել նրան:

Թող հիմա կամքդ բարձրանա
Վորպես լուռ, արնոտ սավառնակ,
Ու ցավով պոտովի, դառնա
Գորշադեմ շեների վրա...

Ու թող քո յերգերը թափվեն
Նրա հին, ջարդվող թևերից,
Դու, անծայր աշխարհի պոետ,
Մշուշում գորշատենդ գյուղերի:

Դու յերգիր, յերգիր, սվ պոետ,
Մշուշը նրանց հոգեսպան,
Հիսուսը նրանց անդեմ,
Սուրբերը մութ ու անբան:

Եւ յերգիր, յերգիր դու, պոետ,
Շարքերը նրանց հուսահատ,
Վոր թողին ավաններն իրենց
Ու մռայլ քաղաքը մասն:

3

Ընկել ե ինքը՝ իր վրա,
Դարերի մորմոքը հոգում,
Գեանահար գյուղը նայիրյան՝
Գեանափոր հյուղերի մի կույտ:

Ընկել ե վորպես մի սլառավ՝
Անկարող, փայտ ու խոտ մեջքին,
Աչնտեղ վոշ մի ֆրիտոտ չհարցավ
Ու միայն յերգեց խուլ քամին:

Իսկ այնտեղ, ասում եմ յես ինձ,—
Աշխարհն ե մի վոտի վրա,
Շարժվում ե աշխարհը հիմքից,
Փորում ե շիրիմ ու խրամ:

Գեղեցիկ ե ցույցը Փարիզում,
Յեռում ե յերակը Ռուբի,—
Դու ուրիշ յերգեր ես ուզում,
Հին գյուղն ե քեզ հուզում հիմի:

4

Գյուղերը,
Գյուղերը, ս,
Ազոթող ծերերի նման
Հուսահատ ու ծեր գյուղերը
Նայիրյան:

Հյուղերը,
Հյուղերը, ս,
Բոսոտ շների նման,
Ու նրանց նման անգոր,
Անգոր ու քոսոտ հյուղերը:

Հողերը անցան, անբերրի
Հողերը, հյուղերը, ս...

Գյուղ նայիրյան,
Աչն, վոր դեռ Հիսուս եր ու մեզ,
Արնոտ խոփ ու ցավի գուռնա.

Շների վրանոցը դառն՝
Դեզերի վրա հուսահատ,—
Շների վրանոցը դառն՝
Խեղազար նախիրների դեմ,—
Շների վրանոցը դառն՝
Դաշտերի քամիների հետ,—
Շների վրանոցը դառն՝
Արշավող քաղաքների դեմ:

Այն, վոր Հիսուս եր
Ու մեզ:

Իմ յերգում այն որերն են ցուրտ,
Նրանցով եմ յերգա գրել,
Իմ յերգի թախիժը անձուկ
Հին գյուղի մշուշն ե փուել:

Հողերը,
Գյուղերը,
Հյուղերը,
Հանդերում խոտեր վայրի,
Սալլերը, խաչը, մաճը,
Յերազը անձիր գաշտերի,
Դաշտերում չերազող Նաչիրին...

Գյուղերը, գյուղերը, գյուղերը,
Ո՛ր, հյուղերը ձեր,
Հողերը հին...

Ել լինչ,
Ի՞նչ լինի իմ յերգը.
Աթարի ու լաթի թուֆնք.—
Յեա ինչով մշուշը հերքեմ,
Յեա շուշն տամ ինչի՞ր...

Ի՞նչ ավտո լինի, վոր մտնի
Փողոցները քո ծամածուռ,
Իմ յերգը լինչ պիտի գտնի
Ձեր հեռվում դորը ու անձուկ:

...
...Հեռվում, մշուշում անձայր,
Դաղաքն եր՝ հոնքերը կիտած.—
Չտեսան, զգացին միայն,
Վոր յերան մեկմեկու դիմաց:

Թող յերգիս մուժը ցնդի
Դաղաղած դուղերի դեմ այն,—
Նրանք ուժն իրենց ընտիր
Դաղաքի չերախին տարան:

Թանձրացան մշուշն ելի
Տուրքերի ծանրութեամբ ագահ,
Կծկվեցին շներն ամեհի,
Ու հյուղերը դորը,
Գետնաքաշ:

Ու մի որ, չերբ մի գլուղից
Աքաղաղը կանչեց բարձրածայն,—
Քաղաքից ճչաց մի սուլիչ,
Լսեցին, իրար հասկացան:

6

Գեղեցիկ է ցույցը Փարիզում,
Բանթողը ադան ու քանդող,
Կա հուզող գեռ հազար Վեզուվ,
Ու Ռուբից անդուռ մի թակոց:

Յես գիտեմ, բայց թեքում եմ դեն
Հուլյաներիս թափը հորդան,—
Թող հոգիս կորուսա չերգի,
Թող կամքս չեղնի կախադան:

Յերգում եմ ձեր ծեր քուրձերը,
Ձեզ, գլուղեր հին ճամբաների,
Քամու հետ թռչող խուրձերը,
Յեզ աչն, վոր ճչացիք— Հերիք...

Ու թող իմ չերգերը թափվեն
Ձեր մաշող մշուշի վրա,
Ո՛ր, գլուղեր, քայքայվող գլուղեր,
Ո՛ր, մեռնող մշուշ նայիրջան...

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

1

Վորպես տենդից նայող մի աչք,
Արնամշուշ ու աներիզ,
Դաշտն է իմ դեմ նայիրական
Ու թախիժը մեր դաշտերի,
Վորպես բուռնցքը ժամանակի՝
Ապառաժված զարկի ժամին,—
Ահա լեռները մեր հանդիսա
Ու լեռներից զարկվող քամին:

Հո՛ր, դարերը, վոր անցել են
Մեր նայիրջան փոշոտ ճամբով,
Կարծես վոչինչ չեն հարցրել
Գալիքների թափին տենդոտ.
Անց են կացել նրանք խոժոտ
Ու չեն նայել չեռե չերբեք,
Ու թողել են հյուզեր փոշոտ
Ու սրտամաշ մշուշ ու մեզ:

Ու թողել են ժամեր անդեմ
Ու զանգերի չերազը ծեր,
Ու թողել են կամքեր անթե,
Ու հողագուլն դիմագծեր:

Իրիկնային ծուլլ դաշտերում,
Ճանիճներում լուսնոտ ու գոլ

Դեռ գորտերն են ծուլ համերգում
 Ու ծղրիղները մորմոքող,
 Դեռ ծանրաշարժ նախիրների
 Փողոտ յերազն է թափառում
 Ճամբաներում հնամենի,
 Զորում, ծերպում ու մացառում:

Ու լեռներում անհորիզոն,
 Գյուղերի դեմ, քաղաքի մոտ,
 Փռվել է լաչն իր թևերով
 Մի գորշահեր իրիկնամուտ:—
 Ո՛ր, իրիկունը գյուղերի՝
 Անծայրածիր ու անկրակ,
 Ո՛ր, հին շարքերը հյուղերի՝
 Անող, ընկած իրար վրա:

Կարծես մի թաց առավոտով
 Քաղաքներից աչն մոտավոր
 Մի մշակ է չեկել ալստեղ՝
 Բեռնավորված հին տուփերով.
 Ու ձանձրացած իր հին բեռից,
 Շպրտել է հողի վրա,
 Ինքը դարձել չեկեղեցի,
 Յեվ կանգուն է մինչև հիմա:

Կանգնել է մութ մշակը աչն՝
 Շուրջը տուփեր ցրել ու ցան,
 Անձրեններն են ծեծում նրա
 Գլուխը մերկ, անողնական:

Իրիկնային ծուլ դաշտերում
 Թափառում է անթով քամին,
 Ու ծեծում է մացառ ու թուփ,
 Վորպես անդեմ մի թշնամի.
 Ու պատմում է հազարամյա
 Անմահ ծանձրույթը դաշտերի,
 Հազարամյա մորմոք ու մահ,
 Փոթորիկները ամենի...

Նրանք յեկան քաղաքներից
 Ու քանդեցին հազար անգամ,
 Բայց մշուշը մնաց նորից
 Մեր դաշտերում նայիրական.
 Ու մնացին անխոցելի
 Գորշ տուփերը ցրել ու ցան,
 Յեվ հնամյա չեկեղեցին,
 Յեվ վանքերը կիսակործան...

2

Ո՛ր, իմ յերգերը ծանրաշարժ
 Քո սայլերի նման դանդաղ,
 Յնցոտի, գորշ մի դրոշակ,
 Վոր պարզում եմ դեմըդ անա.
 Մի իրիկուն յես կվառեմ
 Դրոշակն այդ՝ հին հորիզոնիդ,
 Թող շներըդ վռոնան անդեմ,
 Ու թող ցնցվի չեկեղեցիդ:

Յես մի գնացք գծից հանած
կթեքեմ դեպ հանդերը ծեր,
Թող գան, հերկի մշուշը մատ,
Հանգույցները հազարաձև.
Թող գան, ճչա ձեր դնչի դեմ
Քաղաքների ճիչը վայրի,
Ճիչը հրե ու հրաթև,
Ճիչը հրի ու յերկաթի:

Թող գա, ճչա ձեր դնչի դեմ
Քաղաքների ազմուկն անձև,
Ուժի մասին, վոր կարող է
Կամուրջները ողբ հանել.
Թող գա, ճչա գյուղերի դեմ,
Վոր դարան են մտել աշխատեղ—
Կայարանը յերկաթաթև
Ու քաղաքները գեղնատենդ...

3

Տապ ու կեսոր:
Կարծես կիսվել է արևը,
Ու հոսում է դաշտի վրա հալած վոսկի.
Խոր թռքում են շուքերի տակ ձեր շները,
Մպասում են ինչ-վոր խոսքի:

Տապ ու կեսոր:
Ու հասկերի ձանձրույթն անձիր,
Ձանապարհներ անհրապույր ու առածիր.
Ահա մի սայլ է իր ճոխնչը անառատ.
Փոշոտ գեճքով մի գյուղացի գյուղը մտավ:

Կանգնեց սայլը աղբյուրի մոտ,
Ու փնչացին յեղները՝ լայն,
Ու հայացքները անհազուրդ,
Ծույլ՝ նետեցին ջրի վրա.
Խոր ճուռացին դռներ յերկու—
Ու մի քանի դիմազներ
Նայեցին մութ հոնքի ներքո,
Վորպես մի հարց — ո՞վ է յեկել:

— Մեկքոն ամի, Մեկքոն ամի,
Յեղները թող, մեզ մոտ արի,
Քեզ է կանչում քո խնամին,
Մեկքոն ամի, արի, արի...—
Զիլ, կանչում է դեմի դոնից
Մերկ վոսներով ինչ վոր Շողիկ,
Նայեց մոայլ Մեկքոն ամին,
Բայց վոսները չառավ հողից:

Յես է յեկել, վոնց վոր գնաց,
Բայց քաղաքից գյուղ է բերել
Մի լուր սև ու մթադնած,
Վորպես ամպը կարկտաբեր.
Ու մթնել է Մեկքոն ամին,
Վորպես ամպը կարկտաբեր,
Իրիկնային փոշոտ քամին
Մոլբ է նրա գեճքին թափել:

Հենվել է նա իր հին սեղին,
Նրա նման ջարդված ու հին,

Չնկատեց, վոր մեծ ճամբից
Նախիրները բառաչեցին.
Չնկատեց, վոր արտերից
Հնձվորները վերադարձան,
Ու ծուռումուռ փողոցներից
Աղջիկները ջրի յեկան:

Մինչ յեղները թոքում ելին՝
Ջրի վրա հանած լեզու,
Իջնում եր մուժն իրիկնացին
Նայիրական հին դաշտերում.
Դեռ նվում եր նրա գանգում,
Վորպես հառնող, հին մի վոճիր,
Դարանամուտ քնք քաղաքը
Ու համբավը գորակոչի:

4

Ջորակոչ ե: — Վոնց վոր սելավ
Դա ու խփի հոտ ու նախիր,—
Ջորակոչ ե: — Ես ի՞նչ ելավ,
Ո՞վ ե ուզում, համ տա մահի...
Հավաքում են զորք անքանակ,
Ամբանում են ներսից, դրսից,
Համարվում ե աստղ ու ավազ,
Չի համարվում զորքը Ռսի:

Ձեթի լույսի ցուլքերի տակ
Մոժուս մնում են լուռ դեմքեր,
Ու մաքերում սե, անհատակ,

Տագնապում ե գեղի ողեն.
Ու ծխում են չիրուխները
Հարցերի սկես անլուծելի,
Ամպ ե կտրել լրարերը
Ու մթնել ե ողի ծերին:

Ու վոչ վոք չի ուզում խոսի.
Ել ի՞նչ նոր խոսք, ել ի՞նչ նոր հարց.
Ջորակոչ ե դարհուրելի,
Ջորակոչ ե, պրծավ գնաց...
Տեսնում ելին իրենց մաքում
Գլուղից քաղաք տանող ճամբան,
Տրեխների շարքերը գորշ
Դեպի քաղաք ու սաղմադաշտ...

Տեսնում ելին իրենց մաքում
Այնքան դաշտեր, հերկեր անթիվ,
Հողերը չոր ու անհագուրդ,
Ուր չի ընկնի վոչ մի հատիկ.
Տեսնում ելին զարհուրելի,
Մառ գծերը սաղմադաշտի,
Ուր գնդակը չի խնայի
Վոչ մի հաշտի ու անհաշտի...

.
.

Ու վոռնում են շները գորշ
Կալի վրա անգեզ, թափուր,
Ու տագնապով մի անորոշ
Յերթիկներից հող են թափում:

5

Գիշերը գորշ, գիշերը շիւ
 Գիշերն անշող մշուշ ու շուք,
 Գյուղն է նիրհել, աչքում փոշի,
 Ու չի լսվում վնչ մի շշուկ.
 Միայն մռայլ մի զառանցանք
 Սավառնում է գյուղի վրա,—
 Մեկը դործեց ինչ-վոր հանցանք...
 Ու փախել է քունը նրա:

Ծանրացել է կարծես մի ձեռք
 Գյուղի բլին, վոր չճչա,
 Ու մոռում է մի ցավ անտես,
 Ծանրանում է դաժան ու չար:

Առավոտյան, հին գյուղերից
 Դեպի քաղաք տանող ուղին—
 Հուն կլինի հորդան ուժի,
 Ուժ մկանի, քարի, հողի,
 Ու կհորդե ուժն այն արագ
 Դեպի քաղաք ու փակուղի,
 Դեպ դորանոց ու դորձարան,
 Դեպի մահ ու յերկաթուղի:

Ել թնչ անի գյուղը անկար,
 Անառավոտ ու անհրդեհ,
 Յերբ չի լինի մինչև անգամ
 Ճչալու ո՛ւժ քաղաքի գեմ:

Ո՛, վերջնամերձ այս գիշերում
 Թողեք ճչա ու բառաչե
 Գյուղը դառամ ու անարչուն,
 Քանի վոր դեռ գլխի մի չե.
 Ո, վերջնամերձ այս գիշերում
 Թողեք յեկնի արնոտ թաթին,
 Ու թող լիզի վերքերն իր հում
 Ու թող սիրտը նրա պայթի:

Ու թող կույր ու սարսափահար
 Նախիրները, վորպես քանդում,
 Զարկվեն մոլի ու խելագար,
 Զարդեն մարագ ու գնմ, ու գնում...
 Ո՛, գիշերում այս դժնադեմ
 Թողեք ճչա, թողեք հորդե,
 Ո՛ւշ կլինի վաղը արդեն՝
 Նա կմեռնի քաղաքի դեմ...

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

1

Առավոտ եր, անձրևում եր յերկինքը մառ,
 Առավոտ եր իրիկվա պես, իրիկվա պես խավարամած.
 Զարթնած գյուղը դեռ իր տենդում հիվանդ եր մի,
 Վորն ուզում է անցած որից մի բան հիշի:

Յե՛վ ի՞նչ է վոր.— թուխսլ ու քամի, աշնան անձրև.
 Են՛ վոր աշնան գյուղը քամի, թուխսլ չի տեսել.
 Են՛ վոր աշնան դեղերը չեն տարվել ջրից,
 Ու արևը վար չի նայել նորից, նորից:

Առավոտ եր, անձրևում եր յերկինքը մառ,
 Ո՛ր, առավոտ խավարամած:
 Աշնան քամին դարանել եր գյուղի յետև,
 Գյուղը տենդում տագնապում եր, տենդում եր դեռ:

Ու վորպես հարց, կամ յերգ՝ մեռնող գյուղի մասին.—
 Մտորում եր գյուղի վրա սարը Մասիա:

2

Շուռ է գալիս Մեկքոն ամին:—
 Այդպես՝ կռիվ պիտի լինի.
 Տեսնես են՛ վոր՞ թագավորն է
 Են՛ մյուսի հողը խլել.
 Բարկացել է մյուսը թունդ,
 Ուշունց ու խոսք, հետո էլ՝ թե

—Յե՛ր, հավաքի թվանք ու թով,
 Կովի պիտի կանգնեմ ըս դեմ:

Թագավորն էլ հրաման արավ
 ժողովրդին իր հպատակ,
 Արքայական ուժովն իրա
 Գրեց մի թունդ հրովարտակ.
 Թե՛ ով ունի բխ ու միբուք,
 Չեաներին՝ կոշտ, գլխին՝ գտակ—
 Թող գա, գրվի յերկու որում.—
 Մի պետութուն, մի նպատակ:

3

...Կանայք — ծածկած աչքերով,
 Մանկիկները գրկերին,
 Ծերերը թուխսլ ու խոժոռ
 Ու ախրությամբ մի դեղին...
 Անձրևածե՛մ փողոցով
 Ու մաքերով անընդհատ,
 Մաքերով մութ ու խոցող—
 Հին ժամի բակը մտան:

Ու նրանք, վոր մի որից
 Վահկալ պիտի գնային,
 Թուել էյին մաքերով
 Արնոտ դաշտերը մահի,—
 Ու բոլորի մաքերում
 Ռուժեր կային թագնված,
 Ու բոլորի մաքերում
 Գիրքեր խոր ու մթագնած...

4

Կայարանը դժի վրա՝
Մի սպիտակ, հսկա թռչուն.
Կայարանում—իրարանցում:

Լցվել էյին վագոններում հազար Մաքո,
Շինելներով, փաթեթաններով, պայուսակով.
Սոսում էյին, սրախոսում ու ծիծաղում:

Կայարանում—
Թափվել էյին պառափները մոտ գյուղերից,
Յեկել էյին՝ առած պարեն ու վարանում,
Յեկել էյին վերջին ժամու հրաժեշտի:

Կտան ինչ վոր հաց է, պարեն,
Հապճեպ համբույր, արցունք գուցե,
Բայց ծանրացած բուր քարե
Ելի պիտի գյուղ դարձնեն.
Պիտի կծկվեն պատերի տակ,
Լուրեր լսեն քաղաքներից
Ու տագնապով մի անհատակ
Միշտ սպասեն նամակների:

Վոր իմանան, թե վողջ են դեռ,
Վոր կովում են խրամատներում,
Վոր կարող են մի որ գալ յեռ
Ու աշխատել չարքաշ ու լուռ.
Վոր կարող են վերադառնալ՝

Քաղաքների հարկը տալու,
Հարկ՝ հողերի, նախիրների,
Հարկ՝ ապրելու ու շնչելու:

Իսկ մինչև այդ գյուղը հողից
Պիտի հնձի մաղթանք ու մահ,
Վոր աշխարհի կարգը փոխվի,
Վոր պատերազմը վերջանա.
Իսկ մինչև այդ, վորպես քամի
Կամ դառանցանք մի ծամածուռ,
Պիտի լսի գյուղը ժամից—
«Սաղաղություն ամենեցուն»...

5

Յերգում է մի խումբ «Տա-հո՛ւմ-են».
Շարժում են թևերը անվարժ.
—Տա-հո՛ւմ են, տա-հո՛ւմ են, հո՛ւմը.
—Հն, հն, հն, տանում են... հորանց:

—Հեյ-գիլի, սալգնթ Ասո,
Փրանկի յերկիր հասար,
Ջարդեցիք մեկը տասով,
Վորպես նոր մի քաջ Նազար:

Արտերը կբազվեն ենպես,
Արտերը հենց հաց կբառնան,
Պանիրն էլ կբուսնի վրեն,
Կզնան, կլցվեն մառան:

Քյոթսվեն ել քաղցր կլինի,
 Ամեն որ կասի՝ վո՞նց եք...
 Կրանա մեզրոտ բերանը,
 — Եսոր քիչ արտըս... հնձեք...
 — Տանում են, տանում են, ո՞ւմը.
 Հն, հն, հն, տանում են հորանց. —
 Յերգում ե մի խումբ «Տանում են»:
 Կայարան: Սպասում:

Գնացք:

6

Ահա վորպես սուրը գահձի
 Մահապարտի վզի վրա՝
 Ընկավ յերեք հարված զանգի
 Կայարանի սրտի վրա:
 Ճչաց շչակն աղիտղորմ,
 Խմբերն յեղան ցան ու ցրիվ,
 Ճչաց շչակը անողոք, —
 Վագո՞նները գրավեցին:

Շտապ պատվեր, խոսքեր անկասպ,
 Զգուշության խելոք խրատ,
 Ու գնացքը, վորպես դադադ,
 Դանդաղ շարժվեց գծի վրա.
 Վագո՞ններից, նբբանցքներից
 Դուրս պարզվեցին հազար ձևոներ,
 Ու գլխարկները շարժեցին՝
 Վորպես հեռու մի հրաժեշտ:

Որն եր մթնում կամաց-կամաց.
 Նբանք յերկար կմնային,
 Յեթե չիջներ մթագնած
 Աղջամուղջը լրելկնային.
 Որն եր մթնում գորշ, անորոշ, —
 Ու քաղաքի դերկը ընկան
 Կայարանը քաղաքամոտ,
 Ավանները նայիրական:

— Բռնեք հիմա գյուղի ճամբան,
 Նույնն ե գյուղը՝ մշուշ ու հին,
 Նույն սայլերի ցավը դանդաղ,
 Նույն գորշ շարքերը հյուղերի.
 Հարկահանն ե ենտեղ ելի,
 Հսրկատուն եր կռիվ գնաց,
 Հին Հիսուսը նստած սելիլ՝
 Մտորում ե մթագնած:

Գնա ու տուր հարկահանիդ,
 Հիսուսներիդ ու տերերիդ,
 Քո նիհարած նախիրներից,
 Մառաններից ու արտերից.
 Գնա, պառնվ, ասն քո ծեր,
 Չարքաշ մարդուն, վոր լնվ դատի,
 Վորովհետև լայնացել ե
 Ազահ յերախը քաղաքի...

Բայց չգլտեր գյուղը գառամ,
 Վոր իր հորդող ուժը ելի

Մի որ պիտի վերադառնար՝
 Առած ուժը քաղաքների,
 Պիտի դառնար ցինկ ու յերկաթ,
 Պիտի դառնար ուժ ու դրոշ,
 Հնի համար դահիճ ու թաթ,
 Հնի համար — վախճան ու գուժ:

Ու պիտի դար եդ ուժը մեծ
 Լենինյան վեճ պայծառ կամքով,
 Ու գյուղից գյուղ, ու դժից գիծ,
 Մինչև մուժը քաղաքամուտ
 Պիտի կռեր նոր մի աշխարհ,
 Պիտի հառներ գյուղը անկար —
 Ու քաղաքը պիտի ժպտար
 Ու վողջուներ յեղբայրաբար...

7

Որերըդ մութ են կրկին,
 Գետերըդ մառ ու այլի,
 Դեռ թախծում ե քո հոգին,
 Դառնակսկի՞՞ Նայիրի:
 Ու չի փոխվել դեռ վոչինչ
 Արևիդ տակ հրասիրտ.
 Կյանքըդ չարքաշ ու չնչին, —
 Մահ, առևտուր, հարսանիք:

Յերբ աշխարհը դրել եր
 Սիրաբ իրա — կրակին,

Յերբ աշխարհը տոնում եր
 Արյան, մարտի կիրակին, —
 Դեղին արյուն եր հոսում
 Քո քայքայված յերակում,
 Ու կախվել եր մշուշում
 Դրոշակըդ յեռագույն:

Յերկրում մահն եր արշավում
 Դեղնատենդ ու հաղթական,
 Փողոցներում, խաներում.
 Հաղար հիվանդ դաղթական:

Յեկավ որը որերի. —
 Տեղահանված դյուղացին
 Բացեց դուռը քաղաքի
 Փռչեկված գալրոցի.
 Ու՛ կույր կրքի մի գերի՝
 Գրադարանը մտավ,
 Ոջախ շինեց դրքերից,
 Վառեց ու դառն ժպտաց:

Հետո կեղտոտ ամանում
 Յեփեց արեխը իրա,
 Խնցրեց ջուրը վորդուն,
 Տրեխը ինքը կերավ...

Խրախում եր խողերան,
 Զարհուրելի արշավում:
 Քրքըձում եր սով արքան
 «Դրախտավայր» իմ աշխարհում...

8

.
 Վորպես տենդից նայող մի աչք,
 Արնամշուշ ու աներիզ,—
 Դնշտն ե իմ դեմ նայիրական
 Ու թախիծը մեր դաշտերի.
 Վորպես քանդում մի անվկա, —
 Ուրուների ապրող թաքուն,—
 Ահն գյուղը նայիրական,
 Իր փողոցները մահաբույր:

Գյուղ նայիրյան, գյուղ նայիրյան,
 Անառավոտ ու անհրդեհ.
 Ահն սովը մեծարերան
 Բո ջլատված ուժերի դեմ.
 Նորից խովը ժանդոտ ու հին,
 Պարտքեր նորից ու պարտապան,
 Գնն, լծիր չեզոք վերջին,
 Գնն, հերկիր հողը խոսպան:

Յեթե չունես չեզ ու լծկան,—
 Պիտի լծես կովը հզի,
 Միայն չքվի սովը հսկա,
 Սոֆն անողոք ու կատաղի.
 Ինքը պիտի լծվես մաճիդ
 Յեթե չունես վոչ ես, վոչ են,—
 Ինքը պիտի լծվես մաճիդ...

Ինքը լծվեց իրա մաճին
 Ու աչքերին արցուն իջավ:

Ու ցասումը նրա աճեց,
 Ու հայացքը նրա ճչաց:

Պատերազմը դարձրել էր
 Նրան չար ու անհյուրընկալ.
 Պատերազմը, վոր ցրել էր
 Հագար ավեր, ավար ու ցավ.
 Պատերազմը, վոր դատողի
 Բազուկները կես եր արել,
 Իսկ ախորժակը տերերի
 Հագար հողմով բոցավառել:

Պատերազմը, վոր քաղաքին
 Դարձրել էր յոթ գլխանի,
 Պատերազմը, վոր աշխարհից
 Փռչու ամպ եր հանել յերկինք...
 Ինքը լծվեց իրա մաճին,
 Գլխից հանեց հին գտակը,
 Նայեց ժամի ծուլած խաչին —
 Ասելու խոսք չգտավ ել...

9

Տապ ու կեսոր:
 Ելի կիսվել եր արևը
 Ու հոսում եր դաշտի վրա հալած վոսկի.
 Շուքերի տակ մրափել են ծեր շները,
 Չեն սպասում վոչ մի խոսքի:—

Գյուղը՝ հիվանդ, նիհար կատու,
 Տարածվել է դաշտի վրա,
 Ու գիտի, վոր արտում, հանդում
 Յերեք հասկ կա, հազար չերաշտ.
 Պատերազմը անդարձ խեց
 Հազար Սաքո նրա գրկից,
 Բայց չեր մեռնի այս անդամ ել,
 Նա կկանգնեք, կապրեք նորից:

Նա կկանգնեք այս անգամ ել
 Ու փառք կտար խոնավ հողին,
 Վորն իր ուժերը քամել եր
 Ու չեր տվել մի անկողին.
 Նա կաշխատեք կույր չեռանդով,
 Նա կաշխատեք լուռ ու չարքաշ,
 Ինքը միայն դառը դատող,
 Վողջ աշխարհը սլարտապահանջ:

...Մի առավոտ, չերք ծուլ զնդաց
 Հին դանդակը գյուղի վերից,—
 Զորակոչը գյուղը ընկավ,
 Բայց այս անգամ... Յերևանից:

.

...Մթնում է սրը,
 Ո՛ր, հալածված Հիսուս,
 Բոբիկ են վտաները,
 Յնւրտ է, ցնւրտ:

Սարսափ ամեն ինչում
 Ու հոխոք հողմերի.
 Ի՞նչ ես, ի՞նչ ես շրջում,
 Վողորմելի:

Մտիք, հյուզը մտիք,
 Ուշ է, շվար շրջիկ,
 Պսակը բարձին գեր,
 Ննջիք, ննջիք:

...Թակում է դուռը հողմը.
 —Ա՛յ քեզ ցավ ու կրակ...
 —Դուռը բացե՛ք:— Ո՞վ է...
 —Բնած ես, թե՞ մեռած...

—Ոգնիք, Աստվածածին...
 Ու անքում է գյուղը.
 —Ոգնիք, Աստվածածին,—
 Ու բացվում է դուռը...

—Ո՞վ ես... —Յես եմ, մարե...
 —Դո՛ւ ես, կարո՛ւ, չեկա՛ր.
 Վերջացանվ կռիվը...

—Ձե, փախել եմ մենակ...

—Կարո՞, կորած Կարո,
Դեղերա՛յք դարձար, ախ:

Ու կծկվում ե հյուզը,
Կարոն ներս ե մանում,
Հեկեկում ե մայրը
Խրճիթի մթնում:

Ու մոռում ե Կարոն

Ատամների միջից.

—Փախչում են, չեն կոփում...

—Փրկիր, Աստվածածին...

12

Այսոր, չերը վողջ գյուղը քնել եր խորունկ,
Յեվ քնել ելին հյուզերը հանգած,
Մի ձի վրնջաց իր ախրոջ գոմում,
Ապա չերկրորդը, չերրորդը, չեմ հանկարծ...

Հին գյուղի ձիերը նիհար ու վոսկրացած
Դոփում են, դոփում են գետինը. — ինչո՞ւ...
Վարում, խավարում պայթեց մի հրացան,
Իսկ ձիերը վրնջում են, վրնջում...

Հեռվում չերկաթուղին ճչաց ու ազմկեց,
Հին գյուղին չար բոթ եր, հյուզերին՝ վողջուչն-
Հողից դուրս փախան դաշտացին մկները,—
Դոփում են ձիերը, վրնջում, վրնջում:

Այս գիշեր չքնեք, ով քնած՝ չեղնի թող,
Արշալույս կբացվի լեռները վրա,
Լեռներից կպարզվի մի կարմիր, կարմիր շնր,
Հին գյուղը կդուռա՝ վոսներին չեւած...

—Վողջուչն հողազուրկին կարմիր քաղաքից,—
Խրինջում են ձիերը խնդութչամբ հետին.
—Մահ նրան, ով մեր դեմ մահ կաղաղակի,—
Ձիերը փորում են, փորում են գետինը:

Ճչում են սուլիչները լեռներից անդին.

—Վողջուչն հողազուրկին՝ կարմիր քաղաքից:

Ու ձգվում ե գյուղը անհանդիսա, անհանդիսա,
Մի մասը չեղել ե արդեն վոսի,
Թռչում ե սուրհանդակ քամին հանդերից,
Լեռները կապում են ալ-կարմիր գոտի...

1924-1926

ԿԵՍ ԳԻՇԵՐԻՑ ՄԻՆՁԵՎ ԱՌԱՎՈՏ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

1

Մեր գյուղը հոգնած հողագործ՝
 Հին լեռան գոգում հանգչող,
 Հին ժամը վոնց վոր հորաքույրըս՝
 Հենված կոներին իր չոր:

Ձգվում ե ձիդ ու անկասկած,
 Աջից՝ խաչերի ճամբան,
 Ենտեղ ե ծղրիդը յերգասաց,
 Ենտեղ աճում ե սպանդ:

Ենտեղ շատ անգամ եմ թռել
 Գիշերով, թռչուն քան մի,
 Տեսել եմ դարզանդ ու մեռել,
 Արթնացել՝ դուրսը քամի:

Սաչերի ճամբով ծուռ ու մուռ
 Թե թեքվես դեպի հարավ,
 Մինչև գա գիշերվա մութը—
 Կհասնես քաղաք:

Պատմում եր մայրս սիրով,
 Վոր քաղքում մեծ ու զանդին
 Ապրում են մարդիկ անհոգ,
 Մանուկներ վառ ու անդին:

Քաղաքում ամեն ինչ լավ ե,
 Քաղաքում ամեն ինչ ընտիր.
 Յերջանիկ ե անգամ հավը
 Ենտեղ:

Պատմում եր հաչրս հետո
 Սելերի մասին անձի.
 —Սելեր են, բայց ուրիշ ֆանդով.
 Թռչում են, վոնց վոր քամի:

Ձի պետք չի նրան, վոչ ել յեպ,
 Վազում ե չարքի նման,
 Յեվ գոռգոռում ե՝ չարքի պես,
 Յետև թողնելով ծուխ, կրակ:

Իսկ մարդիկ նստած միջին,
 Արխային, վոնց վոր դու, կալում,
 Վոնց վոր յես կծկում եմ սիջիմ—
 Եդ սելը ճամբա յե կտրում:

Պատմում ե, իսկ դրսում քամի,
 Իսկ դրսում չարքեր հերթի,
 Չարքերը հող են թափում
 Մեր սև ու նեղ յերթիկից:

Իսկ հեռվից, դաշտերի մութում,
 Ձգվում ե վոռնոց մի անկամ.
 Մեռնում ե յերևի մի շուն
 Ջրաղացի դռանն ընկած...

2

Ինձ մի որ հայրս զրեց
 Իրա մոխրագույն եշին.
 Ամառ եր, շոգ ու արև,
 Վոսկեծուկի արտեր, փոշի:

Յերբ հեռվից քաղաքը գծվեց,
 Յերբ մի խուճը ծառերի հասանք,
 Դաշտերի հեռվին եր ձգել
 Արևն իր դեղին յազման:

Յես տեսա սարսափ քաղաքում՝
 Անձի Ֆայտոն «չարքի»,
 Տեսա փողոցներ անքուն
 Ու շենքեր շարքի, շարքի:

Տեսա մանուկներ ճկուն՝
 Դպրոցի ճամբով շտապող.
 Մանուկներ տեսա դժգույն,
 Հողադեմ, — մաշված գգահով:

Ու յերբ գյուղ դարձանք ելի
 Ու մտանք մեր ծուռ քուչեն—
 Հյուղերը փոքրացել եյին,
 Ու կարծես գյուղը են չեր...

Ավելի քոսոտ եր, հիվանդ,
 Ավելի խուլ ու անթով.

Իսկ ենտեղ՝ քաղաքը սարսափ,
 Իսկ ենտեղ՝ անձի Ֆայտոն:

Ենտեղ շենքեր վիթխարի,
 Վայելքներ հազար տեսակ.
 Քաղաքը անհնշտ թշնամի
 Գյուղի դեմ չարքաշ:

Ու գյուղը՝ հողնած հողագործ,
 Լեռների հանգուլցում հանգչող.
 Ա՛խ, ժամը՝ ձեր հորաքույրը
 Հենված կռներին իր չոր...

.

3

Տարիներ, ու տարիների
 Սարազանը կույր ու անսիրտ
 Իջավ հորս հողնած ուսերին,
 Ու նետեց կյանքի սալից:

Մի ճերմակ, ճերմակ գիշերով,
 Յերբ կալում լուսինն ընկած
 Փնտռում եր ուլունք ու որոր,—
 Արթնացա հանկարծ:

Հիշեցի խլված արտերը
 Ու հուշերս զնգացին հերթով.
 Հիշեցի, վոր մայրս հիվանդ է
 Այն դժվար որից հետո:

Նայում եր լուսինն յերթիկից,
«Աստծու բաղարջ»-ը ընկած.—
Հիշեցի հորըս, վոր թփեց
Բաղարջին, կարիքից կքած:

Լուսինը նայում եր վերից
Ու մայրս ժպտում եր նրան.
Դրեկ եր նա թույլ թևերը
Իր սգլած ծծերի վրա:

Ո՛, ժպիտը նրա անմիտ
Ու նայվածքը ցուրտ.
Բռնեցի յես նրա բազկից,
Վոր սառել եր, վորպես ձյուն:

Մի ճերմակ գիշերով նա մեռավ—
Ասենք նա վաղուց եր մեռել.
Ի՞նչ ունեք կյանքում անիրավ,
Վոր նրա ուսերին բեռ եր...

4

Յես բատրակ դարձա վարձու
Մի հարուստ գյուղացու մոտ.
Թե ինչո՞ւ—կարիքին հարցրո՞ւ,
Իսկ կարիքը՝ խիստ ու անդուլթ:

Առավոտը բացվում եր հրակ,
Փռոտում եր չարխը արևի.
Փռում եր դաշտերի վրա
Վոսկեզույն, վոսկուն փոշի:

Յերթիկները ծուխ,
Ծուխ ելին մանուկ յերթիկները,
Զնգում եր ժամի դանդը ծուլը,
Վոր գյուղի թիկունքին թիկնել էր:

Անցնում ե քյոխվեն ծանր ու մեծ,
Գլորվում ե տերտերը առաջ.
Ու փոշոս, բորիկ մանուկներ
Ճչում են կալերի վրա:

Բիբերը արևին հառած,
Լնդերը վոսկեշոգ փրփուրով,
Բառաչում ե գյուղի վրա
Լայնակուրծք, առողջ մի կով:

Գյուղի առավոտը լեզենդ է,
Արշալույսը ներկվում ե միգոտ.—
Պարզել ե կարծես լեռներից
Իր սոչը կարմիր մի կով:

Իրիկունը՝ վոնց վոր քահանա,
Յերբ իր սև միբուքը վար կախեր,
Դառնում եյի դաշտերից հոգնած,
Բաշ տալով մաշված արեխըս:

Զրույում ելին շուրջըս
Հասկերը հարտերի նման,
Նրանց շուկը, շուկնջը
Տարածվում եր դաշտի վրա:

Կռաքում ելին գորտերը
 Լճամոտ հարսնիքի մասին.
 Ծղրիզը, վոր տեր եր արտերին,
 Ծղրտում եր՝ նրանց մասնակից:

Ու ճռռում եր դանդաղ մի սել
 Մոտակա բլրի ուսից.
 Ու խաղաղ բարձրանում եր վեր
 Լուսնի արծաթե սինին...

5

Եսպես ել մի որ, կանցնեյի
 Դաշտուղու թողը մագերես,
 Հոգնությամբ անհասկանալի,
 Հոգնությունըս տված հասկերին:

Թողնել գյուղը, հեռու հեռանալ
 Մի տեղ, ուր բոլորն են տաքանում,
 Կամ թեկուզ մեռնելու համար.
 Մակալն ուր գնալ, սակայն ուր...

Աշխարհը հարստի բաժին,
 Աշխարհը հարստին թող,
 Բատրակին աշխարհի վոշին,—
 Աշխարհը անդուռ մի գոմ:

Ու վորպես հեռու, հեռ մի ցուլ՝
 Քաղաքը կանգնեց իմ մաքում.

Նա շարժվեց, մոտեցավ ծուլ,
 Քարացավ կարծես քիչ հեռու:

Վառվեցին դեղնալույս լամպեր
 Նրա կողերին, վզին,
 Նա բացեց իրա լնդերը,
 Ու նայեց ինձ:

Վողջ գիշեր փայլեց իմ հոգում
 Հեռավոր հույս մի անհույս.
 Վճռվել եր - կյանք կամ անկում,
 Վճիռըս—փախուստ:

Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

1

Յես քաղաք հասա գիշերով,

Մտա ինչ վոր խան.

Սան, ի՜նչ խան, դու պալատ հաշվի,—

Մի մղած ու նեղլիկ դուխան:

—Բարև,—ասացի,—աջողում.—

Բողոքն ել անգործ գյուղացիք,

Սնունդ եյին թասերով ամբ ջուր.

—Ա՛յ բարև, թաղա ձուկ,—ասին:

—Ե՞, վոնց ե գյուղերի բանը,

Հարցրին դեմքերով ամպած.

—Գյուղերը ընկել են հալից,

Գյուղերը մեռնում են դանդաղ:

—Կա՞ ետեղ մի լավ գործ, ասի

—Լավ գործ, շատ... ենպես չի՞, Սեթո.

—Լավ գործ կա, բայց մենք չենք վաղի,

—Փլավը տալիս են ձեթով...

Եդ վոչինչ, մտածեցի չես,

Յուզով չե, թող ձեթով լինի.

Մաքերըս կարեց թելի պես

Մի փափախ, հարբած յերևի:—

—Դու ինչո՞ւ թողիր գյուղը,

Քաղաքը ուզում ես ուտել...

—Վատացան զործերս ես տարի,
Դժոխք եր կյանքը, յես ել, դե...

—Դու ել դե... ուզում ես ուտել,

Հն-հն-հն, ձեթով են տալիս.—

Սեղողում եր դուխանի մութը.

—Հն-հն-հն,—լսեցի նորից:

Նա հետո շարժվեց ծանր ու մեծ,

Շուռ յեկավ վոնց ջաղացաքար.

—Քաղաքը արորել ե մեզ

Դու ինչո՞ւ գյուղից դուրս չեկար...

Սիրտ առա ես ցավոտ խոսքից.

—Ել ինչո՞ւ ետեղ եք դուք.

Արծաթ եք գտել, թե՞ վոսկի,

Ել ինչո՞ւ չեք դառնում տուն...

—Հն-հն-հն, խելո՞ք պատասխան,

Յետ դառնանք, յես գնանք, Սեթո...

—Քո վոտից կշինենք յեղան,

Իսկ գերան՝ իմ վոտի փետով...

Ու բացվեց աչքս անալի,

Վոնց վոր դուռը մեռելատան.—

Բողոքն ել գունատ, անմիտ,

Բողոքն ել հաշմանդամ...

Ու վառվեց գլուխս գեղի պես,

Յեվ իջավ ձակտիս մի քար...

—Քաղաքը արորել ե մեզ

Գյուղն ինչո՞ւ լքեցիր, չեկար...

Գիշերը չերկար ու տարի,
Շենքերը սարսափ են փչում.
Յես փախա են զարհուր խանից,
Քնեցի մի մեծ տան քնջում: —

2

Առավոտ, ու որը ամպ էր,
Բայց մթին մտքերս ցնդած.
Կորավ են խանի նեղ ճամբեն,
Պավարը — սև՝ վոստիկան:

Ու դեմից դռալով թռան
Իմ վաղուց սիրած «սեղերը».
Հիշեցի մեր եղբ սրբազան,
Ու մորըս կորած, սիրելի:

Յես անցա փողոցից փողոց,
Մինչև վոր քաղաքից դուրս չեկա.
Յեվ ահա կախարանը, դեպո,
Ռեկսեր, կամարներ, շոգեկառք:

Չարմացել ելի չես երբան
Եդ որը մինչև կեսոր,
Վոր ել զարմանքի ուժ չկար,
Ու ամեն հրաշք՝ ել անդոր:

Վորքան ել չլիներ հրաշք
Ու վոչ մի անալիսկալ,
Յեղավ մի բողե, չերբ հաղիվ
Չարմանքից չես գետին չընկա:

Իմ դեմից մեկը գալիս էր,
Չեռքին հաց և ինչ վոր աման,
Ծանոթ էր նրա ծուռ վիզը
Ու աչքերը խոր, խորամանկ:—

Մեր գչուղից էր նա, Հանեսի լաճը,
Իր հոր հետ գչուղը թողած.
Բայց դու տես՝ վորքան է աճել.
Ի՛սկ և իսկ քաղաքի տղա...

Մոտեցա ու — բարև՛, ասի,—
Սերգո՛, Հանեսի տղա.
Նա արագ նայեց ուսիս.
— Տո՛, եդ չե՛րբ գչուղից չեկար:

Ել վոչինչ, իսկ հետո թե՛
— Գնանք կախարան միասին.
Տանում եմ հորս...
Իսկ չես...
Յես շնչում եմ հաղիվ:

Չուրախացավ նա, եդ չար Սերգոն,
Ու տես՝ վոնց արագ է գնում,
Ամանը բռնած մի ձեռքով...
Իսկ չես, չես այնպե՛ս նկուն:

— Ալե՛ք, հիվանդ չես, լսի՛ր,
Դու եստեղ սպասիր, տանեմ հացը,
Յետ կգամ, հետո միասին
Տուն կերթանք, չկորչես, հա՛, ցը՛...

Ու անհետացավ վագոնների չեռե,
 Հինգ բոպե հետո — ելի նա:
 — Դե, հիմի պատմի, պատմի, դե...
 Իսկ չե՞րբ դուդ կվերադառնաս...

Վերադառնամը...

Հազիվ թե...

Ո՞ւր.

Ելի գլուզ, միամիտ Սերգո...
 Նայում են աչքերը նրա սուր՝
 Մուլթ ու խիտ հոնքերի ներքո:

Հազիվ թե... ուրեմն

Լավ...

Գիտես ի՞նչ, դու վատ չես արել,
 Վոր ուզում ես քաղաքում մնալ...
 Բայց ահա... աշխատանք՝ դժվար ե...

Հետո թե — կարքենք մի բան.—

Ախ, խելոք եր խոսում Սերգոն,
 Նայում եր մեծ մարդու նման,
 Ու նշան եր անում ձեռքով:

— Մերըդ...

— Նա մեռավ...

— Հա՛...

— Հա՛...

— Իսկ Միրան կ՞մզլը...

— Պարտքի տեղ...

Թուերով շփեց աչքը նա,
 Ու զոտով ծոցե քիթը...

Լալիս ե, — մտածեցի չես, —
 Բայց հանկարծ ծիծաղեց նա.—
 — Հանդերում վազում են ձիերը...
 Նախիրը իջնում ե սարից վար...

— Իհարկե...

— Հի-հի-հի-հի-հի...

— Դե լավ, ի՞նչ կա ծիծաղելու...
 Զարմանքդ դե զսպի հիմի.—
 Սերգոն լալիս ե շառն ու լուռ:

Իսկ հետո բուռնցքը սեղմեց.
 — Սպասեք, կտեսնեք դեռ.—
 Ոստում եր նա մեծ մարդու պես.—
 Դե՛...

Կեսոր եր, արևը դեղին
 Վառվում եր մեր գլխի վրա.
 Ուրիշ եր արևը մեր դեղի,
 Ավելի մեծ եր ու վառ:

Ուրիշ ե աշխարհը ենտեղ,
 Ուրիշ՝ քաղաքում.
 Դրա համար ե Սերգոն եսպիս
 Անհասկանալի ու մուլթ:

Ո՛ւսնսնսն... — Մի ձեռն ձգվեց վակիպալից.
 Կողեր են բառաչում դժվար.
 Բալց եսքան չերկար, եսքան լիք...
 — Սուսնիչ ե, հանգիստ նշան:

Ու գնում ենք դեպի քաղաք
 Յես ու իմ ընկեր Սերգոն.
 — Իսկ գլուղում սկսվում ե կալը,
 Հանդերում գերանդին ե չերգում:

Նա հետո սկսում ե արագ
 Քթի տակ չերգել ինչ-վոր չերգ,
 Հետո չել նալեց ինձ վրա.—
 — Մեր չերգն ե, չերեկ եմ սերտել...

Սերգոն, սատանան զարկի քեզ,
 Սերգոն, մոնթ, մոնթ, ու սե սար.
 Մոնթ ու սե, սե սարի պես,
 Մասիսի պես սառ...

Այն չերեկ եր, չերեկ, — չես ու դու.
 Գառներով գնում ելինք հանդը.
 Գետն ելինք իջնում լողանալու,
 Յերբեմն ել հասնում մինչև վանքը:

Հասկանում ելինք մենք իրար՝
 Յերկու խուրձ հասկերի պես.
 Ի՞նչը դարձրեց ոտար
 Ինձ ու քեզ:

Ո՞ւմ դեմ ես բռունցքդ սեղմում,
 Յեվ ի՞նչ ես չերգում.
 Խորթ են խոսքերըդ, խորթ ես դու,
 Խորթ ես, Սերգոն...

.

Տանջանքից հետո ինչ լավ ե
 Այսպես խոր հանգիստ առնել...
 Ուղեղիս միջից անցնում են
 Սպիտակ, սպիտակ գառներ...

3

Յերեկոցան չեկավ Սերգոյի հաչըր,
 Ինձ ձանաչեց խկուչն ու ժպտաց կարծես.
 Նրա դեմքը մի դաժան կրակով վառ եր,
 Մառ ու մուսլ եր նա Մասիս սարի պես:

Մասիս սարի պես նա փլվեց «խալիչին»,
 Չաչը քաշեց առաջ ու մի քիչ մնաց.
 Լցվեց սիրտս արցունքով՝ չգիտեմ ինչի՞,
 Իջան պատերը սե՛ ուսերիս վրա:

— Գալնու յեն կոր ել.—
 — Իհարկե կգան...
 — Նոր լո՛ւր...
 — Վոչինչ... Իսկ դո՛ւ:

—Դրսից, մինչև իրիկուն, վոչ մի լուր չկար,
Իսկ քաղաքում խիստ խուզարկություն:

—Կխուզարկեն դեռ, դեռ կխուզարկեն,
Եսոր ել, եգուց ել, իսկ հետո՞...—
Ներս մտան չերկուսը, չերեքը, չորսը,
Ներս մտան հերթով:

Ու չեկան ուրիշներն ելի,
Սերգոն չաչ եր լցնում շուտ-շուտ-շուտ.
Իսկ նրանք տաք-տաք խոսում ելին,
Ու խմում չաչը,— ֆոռ, ֆոռ, ֆոռ...

Դրսում խուլ անձրև ե խշշում,
Խշշում են փողոց ու տանիք,
Իսկ ներսում խոսում ե շշուկով
Դավադիր մի ընտանիք:

Յես չեմ մոռանա այդ որը,
Վորքան ել հուշերս հանգած,—
Սերգոյի աճդահա հորը
Յեվ այն, վոր դրսից հանկարծ...

Պատահանը թաղում են,
Սփրթնեցին նրանք...

—Հանուն որենքի բացեք...
—Ո՞վ ե...

—Իշխանության կողմից...
—Իշխանության դեմ մեր դուռը բաց ե,
Յեկեք դռնից մխչն...

Իսկ հետո... Բացվեց պատահանը,
Ու մերոնք արագ դուրս թռան.
Մնացինք Սերգոն, չես ու իր հաչըրը,
«Որենք»-ը ներս մտավ:

—Ո՞ւր են...
—Ովքե՞ր...
—Հավաքվածները...
—Յերեքս ենք, հրամայեցեք:
—Ձերբազալեկ սրան, անիծվածին...
Ու կատարված եր հրամանը:

—Ես լակոտներին ել... Յրիչներ են,
Լրատու, լրաբեր, լրտես...
Ու գնում ենք մութ փողոցով,
Ամեն ինչ՝ մի չերազի պես...

4

.
.
...Մեր գլուզն ե կապույտ մշուշում,
Մեր տունը ծառերում կորած.
Գալիս ե մայրս կուժով
Ու կանգնում ե դռան վրա:

— Ալեք, կանչում ես, — սուր ես...
 — Եստեղ եմ, ա՛ մեր, ճշում եմ.—
 Մոտենում եմ մեռած քույրըս.
 — Չե՞ս լսում, նա քեզ կանչում ես:

— Եստեղ եմ, նաչի՛ր ինձ վրա,
 Եստեղ եմ, եստեղ, ա՛ մեր.—
 Քաշում եմ փեղեղը նրա,
 — Ո՞ւր ես, — կանչում ես, — Ալեք...
 Իսկ հետո նկատում եմ ինձ.

— Քաղաքից եմ ձենըդ, վա՛նց լսեմ...
 Համբուրում եմ աչքերս պինդ:
 — Կարծեցի զինվոր ես զնացել...

Գրկում եմ նա ինձ անհանգիստ,
 Ու թվում եմ ինձ, վոր ահա,
 Չենքեր ու շինել կա հագիս,—
 Գնում եմ թշնամու վրա...

Իսկ Սերգոն... Վորտեղից վորտեղ...
 Քաշում եմ թևըս. — հետս չեկ,
 Մենք ուրիշ թշնամի կգտնենք,
 Ուրիշին կխփենք մենք...

Ու կապում են իմ թևերը,
 Մտնում եմ ինչ վոր դռնից ներս.
 — Ալեք, — կանչում ես, — սուր ես,
 Ալեք, — կանչում եմ մերս...

— Ալեք, արթնացիր, հիվանդ ես...
 — Հիվանդ եմ, հիվանդ եմ, հիվանդ...
 ...Սերգոն ես, ի՞ր հաչըր, չե՞ս...
 Չորս պատեր... Հիշեցի: — Բանտ:

5

Անցել են տարիներ այն որից
 Ավտոյի նման սրընթաց.
 Յես հիշում եմ նորից ու նորից
 Տարիներն այն թեժ, զրնգան:

Բանտում յես ամբացա մտքով,
 Դարձա հնի դեմ վոխակալ.
 Բանտում ինձ դարձրեց Սերգոն
 Հեղափոխական:

— Կոխվ հին, քսր կարգերի դեմ,
 Հարստին — գնդակ մի անշնդ.
 Վորպեսզի մեր քրտինքը չուտեն,
 Մեր Ծիրան կովը չքշեն:

Որ որին լցվում եմ արագ
 Նորանոր ընկերներով
 Խոր, խավար մեր կամերան,—
 Ու բերում են, դեռ բերում:

Իսկ մինչ այդ զորքը թշնամի
 Ծեծում եր չերկրի դռները.

Ուռչում եր ծանր մի քամի,
Թևերը վառողով բեռնել եր:

Բոլոր կոչերը զուր ու բուժ,
Արթուն են մեր ընկերները.
Հեռախոսները մոռում են խուլ.
— Ձեն կովում. Ղարսը ընկել ե:

Լցվում են քաղաք — գաղազած
Ղազախի գյուղացիները.
Մեր կամքը սուլում է անսասան.
— Բայց արեք բանտերի դռները...

Ու բաց են դռները բանտի,
Տիրողը շարաված անդին.
— Վողջճւյն մեր ազատ լեռներին,
Վողջճւյն քարերին, հանդին:

— Սերգո, լսճւմ ես, գյուղ գնանք... —
Ու դուրս ենք գալիս քաղաքից.
Արևը, վոնց վոր կարմիր չարխ,
Փռուում է սարի քամակին:

Վաղն ետեղ նոր կյանք կլինի,
Ձի լինի ել վոչ մի ծարավ.
Ձի մնա թողն անգամ հնի,
Յեվ ամեն յերթիկ — գործարան:

Վաղը, Սերգո, կյանք կլինի,
Մեր կամքով ու մեր քրտինքով

Աշխատանք ու ջանք կլինի,
Սեր-վողջույն եղ վաղվան, Սերգո...

Ժպտում է որը, որը հաշտ.
Թեքվում են լեռները թամաշի,
Արևը վոնց վոր կարմիր չարխ
Փռուում է սարերի քամակին:

Մեր գյուղը՝ վիրավոր մի բատրակ՝
Ընկած լեռների հանդույցում, —
Յեկել ենք քաղաքից ահա,
Բերել ենք նրան ոգնություն...

6

.
.
— Ոգնութճւյն, ոգնութճւյն, հեյ...
Պայթել է գնդակը վատի.
Ոգնութճւյն, ոգնութճւյն, հեյ...
Գյուղից ներս ու գյուղից անդին. —

Ոգնութճւյն, ոգնութճւյն, հեյ...
Վառողը չոր պահենք դեռ,
Ելի թշնամին դոփում է
Մեր կուռ, շինարար կամքի դեմ:

Մենք ուզում ենք հասկերի չերզը՝
Շրտպանելի ձայնի տեղ վոխերիմ,
Բալց նորից թող գնդակը յերզի
Դաշտերում խուլ ու մոխիրե:

Ուզում եյինք, վոր արտերում՝
Հասկերը գերանդուց փովին...
Հիմա նախ չարկամ վատերին
Արտերում պիտի փունք:

Վորպեսզի չլինի մի արգելք,
Մեր ճամբին հսկող մի սարսափ,
Կրակեցեք, կրակեցեք, ընկերներ,
Վոխերիմ ու անսասան...

—Սերգո, գնում ենք ելի,—
Ու ժպտում Սերգոն չոր.—
Վերցնում ենք հրացանները,
Գնում ենք ձյուների միջով...

.

Կրակում են խանդով
Գյուղում դարան մտած,—
Կրակում ե խանդով
Դաշնակցական բանդան:

Մեր դիրքն ամուր ե
Տրաքաբաքոցի դեմ թունդ.
Մեր դիրքը բլուրն ե,
Նրանց դիրքը—տուն:

Կրակում ենք յերդով,
Ձյունոտ փոսից, քարից,
Հրահանգում ե ձեռքով
Հրամանատարը կարմիր:

Կրակվել ե Սերգոն
Ու դեմքը վառ ե.
—Ղոչաղ կացեք, տղերք,—
Սերգոյի հայրը:

Ո՛վ ե մեր դեմ բռնի
Կրակում վար ու վեր.
Նշանը թեք բռնի,
Թհդանոթածիզ, հե՛լ...

Հե՛յ, խաղում են նրանք,
Կրակում են հեռու:
—Գրո՛հ, կրակ, կրակ...
Ու մտնում ենք գյուղ:

—Ա՛խ...
Մի գնդակ անկամ,
Մի թեժ ու չար դե,
Սուլեց, ծակեց քրանած
Սերգոյի հոր ճակատը:

—Հայրիկ,—ճչաց Սերգոն զիւ,
Նա ընկավ թեք,
Ձյունի վրա բացվեցին
Արնոտ, կարմիր վարդեր:

Ռազմիկները կարմիր
 Դեպի գյուղ թռան,
 Դաշտում յերգում եր քամին
 «Ինտերնացիոնալ»:

Ե Ն Տ Ա Ր Ի Ն

Սենյակ բացվեց են սև տարին.—
 (Կարգացողը տեսնի բարին)—
 Կաքափն իջավ մամռոտ քարին,
 Կտուցը լիք կարմիր արին:
 Լուրը մտավ, գյուղը բռնեց,
 Ծեծեց յերգիկ, ձեծեց զոներ,
 Ծիծաղը մեր սրտում սառավ,
 Իրար անցան մանուկ, սլառավ:

Քյոխվեն կանգնեց կարի ձերին՝
 Փեշատած թուղթ բռնած ձեռին,
 Ասաց.— վերին ուժի կամքով,
 Թագավորի հրամանքով՝
 Կոխվ բացվեց հենց ես ժամին
 Տերության հետ մեզ թշնամի:
 Պիտի գնալ, պիտի գրվել:
 Մեր վաթանի համար կովել:

Տերտերն չեկավ սև փարջով,
 Խաչակնքեց աջով, խաչով,
 Հետո ժամի սարքը հագին
 Ազոթք արավ քթի տակին.
 —Մնւրը Հովանես սարի դռչի,
 Մենք վոտիդ տակ հող ու փոշի,
 Մեծ թագավոր, արդար խոսքով,
 Վոր նստես ի քաղաք Մոսկով,—

Ձեր կամքը մեզ համար որևէք,
Պիտի գնանք, պիտի կովինք՝
Յն սուրբ մասունք քաջ վարդանի,
Աջըդ պաշտպան մեր վաթանին,
Մեր վաթանին ու մեր կուռին,
Մեր հավատին ու մեր կովին...
Յն բարձրիկ վանք սուրբ Հովանու,
Տակն ենք մտել քո հովանու...

Գյուղը բռնեց սուգ ու շիվան,
Արտուաները արախց թռան,
Սիրաը մթնավ ջահելներին,
Ահեղներին ու մերերին.
Բայց, դե, ինչ վոր թագավորից՝
Մեկ եր՝ թե գար յերկնավորից.
Պիտի գնանք, պիտի գրվենք,
Թագավորի համար կովինք:

Անտու կանուխ, հեր, մեր ու քուր,
Ջահել կնիկ, սրացավ մորքուր,
Ջահելներին յետև ընկած,
Հենց վոր գյուղի գանգը գնդաց,—
Հացով, լացով վազզալ գացին,
Ենտեղ ել մի կուշտ-կուշտ լացին,
Մոտիկներին պոյեզգ գրին,
Ուղարկեցին՝ հասնեն կովին...

Իմ Մանասն ել եզոր գնաց,
Մի չերեխա վզիս մնաց.

Գյուղը ասես ավեր, վերան,
Սրախ իջան սլատ ու գերան.
Մորեխն յեկավ, արաը կերավ,
Հորովելը արտում մեռավ:
Յորենի տեղ կերանք գարի.—
Ջուլում տարի, անտեր տարի:

Են մի որ ել յելանք, վոր ի՞նչ,
Բյուլավի փեսեն, Հովոնց Միկիչ,
Չարչի կարոն, Տերարանց Մոսին
Գյուղը մտան, ու—բնա, ասին,—
Մեզ քննեցին, հանին «բրակ»,—
Գյուղ գնացեք,—ասին,—բրնա...—
Վճնց թե «բրակ», ցավ ու կրակ,
Փողի ուժով... կաշառք... փրկանք...

Ձորաները եզպես արին,
Վաչ խեղճերին, նրանց հալին...
Նրանք ենտեղ, կովի բոցին,
Մրանք ետեղ իրենց գործին.
Նրանք ենտեղ կովի անեն,
Մրանք ետեղ գինի քամեն,
Բեռներ բերեն կալից, ջաղցից,
Իսկ մենք ետեղ մեռնենք քաղցից...

Նամակ առա իմ ազիզից,—
—Գրում եմ, է, մեր պազիցից,
Գիշեր ցերեկ հնա զարկում ենք,
Հնամ զարկում ենք, հնամ զարկվում ենք.—

Ինձնից՝ պաշի թուշը բալիս,
Տեսնենք, վերջը ի՞նչ է գալիս.
Ինձնից բարև տուր հորքուրին,
Արտ ու ափին, սար ու ձորին՝:

Եղպես անցավ յերեք տարի,—
Կարդացողը տեսնի բարի,—
Քանի նամակ յեկավ, գնաց,
Վորը— մեռավ, վորը— մնաց,
Վորը կովից դառավ կոնատ,
Ու սև հագան տուն ու դռնակ.
Շատերից ել վոչ մի նամակ,
Տեսնես ընկան վճր քարի տակ...

Մի նամակ ել մի որ բերին.—
Թախտից ընկավ Նիկոլ քեռին,
Ընդունեցեք լուրն ես բարի,
Պիտի ապրենք առանց ցարի.
Ժողովուրդը պիտի վարի,
Իր յերկիրը կառավարի,
Իսկ մենք կովել ել չենք ուզում,
Տո՛ւն ենք ուզում, տո՛ւն ենք ուզում:—

Սկսան քյոխվա, տերտեր, քավոր.
—Վճնց թե... ապրել անթագավճր...
Սուտ է գրում, շուն-շանվորդին,
Այ նեմեցը նրան մորթի.
Ես ա, նստենք, քաղքի, աղին
Նամակ գրենք,—նրանց կա խի...

Ո՞վ եր լսել եսպլտի բան.
Մի թող հեռ գան, մի թող հեռ գան...

Մի նամակ ել աշնան առա,
Վճնց վոր սիրտս արև առավ.—
—Ել չես տխրի, ել չես լալու,
Ես ա, շուտով յես եմ գալու,
Ել չենք ուզում իզուր կովել,
Բալշեիկ ենք եստեղ գրվել.
Յես եմ գալու, յես եմ գալու.
Ել չես լալու, ել չես լալու:

Լուրը հասավ, գյուղը լսեց,—
—Բա, չե՞ք ասի, եսպես-եսպես...
Մեր Մանասը գյուղ է գալիս,
Բալշեիկ է, կյանքն է տալիս...
Ել չի ուզում իզուր կովել,
Բալշեիկ է եստեղ գրվել...—
Իրար անցան փեսա-աներ,
Եսպես բաներ, եսպես բաներ...

Քաղքից խաբար յեկավ մեկ ել.
—Հայաստան ենք ըստուց յետև.—
Քյոխվա, զոռբա կանաչ հագան,
Լիազորը դաշնակցական:
—Ո՞ւր է,—ասին,— թող գա մեյդան
Են բացբերան շունը մեր տան,
Քոնենք, հանենք կաշի, ազի,
Են մեծախոս բալշեիկի...

—Ո՞ւր ե, —ասին, — ո՞ւր ե կորել...—
 Մանասն չեկավ՝ հագին շինել,
 Ծիծաղեբես, սրտում արցունք,
 Դեսից-դենից արավ հարցմունք,
 Գրկեց, պաչեց թուշը բալի:
 Հաչ-հաչ աշխարհ, վայ-վաչ տարի,
 Ռուսաստանում եսպես-եսպես,
 Ի՞նչ գործի չեն սրանք եստեղ...

...Իաշնակ դոչին գչուղը մտավ,
 Գչուղը մտավ, քյոխվին գտավ,
 Հագին խանչալ ու մառուղեր,
 Արաղ խմավ, գինի ուզեց,
 Շարժեց դամշին մեկ վար, մեկ վեր.
 —Տերութունից ձեզի բարե,
 Ամեն բոսկե սլատրաստ մնաք,
 Վոր թուրքի դեմ կովի գնանք:

—Պետք չի կովի,—Մանասն ասավ.
 Կուրը քյոխվի ականջն հասավ:
 —Չի՞ դադարում եդ շան վորդին,
 Քերթել պիտի դրա մորթին,
 Իր հավառը դեռ չի փոխել.
 Ծակը պիտի նրան կոխել...—
 Եսպես թափեց թուք ու լաղափ,
 Իմ Մանասը փախավ քաղաք...

Ալան-թալան չերկրում ընկավ,
 Սովը չեկավ, դռներն ընկավ.

Քաղքեց յեկան մի որ ել թե՛
 Պիտի կովեք թուրքերի դեմ.
 Թե չե կառնեն հայրենիքը,
 Հաչրենիքը, ընտանիքը,
 Կգան նրանք, վոր թալանեն,
 Գյուղը վարեն, ըստան ցանեն:

Վորը փախավ, վորը մնաց,
 Վորը զոռով կովի գնաց,
 Վորը քյոխվի հետը կովեց,
 Հետո գնաց արող գրվեց.
 Ո՞վ եր մեր դարգն խմանալու,
 Ել հալ չկար դիմանալու...
 Տեսնես մեր հալը կիմանաս,
 Ա՛յ իմ Մանաս, վա՛յ իմ Մանաս:

Ձմեռ, գարուն, ամառ... անցավ,
 Նորից աշուն, նորից դարձավ.—
 Իբար անցան մանուկ, պառավ,
 Բայլլեկիլը չերկիրն առավ:
 Մատաղ քեզի, կարմիր բանակ,
 Իաշնակ զոչու սրաին գանակ,
 Սարով յեկար, բարով յեկար, —
 Դիմանալու ել հալ չկար:

Մանասն յեկավ կապած նազան.—
 —Իշխանություն սավետահան
 Պրտի լինի յերկրում, — ասավ,—
 Ազատության ժամը հասավ,
 Ել դուբեքը մեզ չեն կթի,
 Թե կփորձեն — ավեք քթին...
 Հեյ գիլի, հա՛, անցած որեր,
 Կարմիր հագած սար ու ձորեր...

Կուռը կանաչ մեր Մանասի,
 Նախագահն է մեր կոլխոզի.
 Հալից ընկած քյոխվա, չարչի,
 Բարձի տակին պահած դամչի,
 Վճնց են ուզում որերը հին,
 Փախած դաշնակ զոչիններին.—
 Վճնց են ուզում ելի գան յեա
 Ու յեա բերեն դամչի ու փետ...

Բայց չեն տեսնի եզ որ նրանք,
 Թեկուզ տեղով դառնեն կրակ.
 Իսկ թե փորձեն սրել գանակ...
 Մենք բոլորս Կարմիր բանակի
 Մեր գենքերը դուրս կհանենք,
 Մեր յերկիրը կպաշտպանենք.—
 Ես մեր գարդը գնւ կիմանաս,
 Այ իմ Մանաս, վճյ իմ Մանաս:

ԱՐՆԱԽԵՂԴ ՎԱՐԴԵՐ

(Դրվագներ)

1

Վերքերի պես բացվեցին
 Այն տարվա վարդերը,
 Այն տարվա վարդերը
 Վերքեր էյին:

Քամահար արտի պես
 Նիրհել եր յերկիրը՝
 Մահացած հասկեր
 Գրկին:

Ել ինչո՞ւ յերկիրը
 Ձերգեր, չցնծար,
 Յերբ մահն եր խոսում
 Ահեղաձայն:

Յելած նա մի վտտի՝
 Պարի եր յելի,
 Պարում եր մեռել-մեռել:

Խնդն, խանդավառ
 Նայիրյան արեգ,
 Այդ նա քեզ համար
 Կրակեց ու պարեց:

Խնդա, յերկիր,
 Խնդա, արև,
 Խնդա, Գյուճըրի,
 Քաղաք քարև:

2

Քնել է կայարանը, քնել է քաղաքը,
 Քնել են պահարդները, քնել են, քնել,
 Յերազում դաշնակ հմխտար Մաղաքը
 Տեսնում ե՛ր բոնով Միացյալ է գնել:

Մի ձեռքը պարզած մինչև Բիթլիզը, Վանը, Մուշը,
 Մյուսը մինչև Կիլիկիա —
 Ինչիզը լուս ժպտում է, ախ, այնպես նա քնքուշ է,
 Ասում է, — «Վերցրու, ելի կա»:

Ասում է, — Վեր կաց, Մաղաք,
 Տալիս ենք բոլորը ձեզ,
 Ձեր տված մի կյանքի տեղ՝
 Մի քաղաք,
 Գավառ...»

— Վեր կացեք, ձերդ բարձրություն,
 Վեր կացեք, վեր կացեք, վեր...»

Կանչում է հերթապահը հավար:

— Ի՞նչ կա, ի՞նչ, ռվ է գոտում,
 Ի՞նչ է պատահել...

— Ձերդ բարձրություն, ձերդ բարձրություն,
 Քաղաքում ապստամբություն է պայթել:

— Դժնիք, — մտում է Մաղաքը,
 Իսկ զբտում անթափանց գիշեր,
 Աչքերը շողվում են, կիսափակ են,
 Սեղանին՝ շշեր ու շշեր:

Շողվում է յերազը, Բիթլիզը, Մուշը, Վանը,
 Շողվում են այսօրն ու գալիքը,
 Շշերը սրորվող զինվորներ են,
 Դավաճան են,
 Հեծյալ զորամասը դա-սա-լիք է:

— Կրակեք, շան վորդիներ,
 Կրակիր, ի՞նչ էս կանգնել, —
 Ասաց ու վեր թռավ տեղից:

Կիսաբաց պատուհանից
 Հինգ անգամ նա կրակեց
 Ու կանգնեց մեռել ու գեղին:

3

Մի փողոց կա, մի փողոց,
 Քաղաքի ծալքին մի փողոց.
 Մի ֆանար մութ հանգուցում,
 Կես զարկված գլխի պես ծուռ:

Կեղտոտ մի սենյակ էլ կա, —
 Իջևան, թե՞ չայխանա,

Սեղաններ շարած յերկար,
—Սվարն...

Այստեղ հավաքվում ե ամեն ուր
Տականքը վողջ քաղաքի,
Հավաքվում ե ինչ վոր ծամելու,
Իսկ հետո թղթախաղի:

Այսոր թառ ել ունեն նրանք,
Թառը չանդուում ե ով վոր,
Կա նրանց դեմքերի վրա
Արջային քնքշություն մի խոր:

—Բնց: Բնց: Բաց:
Խմբապետը դռներում յերեաց:

—Ի՞նչ եք նստել,
Շան վորդիներ,
Ի՞նչ ե, հստեղ
Ցիբիկ եք շինել:

Վեր կացեք, վեր,
Ո՛ւս ավեք, սւս,
Յետ գրավեք,
Ինչ ավինք դուրս:

Արնուն թափեք,
Վոր խաղաղի,
Հետո խմեք
Գինի, բախի:

Վեր կացեք, վեր,
Ո՛ւս ավեք, սւս,
Շան վորդիներ,
Հիստուր ձեզ հույս...

Ու յելան—
Խուժանը,
Չարչին,
Դուքանչին.
Ու յելան—
Հիսուսը,
Բուռնցքը.
Ղամչին:

Ու յելան—
Կատաղի,
Մոլեգին,
արնաչք,
Ու յելան պղտոր ջրերի նման...

.
Ու շ գիշեր,
Սև վրան,
Շարժվել ե
Քաղաքի
Մբուրը,
—Պարսւմ ե քամին մի վտտի վրա,
Առավոտը դեռ հեռո՛ւ յե...

4

Քամին և սուլում Շիրակի դաշտում,
Շիրակի լայնաթոք ու մեծաշունչ քամին,
— Սեպուհն և անցնում իր սպիտակ վաշտով, —
Զրահապատն և չերգում բալլերիկյան հիմն:

Դուփում են ձիերը ու լուռ և դաշտը,
Հողը բուրում և արնոտ մի գարուն,
Սեպուհի վնշտը,
Սեպուհի վնշտը,
Սեպուհի վնշտը՝
Աչքը արցուն:

Դուփում են ձիերը, առնջ են, առնջ են,
Գնում են կրակի դեմ, քանի դեռ ուշ է,
Մութ գեղքերի շառնջը,
Մութ գեղքերի շառնջը,
Մութ գեղքերի շառնջը
Զարագուժ է:

Յեզ սըր և, սըր և գնում այդ հիմար խորապետը,
Գնում և ջրո՞վ մարի արեք խնդուն,
Պատմությունը մեզ հեռ և,
Պատմությունը մեզ հեռ և,
Պատմությունը մեզ հեռ և,
Ձկն փրկություն:

Ու դուփում են ձիերը,
Ու լուռ և անծայր դաշտը,

Դաշտերը բուրում են գեռ
Արնոտ մի գարուն. —

Սեպուհի վնշտը,
Սեպուհի վնշտը,
Սեպուհի վնշտը՝
Աչքը արցուն...

5

.
.
.
.

6

Գյուժբումն և նա
Նստած ելի,
Յերգիր, գուճա,
Յերգիր, յերգիր:

— Յեկանք վստահ,
Տեք ենք յերկրին,
Մայր Հայաստան,
Ո՛ր, մայր չերկիր:

Յերգիր, յերգիր,
Ո՞վ կա այնտեղ,
Մեք հայրենիք,
Թը՛շ-վնոսն-տեք:

.

7

Հողի ձիչը մնաց քո կոկորդուս,
 Հողի ազատ ձիչը,
 — Խնդա, յերկիր, արնով հորդուն,
 Յեկավ քո փրկիչը:

Նորից գլուզերը գեանահար,
 Նորից մռայլ հլուզեր,
 Նորից յերգը քաղցի, մահվան,
 Ու ավերակ բույներ:

Մեր մայրսն եր, մեր մայրսն եր՝
 Արևոտ ու զնգան,
 Գեանահարված զբողակը մեր
 Ընկավ մի՞ին զնգան:

Խնդան յերկիր, արնով հորդուն,
 Յեկավ քո փրկիչը,
 Հողի ձիչը քո կոկորդուս,
 Հողի ազատ ձիչը...

1929

Վ Ե Ր Զ Ի Ն Մ Ա Յ Ի Ս Ը

1

Խավարն իջավ ու թանձրացավ
 Ու դաշտերում հին Շիրակի
 Հովը սուլեց, կարծես անձայն,
 Ու անհանգիստ, ու անհանգիստ:

Հովը սուլեց ձիգ ու զարհուր,
 Այդ նա՞ լսեց դավադրաբար...
 Մեկը հիշեց ինչի՞սր արյուն,
 Միյուսը՝ մահ, չերբորդը՝ մայր:

Վար նայեցին աստղերը մառ
 Արնոտ աչքով ու մահառիթ,
 Վար նայեցին սառն ու համառ,
 Ու թախիծով մի անառիկ:

Հետո լուսնի մահիկն ելավ,
 Վորպես կուտրած; վոսկի մանգաղ,
 Զնգաց քնած չերկրի վրա,
 Հույսով հեռու, սիրով հանգած:

Ու մայր մտավ մանգաղն էլ այն,
 Խավարն իջավ դաժան, մոլի,
 Թածկեց նրա թևերը լայն
 Կայարանը Ալեք-պոլի:

Ալեքս-պոլի կայարանում,
Գծերի վրա սառն ու անձայն,
Վորպես խոսող մի վարանում
Կանգնել է նա, վորպես արձան:

Զրահապատը չերկաթակող,
Զարհուրելի, խավարամած,
Զրահապատը չերկաթափող,
Զույգ գծերի վրա գամած,—

Վերջին բերդը յեկնող ուժի,
Վերջին պահակը մայիսի,
Նա, վոր ճչաց մեր դրոշի,
Ու մեր վերջին մարտի մասին:

Ու Շիրակի հին դաշտերում
Նա զրնգաց, զնգաց նորից,
Ու մնա թվաց՝ ինչ վոր հեռու,
Ազնա թվաց՝ ինչ վոր գերի:

Վաղվա մասին նա զրնգաց,
Մեր հաղթական չերզի մասին,
Հնի մասին մահագնած
Ու մարմնացած մեր չերազի:

Յեւ աչդ է, վոր անա դարձած
Մի պաշարված զրահապատ,
Մեծ պայքարի հոյր արձան՝
Կանգնել է վեհ, նայում հպարտ:

...Ինչ, վոր լուսնի մահիկը կույր
Մայր մտալ մնա արևմուտքում,—
Նա հաջնոցից դաժան ու խուլ,
Իսկ մյուսը չերզից մաքում:

Զրահապատը նրանք մասն,
Կոմունարներն հերոսական,
Կոմունարներն—Ալլահվերդյան,
Ղարիբջանյան, Մուսայելյան:

Նրանք յեկան ու ծառայան,
Ու սարավեցին նրանք անպարտ,
Մնաց միայն մի կայարան
Ու մի խոժոռ զբահապատ:

Մնաց զիշերը սեակնած,
Ու խավարը գաժան, մոլի,
Ու խավարում ծանր քնած
Կայարանը Ալեքս-պոլի:

.
.
.
.

Կուսարաց է, ինչ լուսարաց...
Կուսարացին, ժամի վեցին,
Կոմունարներն հուսահատված,
Զրահապատով հանձնվեցին...

2

Սոււիչը ճշաց խոււ
Ու ձայնը հանգաւ,
Գնացքն ե խրխուում,
Գնացքը—զագաղ:

—Գնացքը, գնացքը,
Գնացքը—խարխաւի,
Գնացքը, գնացքը՝
սարսափից՝ փախած:

Այդ նրանց են տանում
Դեպի Յերևան,
Այդ նրանց են տանում,
Զկա վերագարձ. —

—Գնացքը, գնացքը,
Գնացքը—խարխաւի,
Գնացքը, գնացքը
Սարսափով փախած:

Իսկ ժամերը չնւ յեն,
Ժամերը՝ ըաղե,
Գնացքը փնջնում ե,
Անի յե հասել:

Գնացքը, գնացքը,
Գնացքը խարխաւի,
Գնացքը ասես
Սարսափ ե փախած:

Գեանահանր յեղաւ
Հեղափոխութիւնը,
—Արչունստ մեխակ,
Հրավարս քույր իմ:

Բայց կեղնենք մենք նորից,
Կզարկվենք կրկին,
Այս հին աշխարհի
Հիմքերի հիմքին:

Ու թե նորից պարտվեն
Մեր շարքերը սակաւի,
Կբարձրանան նորերը
Հերոսաբար:

Ախ, վարպես զագաղ,
Սահում ե գնացքը,
Ու նայում ե պաղ՝
Արնոտ իր աչքը: —

Գնացքը, գնացքը,
Գնացքը զագաղ,
Գնացքը, ասես
Սգաշոր հագած...

3

Ու գնում ե գնացքը:
Առաջ ե: Առաջ ե:
Զգվում ե անիվների
Միալար յերգը: —

Վագոնում նստել են
 Հացի, քիֆի,
 Դաշնակցական պանծալի
 Տղերքը:

Իսկ գինին ընտիր է,
 Ի՞նչ գինի, ի՞նչ գինի,
 Ա՛խ, մինխտորակա՞ն է,
 Լինի, լինի:—

Հո՛վ լինի, հո՛վ լինի,
 Հայաստանը արչունի
 Ծո՛վ լինի,
 Ծո՛վ լինի...

Ու յերգում են նրանք,
 Խմում են՝ ասես խելագար,
 Կրակում գաշտերի վրա,
 Գլուղերի վրա հանգած...

4

Յե՛վ վորպես մթին, խորին մի շիրիմ,
 Ետապը լուռ է, լուռ ու լարված է,
 Տրվել են նրանք իրենց հուշերին,
 Յե՛վ սպասում են ինչ-վոր հարվածի:

Լոկ անիմլերի վազքն է անհանդիստ,
 Լոկ անիմլերի յերգը միալար,
 Մէրթ վորպես հանգերգ վոթորդոս կլանքի,
 Մերթ վորպես մահու գժվար մի գալար:

Մեկը ծիծաղեց, մի՞նեց մչուսը,
 Յերբորդը գրեց ինչ վոր մութ սողեր,
 Չորբորդը հիշեց արեի լույսը,
 Յե՛վ աչն, վոր աունը սովամահ թողեց:

Իսկ Նա բրոնզե գլուխը հենած
 Նեղ պատուհանի սառն ճաղերին,
 Լուռ մտածում է.— «Հիմա՞ր դու, հիմար,
 Չճանաչեցիր քո բարեկամին:

Յերկիր արնաքամ, հետամնաց յերկիր,
 Չճանաչեցիր քո բարեկամին,
 Բայց միևնույն է, դեռ կերպի, կերպի՛
 Հեղափոխության չերկաթե քամին»:

Ու խու՛հ հասնում է նրանց ականջին
 Դաշնակ քաջերի հաչ-հուչը վայրագ...

Ողբ սղոցվեց սուլիչի կանչից:
 Կանգնեց գնացքը:— Յերևան, Յերևան...

5

Լույս եր շնչում քաղաքը մութ,
 Կանգնել եր մի գեղին արև,
 Ահա բանալ քաղաքամոտ,
 Պարսպապատ, մութ ու քարե:

Բերին նրանց, վորպես գերի,
 Վորպես գերված գողերի խումբը:

Նրանց մթին, լուրթ աչքերից
Մահն եր նայում, վորպես խլուրդ:

Դարպասները չերգեցին խուլ,
Ու փակվեցին ժանգոտ ու ժանտ,
Ու հեռացավ արչունախում
Բանտապետը չարագուշակ:

— Խաղաղությունն Հայաստանի
Գեանատարած հին հյուղերին,
Դաշտին, արտին, վոստաններին,
Ավաններին ու գյուղերին...

6

...Յերգիր պոեա, չերգիր դու,
Այն գիշերը յերգիր,
Այն գիշերից ել մութ
Իր հուշերը յերգիր:

Վոչ մի, վոչ մի խավար
Այդքան սև չի չեղել,
Վոչ մի գիշեր, այդքան մառ
Զի չեղել, չի յեղել:

Յերգիր ուշ այն գիշերվա
Քամին, դաժան քամին,
Փռնին՝ դեղին վերմակ,
Յերկիրը— սնու մարմին:

Վոչ մի քամի այդքան չար,
Յերկրում չի շառաչել.—

Պարսպի տակ մեկը ճչաց,
Պարսպի տակ մի շուն հաջեց...

7

.

Նստել ե բանտապետը
Մռայլ իր գրասենյակում,
Նստել ու նայում ե
Անորոշ կետի:

Կես գիշերը լսվել ե,
Նստել ե նա դեռ անքուն,
Վորոճում ե հրահանգը
Մթին:

Այս գիշեր, Հենց այս գիշեր:
Զդձղել չի կարելի.
Այս գիշեր՝ վերջացնել
Պետք ե վերջապես: —

Մտքերը խոնվում են,
Խառնվում ելի, ելի, —
Ել ի՞նչն ե, ի՞նչն ե նրա
Զեռները կապել...

Այս գիշեր: Հենց այս գիշեր...
Նվում ե դրսում քամին:
Ի՞նչ հետո, քամի լինի,
Թեկուզ փոթորիկ: —

Յերևում ե դռներում
Մութ դեմքը տեղակալի, —
— Այսօր: Վորճնց: Վորին...

— Մի կերպ: Այո: Առանձնացներ:
Յերեքին: Չորսին:
Անաղմուկ միայն:
Կվարձատրվես:

Նայում ե տեղակալը՝
Ինչպես շունը - վորսին,
— Անհող յեղեք: Յես...

— Մի գոռա:
Ո՞վ եր գոռաց:
Ո, դգուշ պիտի լինեի...
Ասում ես վճի վոք,
Իսկ չես լսեցի...

Քամին ե, քամին ե
Բանտի մոռյլ բակում,
Քամին ե բանտային
Դարպասները թակում:

Այդ քամին եր չերգել
Դարերով էմ չերկրում,
Իսկ չերկերը մերկ եր,
Յերկերը հլու:

Նրանց տարան գիշերով,
Գնացին նրանք.
Գիշեր եր, գիշեր եր
Իմ չերկրի վրա:

8

.
.
.
.

9

Ու խաղարում այն որերի
Նրանք ընկան, չկան հիմի:

Առավոտը թավեց թերթեր,
Բանալը, բանալը սգում եր դեռ:

1929—1930

Ա Ղ Ա Ղ Ա Կ

Յե՛լ, իմ քնար, վե՛հ ու խոսու՛ն,
 Զվարթաձայն ու վոսկերառ,
 Խոսի՛ր, ինչպես ջուրն է խոսում,
 Հողն է խոսում, արևը վառ:—

Յերգե՛լ ես դու գյուղերը հին,
 Յերգե՛լ ես դու մուժը նրանց
 Իրիկնային, իրիկնային...
 Ու հյուղերի դեմքը մուսլը:

Ու սայլերի ձանձրույթը մառ,
 Քամիների սուչլը սուրսայր,
 Ու Հխուսը, սուբրը հիմար,
 Ու լուսինները վոսկեսար:—

Լուսինները՝ այնքան տխուր,
 Մեռելուրեն գեղին ու սառ,
 Շեները գորշ, անցքերը ծուռ,
 Ու թևարաց խաչը ծոված:

Նայիրցան գյուղ, գյուղ նայիրցան,
 Քո չերգիչը մեռավ մի ուր,
 Վոր բարձրանար հողիդ վրա
 Նոր մի չերգիչ չերգերով նոր:

Յերբ կոլխոզն է չերկաթաքայլ
 Քո դաշտերի վրա դոփում,
 Կոլխոզնիկը չուգուն հագած՝
 Դասակարգի մարտի տոթում...
 ԴԴ

Յե՛լ, իմ քնար, վե՛հ ու խոսու՛ն,
 Զվարթաձայն ու վոսկերառ,
 Խոսի՛ր, ինչպես ջուրն է խոսում,
 Հողը, հասիլը, արևը վառ:

Իրիկնային մի իրիկուն,
 Յերբ քամին եր չերդում դրսում,
 Յերբ սրտահույզ մի մորմոքով
 Ծեր բարդիներն հչին մրսում,

Թողի չես քեզ ու գնացի
 Մայթերի չերգը լսելու...
 —Ո, հանգստի անհույզ թախիծ,
 Անժամանակ դու այցելու...
 ԴԴԴ

Իսկ հիմա, չերբ հողն է հուզվել,
 Դղրդում է կյանքը հիմքից,
 Թող վոր նորից քեզնով հուզվեմ,
 Նոր խնդություն, նոր իմ նորքի...
 ԴԴԴԴ

Գրել են շատ, չերգել են վե՛հ
 Քահնոֆոնից մինչև Բակունց,
 Գյուղ են գրել, գեանափորեր,
 Ու խոփ, ու մաճ հյուղի բակում:

Այսօր ուրիշ ջուր ե հոսում,
Դղրդում ե յերկիրն անծայր,
Յե՛լ, իմ քնար, վե՛հ ու խոսում,
Զվարթաձայն ու վոսկերառ...

2

Գյուղն ե քո դեմ, նաչկի՛ր նրան,
Նրա տափակ կտուրներին.
Գյուղն ե քո դեմ նաչիրական,
Կտուրներով հնամենի:

Նա հրաշքներ ուներ լուսե.
Ուներ է՛ կյանք, է՛ սեր, է՛ մահ,
Յերկիրնք ուներ նա փիրուզե,
Սյուներ ուներ մահամնա:

Թումանյանը նրան չերգեց,
Իսահակյանը Ավետիք,
Պոետները մեր վե՛հ ու մե՛ծ՝
Իրենց չերգից մե՛ծ ավելի:

Մեկը չերգեց Լոռին հպարտ
Ու Գեղեան իր փրփուրներով,
Լեռները վե՛հ, ձորերը մառ,
Ու տեղացին չար կամ ներող:

Յերկրորդը խոր իր չերգերում
Յերգեց Շիրակը լայնանիստ,
Ալազյաղը չերգեց հեռու,
Ու Մանթաշի մութը հանգիստ:

Ու բոստաններ նա ցնորեց,
Բոստաններին իր թագուհուն... --
Պոետները մեր վե՛հ ու մե՛ծ...
Հարգանք նրանց ու սեր-վողջուն:

Ինչ լավ ե, չե՛ք, ապրել առատ
Ու ոգտառատ սենյակներում,
Հչուղը չերգել, հող ու մարագ,
Ու արտերը չերգել հեռու: --

Աղբյուրի մոտ սերը չերգել,
Ու համբարձում չաչլա ու տաղ,
Յերգել չերգեր, չերգել վերքեր, --
Գյուղը, վոնց վոր խնդության թաղ:

Գյուղի ժամը չերգել սիրով.
«Տան-դո, տան-դո, Նազու, վեր կաց» --
Հրեշին այդ մութ ու ախրող
Յերգել վորպես հեքյաթ ներկած:

Հեքյաթական ու հիասքանչ...
Ո, աղբի մեջ խեղդվի՛ նա թող,
Իսկ քնարը պոետական
Ծաղիկ չերգի, ու շող, ու ցող...

Մեկը չերգի Լոռին հպարտ,
Ու Գեղեան իր փրփուրներով,
Լեռները վե՛հ, ձորերը մառ,
Ու տեղացին՝ չար կամ ներող: --

Յերկրորդը խոր իր չերգերում
 Յերգի Շիրակը լացնանխատ,
 Ալագյազը չերգի հեռու
 Ու Մանթաշի մուժը հանգիստ...

Ենտեղ զրկանք, ենտեղ բուռնցք,
 Ու մանուկներ կեղտոտ, գունատ,
 Չքաղտորն եր ենտեղ մուռում
 Տանուտերի մարակի տակ:

Ենտեղ խավարն եր արշավում,
 Խրախում եր Հխուսն ենտեղ,
 Չութն եր չանգուռում հողը ցավով,
 Մարխն եր վառվում խրճիթում նեղ...

Մեկը ենտեղ ախրում եր չար,
 Իսկ մյուսը, հեզ ու հլու,
 Ճիգ եր անում, վոր չճչա...
 Ու վորպես սև մի աչցելու

Աճեն գիշեր զուռն եր թափում
 Թշնամական քաղաքը մութ,
 Ու անցնում եր գիշերն անքուն
 Սուլլերի տակ հիմար քամու:

Ու լուսինը նայում եր վար,
 Խրճիթներից ու ճեղքերից.
 Հեզնում եր լուռ, ժպտում հիմար.
 — Գերի չես դու, գերի՛, գերի՛...

Քաղաք գնան, տրվիր նրան,
 Թող խրճիթը լա ու քաղցի,
 Ջահել կինդ մնա գրավ,
 Ու թող սիրտդ չկաղկանձի:

Քաղանք, քաղանք, հրեշ ու դե,
 Հաղարամյա դու թշնամի,
 Վոր ծառայար գյուղերի դեմ,
 Վորպես սամուս, ժանտաքամի:

Տվինք մենք քեզ մեր հողերի
 Յերակների ուժը վերջին,
 Տվինք մենք քեզ ելի, ելի,
 Յե՛վ ուժասպառ ընկանք շնչից:

Բաց մեր ուժը, արյունը մեր,
 Վոր հոսեց քո չերակներում,
 Կանգնեց մի որ, վորպես նոր տեր,
 Հոկտեմբերյան ու կրակուն:

Դաշինք չեղավ մուրճ-մանգաղի,
 Դղերդ չեղավ ու փլուզում,
 Լսեց ձայնը աքաղաղի
 Սուլլիչների համերգը սուր:

Ինչ լավ է, չէ՞, ապրել առատ
 Ու ողաբատ սենյակներում,—
 Հյուղը չերգել, գոմ ու մարագ,
 Ու արտերը չերգել հեռու:

Սրել ժանիքը քաղաքի,
Քշել նրան գյուղի վրա,
Հետո ժպտուն, հետո հանգիստ
Լուսին յերգել, սրինգ, վրան:

Աչսոր ուրիշ...—մի ուժ հզոր
Մըրում է հին գյուղը հիմքից,
Բառանչում է հինը անդոր,
Անզոր նվում կրկին, կրկին:

Ու դաշտերում հեռու ու մոտ
Ուր արև կա մի նոր փայլով,—
Պանդավառված ու կրակոտ
Կոլխոզնիկն է անա քայլում:

Կոլխոզնիկն է քայլում անա՝
Հերոսական ու աննահանջ,
Հերոսական ու աննահանջ
Լուրթ աչքերում վոխ ու պահանջ:

Քշել գյուղից ով վոր՝ բուռնցք,
Քշել գյուղից վողջ ցեցերին,
Ով ապրել է արնամուտի՞
Յեղ ուռճացել՝ վողջը ձրի:

Միացնել բոլոր նրանց,
Բոլոր նրանք, վոր չքավոր,
Ով վոր կյանքը գրավ գրած,
Ով անարև, անառավոտ:

Անցնում է նա, կոլխոզնիկը,
Ու չերգվում է նրա սրտում
Գարնանային լուրթ չերկինքը,
Ու հին գյուղի ցավը տրտում:

Անցնում է նա վորպես պատգամ,
Ու սուրբանդակ վորպես թեթև.
Հորիզոնից արևն անգալթ
Բարձրանում է հետեղհետե:

Գարեր, դարեր ու շարունակ
Նայիրական աչս դաշտերում,
Գու անշուք ու անփառունակ
Ներհում ելիր, նիրհում, նիրհում:

Անհետացավ քանի՜ սերունդ,
Ու շատահեց քանի՜ ձմեռ,
Ու անլուսին ու սառ սիրով
Քանի՜ գիշեր քեզ գուրգուրեց:

Մենք, ուժը նոր դասակարգի,
Նոր քաղաքի պատգամարեղ,
Մենք բետոնի ու չերկաթի
Մերունդը նոր—կանչում ենք.—Վեր...

Յեղ ու հորդիր ու կառուցիր
Ու պայքարիր և խանդավառ...
Ձրնգում է կյանքը անձիր,
Ու նոր մի կյանք կա քեզ համար:

Տես, արևն ե խփել վրան,
 Զուրն ե չերգում, հողը, ողբ
 Ու բացվում ե գլուղի վրա
 Կոխողային առավոտը:

Ու պոետը, վոր կապված ե
 Քո մեծ սրախ մեն մի թելին,
 Տեղերից դեմ կուրծքն ե բացել,
 Սիրան ե տվել քո չերգերին:—

Յերգում ե քո պայքարը վառ,
 Յերգում ե քո մարտը համառ,
 Ընդունում ե և կյանք, և մահ՝
 Քո հաղթական չերթի համար:

1930

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ ՈՒ Ք Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Վերջինք	11
Յերկու դաշիկ	12
Հովհ. Թումանյանի հետ	14
Հովհ. Հովհաննիսյանին (յերկու դաշիկ)	15
Զնգա արևը թող	17
Յերկրիս նման թաքմ ես	18
Դու հիմա հետու յես	19
Յես ինչ՞ով քեզ հմայեմ	20
Կանանչ արտեր էլին	21
Հարազատ, իմ անշին	22
Յեկ, անգին, յերդիս այգին	23
Աշունքվա այգու նման	24
Հովերդ	25
Կարոտ	26
Մասրենի	27
Գառները պես	28
Զղլտեմ	29
Յես դիտեմ	30
Կծերանամ	31
Այստր	32
Այսպես անցնում են	33
Կածան մենավոր	34
Դրսում անձրե է	35
Հովերգութուն	36
Խրտվիլակ	37
Որոր	38
Հին այգու դռան	39
	40

	62
Յեկավ ինձ այցի	41
Հուշ	42
Նույն դեան ե	43
Վերջալույս	44
Անձրև ե.—	45
Հասունություն	46
Անդորրություն	47
Քարե մարդը	48
Անդարձություն	49
Դու յերազել ես	50
Գիշերը	51
Որոր-սրոր	53
Յերեք բարդի	54
Բալլադ	57
Նարնջի իմ որերում	60
Պոետ	61
Իմ յերկիր	62
Այսօր	63
Կածաններով	64
Բարդիներ	65
Որեր	67
Նրանց յերդը	68
Աղուն	69
Սրինդը	70
Այդեստաններ	71
Առաջինը	72
Կարծես մանուկ ես դարձել	73
Արև	74
Արևնցի հետ	75
Չարենցի հետ	77
«Մեղձ Լիլիան»	78
Կարոտ	80
Հսկերան արև	81
Սերգեյ Յեռնինին	82
Յերդ	83
Անվերնագիր	84
Հուշ	84

	69
Հովհ. Հովհաննիսյանի մահվան առթիվ	85
Անձկություն	86
Անվերնագիր	87
Մահ	88
Մահազանդ	89
Խոհ	90
Խոհ	91
Մտերիմ խոսքեր	92
Բրնձի լուսին	93
Մեծնող զանդեր	94
Գարուն	96
Հաշտություն	97
Չարթոնք	98
Սրբերդ	99
Հասկեր են	100
Ինձ հետ	102
Այնքան հունդեր	103
Անձրև	104
Յերեք աուն	105
Գարնան անուշ դեմքով	106
Նոր յերդեր	107
Վողջուն քեզ որ	108
Յես ինչու	109
Հորդոր	111
Յես յերկրիս ձայնը	113
Մըդաստան	114
Անվերնագիր	116
Յերդի պես	117
Տխրություն	118
Կանցնի իմ յերդը	119
Դես զնդում ե	120
Չանձրացել ես	121
Արտերին նորից	122
Մըդաստ	123
Իմ յերկրի	124
Չարթոնք	124
Որորոցի յերդ	125

	Եջ
Հոկտեմբերիկ	127
Յերգ սրտառուչ	128
Անանակ.. .. .	130
Յերկիր իմ	132
Որոր իմ որորուն	133
Արովյան փողոցի ծառերին	134
Մտերմություն	135
Յերկիր	138
Նամակ	140
Կանչում ե հողը	141
Հողի յերգը	142
Մտերմություն	144
Դառտերի սուրճանդակը	145
Փռատենի	146
Յերկիր	148
Առավոտ	150
Ես դարունքվա պես	151
Նավահանգստում	154
Մորս նամակը	157
Պատասխան	160
Խաչվող թևեր	162
Փրկությունը	164
Շատ յերգեր	165
Կապված եմ իմ յերկրին	166
Ոֆրիկին	167
Սեր	168
Հեղեղ են ուժերը	169
Վողեկոչում	170
Յերկաթե դնդեր	171
Ծաղիկներ, ծաղիկներ	172
Գովք	173
Կարմիր մարտիկի որագրից	174
Արեն եմ յես սիրում	175
Հատված	176
Հատված	177

	Եջ
Շուր սարի բալլադը	178
Գրտինք և արյուն	179
Յերգերի մասին	180
Յես չգիտեմ	181

Տ Ա Ր Վ Ա Զ Ո Ր Ս Յ Ե Ղ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

Գարուն	185
Ամառ	187
Աշուն	189
Զմեռ	191

Բ Ա Լ Լ Ա Դ Ն Ե Ր Յ Ե Վ Պ Ո Ե Մ Ն Ե Ր

Յերկու մանուկ են նրանք	195
Բալլադ	198
Կարմիր ձիավորի մահը	201
Բալլադ մի ուսու դինվորի մասին	204
Բալլադ Բադվի և քսանվեցի մասին	207
Նրանց յերգը	210

Պ Ո Ե Մ Ն Ե Ր

Գյուղերի յերգը	215
Կես դիշերից մինչև առավոտ	246
Են տարին	271
Արնախեղդ վարդեր	279
Վերջին մայիսը	287
Աղաղակ	298

2p

Henry,

ՀՀ Ազգային գրադարան



NL0347026

41620